


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



# ԱՆԱՏԻՏ

ՀԱՆ ԴԵՍ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ 1911. ՅՈՒՆԻՍՐ.—ՓԵՏՐՈՒՍՐ ԹԻԻ 1-2

Փ Ա Ր Ի Զ

**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ**

Հայ հարսարապետութեան օրհանգրվանները . . . . .	Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ	52
Արեւելի պատկերներ — Բամազանի գիւղեր . . . . .	ՉԻՖՅԷ-ՍԱՐԱՅ	1
Անտոնիոս եւ Կեոպատրոս . Ե. Արարուած վերջ — (ՇԷՅՔՍՓԻՐ) ԹՐԳՄ. Գ. ՓԱՌՆԱԿ		25
Շիրվանզադէի յոբելանք . . . . .		27
Տիգրան խան Քելեկեան եւ արեւելեան արուեստը Եւրոպայի մէջ . . . . .		37
Հանգանակութիւն Արովեանի յուշարձանին ի նպաստ . . . . .		37
Հրաբխի աղբիւրը . — քանաստեղծութիւն . . . . .	ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ	42
Շահ-Մուրաթեանի սկզբնաւորութիւնը Փարիզի Օփերային մէջ . . . . .		43
ՀԱՅ ԷՉԵՐ — Տաղ սիրոյ . . . . .	ՅՈՎ. ԹՈՒԼԿՈՒՐԱՆՏԻ	44
Քրոնիկ . . . . .	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ	46

**Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր**

Յասակագիծ Տիկորի սաճարիկ . . . . .	8
Յասակագիծ Չուարքնոց եկեղեցիի . . . . .	11
Չուարքնոց եկեղեցիի ներսի խոյակներ . . . . .	14
Անիի Ս. Գրիգոր եկեղեցին, Չուարքնոցի նմանութեամբ, Գագիկ Ա.ի շինածը . . . . .	17
Հոռոմոսի վանքի գաւիթի առաստաղներէն մէկը . . . . .	11
Գրիգոր եպիսկոպոս Տոսկոնոյի իւստիստի իւստիստի Սանահինի մէջ . . . . .	22
Բուրդ իշխանի եւ Խորիշանի իւստիստի Սանահինի վանքին մէջ . . . . .	23
Պարսկական պեշակ, Սուրբանապատի մէջ գտնուած . . . . .	38
Դամասկոսի պեշակ . . . . .	39
Պարսկական շիշ, Դավրիժի մէջ գտնուած . . . . .	41

Տեղի պակասը մեզ կը ստիպէ մեր յաջորդ թիւին թողուլ Գեղամ Արծրունիի շահեկան թատերադրութեան վերջին արարուածին հրատարակումը :

Մեր յաջորդ թիւով պիտի հրատարակենք Բարգէն եպիսկոպոս Կիւլէսէրեանի բանասիրական կարեւոր մէկ ուսումնասիրութիւնը :

**ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Ա Ն Ա Հ Ի Տ Ի**

**Տ Ա Ս Ն Ե Ր Կ ՈՒ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Շ Ր Ձ Ա Ն Ի**

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԵԻԿ վճարել :

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՅՈՒՆՈՒԱՐ—ՓԵՏՐՈՒԱՐ

ԹԻՒ 1-2

## ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ա.

**Ե**թէ Հայը ասկէց մէկ երկու դար առաջ ունենար այն աշխարհափայտացքները հանդէպ իր լեզուի եւ գրականութեան զոր ունի այսօր, վաղուց արդէն լեզուն ալ առասպելի կարգ կ'անցնէր ինչպէս անցեր են իր գրականութիւնն ու արուեստները: Բարբաղդաբար հին Հայոց համար եթէ կար բան մը որ ամենէն աւելի թանկ էր, այն ալ իր հաւատքն էր, որուն հետ անբաժան կապուած էր լեզուն: Հարստութիւն, կեանք ու հայրենիք, ամէն բան զոհեց միմիայն հաւատքը պահելու համար:

Առանց հայերէն լեզուի չէր կարող պահել հաւատքը, որովհետեւ դարաւոր աւանդութիւններով համոզուած էր որ ամենէն առաջ իր լեզուն էր սրբագործուած դրախտին մէջ: Աստուած դրախտը Հայաստանի մէջ ստեղծեր էր, Ազամի հետ հայերէն էր խօսեր, հայերէն միայն կը հասկնար. հետեւաբար ան չէր կարող ուրիշ լեզուով աղօթել, իր սուրբ հաւատին միակ լեզուն հայերէնն էր: Ուստի ուր որ ալ գնաց, ամէն բան իր երկրին մէջ թողուց, իրեն հետ տարաւ հաւատքը եւ հաւատքով սրբագործուած մայրենի լեզուն:

Եթէ հաւատքով պահուեցաւ լեզուն, չէր կարող պահուիլ արուեստ եւ գիտութիւն. այս վերջինին համար հարկաւոր էր հայրենիք եւ հարստութիւն, ուստի կամայ թէ ակամայ կործաներ է հայ ճարտարապետութեան եւ գեղարուեստի զմայլելի շէնքը որուն համար տասնակ դարեր սանջուեր էր Հայուն միաքնն ու հանձարը նախանձելի բարձրութեան հասցընելու համար. կործաներ է այն օրէն երբ գաղ-

թականութեամբ քանդուեցաւ Հայուն օճախը եւ ամայացաւ հայրենի երկիրը:

Բայց բարբաղդաբար Հայն իր ետեւը թողեր է կանգուն ու կիսականգուն անթիւ կոթողներ որոնք մեր սպասածէն շատ աւելի մեծ ճշմարտութիւններ կը պատմեն զիրենք կանգնող ժողովրդի բնաաւեր տաղանդին եւ շնորհալի ձիրքերու մասին:

Բանի զիս բաւարար չափով չկան գիտական ուսումնասիրութիւններ հայ ճարտարապետութեան մասին եւ առանց այցելութեան կը մնան բաղամթիւ գեղարուեստական յիշատակարաններ, հայրենիքէն եւ հայրենի յիշատակարաններէ հեռու մնացողներու մտքին մէջ միշտ պիտի մնայ համոզումը թէ « Հայերը ինքնուրոյն գեղարուեստ կամ ճարտարապետութիւն չեն ունեցեր »:

Այս համոզման ոչ նուազ ոյժ տուեր են եւրոպական կարգ մը գրականութիւններ, որոնք աննպաստ եզրակացութիւններ ունին հայ ճարտարապետութեան եւ գեղարուեստի մասին: Սակայն պէտք է միանգամ համոզուիլ որ նորագոյն հետազոտութիւններ եւ ուսումնասիրութիւններ վաղուց ստուեր ձգեցին այդ հինցած ու մաշուած գրականութեանց վրայ, որոնք մեծ մասամբ հիւսուած ներբողներ են անմանօթ արուեստի մը շուրջը կամ առ առաւելին կցկատուր, մակերեւութային հակասական դատողութիւններ: Լուրջ քննութեան եւ քննադատութեան կարօտ է հայ ճարտարապետութիւնը եւ ատոր համար ալ հարկաւոր է ձեռննաս մասնագէտներու կողմանէ անձնուրաց գործունէութիւն:

Հայ ճարտարապետութիւնը այնպիսի բազ-

մակողմանի զարգացում ունի, որ անոր առջև զարմանալի չէ որ առաջին ապաւորութեան մէջ չփոխուած զիրար հակասեր են քննող արուեստագէտներ: Բայց մենք նոյն իսկ այդ հակասութեաներուն մէջ պէտք էր տեսնէինք մեծ ճշմարտութիւն մը, թէ՛ հայ ճարտարապետութիւնը այնքան անսովոր եւ նորօրինակ էր եւրոպացի մասնագէտներու համար որոնք մէկ անգամէն չեն կարողացած բմբռնել անոր իսկական յատկութիւնը:

Ինչ մը աւելի յատաջ գնալով պիտի ըսեմ որ, մեր երկնային պատգամի պէս հաւատացած եւրոպացի հեղինակներ, իրենց մակիրութեային հետազոտութիւններէն զատ ոչ նուազ անբարեխղճութիւններ ունեցած են ամէն բան իրականին համապատասխան ներկայացնելուն մէջ. ոչ անդադրական եւ ոչ ալ չափազանց ճշգրտութեաններ կը տեսնենք անոնց աշխատութեանց մէջ. կարելի է հաւատալ անոնց մի միայն լուսանկարի գործիքով առնուած պատկերներուն: Նոյն իսկ այնպիսի նկարներ կան հին ուսումնասիրութեանց հասարակութեան մէջ որոնք բոլորովին երեւակայական են:

Մէկ կողմանէ քանակով չնչին՝ միւս կողմանէ անհարազատ հաւաքածոներու եւ սեղեկութիւններու վրայ, բնական էր որ Հայաստանը չիտանող գիտնականին զատողութիւնները ծուռ եղրակացութիւններ պիտի յատաջ բերէին եւ մենք ալ արհամարհանքով պիտի նայէինք գէպի մեր մեծ անցեալը:

Արդ ով որ չուզեր ինքնուրոյն հայ ճարտարապետութեան մը գոյութեան հաւատալ, թող աւելի հաստատ փաստեր գտնէ առանց հիմնուելու եւրոպական հինցած սխալ ու շփոթ գրականութեան վրայ:

Նախկին քննողներէն ոմոնք, որոնք թրւով շատ քիչ են, ունեցեր են իրենց գործին մէջ հատուկատու ուղիղ անդեկութիւններ եւ գատողութիւններ, որոնց մէկն է Տիւպուս (1): Ասոր աշխատութեան մէջ ուշադրութեան արժանի են Գաւնիի մէջ Տրպատի Թախթ կամ Խոսրովի դուխտի հովանոց ըսուած շէնքին վերակազմութիւնը եւ Էջմիածնի կաթողիկէին հին ձևին վրայ ունեցած անտութիւնը:

Այս գիտնականի այցելութիւնը, մասնաւորապէս բարեբաղդութիւն եղած է Գաւնիի Տրպատի Թախթին համար, որովհետեւ քանի զի աւերակին մէջէն բնակարաններ բոլորովին չէին անհետացած, յաջողեր է որոշ չափով կողմնել եւ ներկայացնել անոր նախնական կանգուն վիճակը՝ որուն համար մեր պատմահայր Խորենացին սքանչացմամբ կը պատմէ (2): Բայց այս, ընդհանրապէս հայ ճարտարապե-

տութեան մասին այս գիտնականի անտութիւնները աւելի անկեղծ եւ զրական են քան իրմէ ետքը եկողներունը:

Թէքսիէ (1), անդադրական եւ ժամանակագրական հակասութիւններէ զատ, ունի նաև պատկերներու անհերքելի սխալներ, սակայն այդ սխալներուն մէջ ան աուեր է ճշմարտութիւն մը որ մեծ նշանակութիւն ունի պատմական հայ ճարտարապետութեան համար:

Մինչև Թէքսիէի Տիկորի եկեղեցիին պատահաւ աղեղները առնուելը, բնդհանուր կարծիք էր գիտական աշխարհի մէջ թէ պայտածեալ աղեղները արարական ոճին կը պատկանին եւ արարական ստեղծագործութիւն են: Թէքսիէ շատ արդարացի կերպով յեղաշրջեց այդ կարծիքը բացատրելով որ 10րդ դարուն մէջ ծագող արարական կարծուած աղեղներու նախապիպը Հայաստանի մէջ գոյութիւն ունեցեր է զիւ Տրպ գարուն, հետեւաբար Հայերն են տուեր այդ ոճը Արաբներուն:

Նորագոյն գիտնականներէն Ա. Շուազի միակն է որ իրոտ լուրջ կերպով քննած է հայ ճարտարապետութիւնը: Ոչ միայն աշխատեր է անոր ծագումն ու ծրարումը գտնել, այլ եւ քաղ տա քաղ հետեւեր է հայաստեղծ ոճին կատարած արշաւանքներուն գէպի հիւսիս եւ հարաւ, արեւելք եւ արեւմուտք: Միայն ցաւայի է որ այս անդադրական գիտնականն ալ սխալ ժամանակագրութիւններու վրայ հիմնուած հայ ճարտարապետութեան զարգացումը համարեր է ոչ կանուխ քան 10-11րդ դար (2):

\* \*

Վերին աստիճան միամտութիւն կ'ըլլար հաւատալ թէ, երբ եւ իցէ աղգ մը կարող էր բոլորովին կղզիացած վիճակի մէջ ինքնուրոյն կերպով զարգանալ, գիտութիւն եւ արուեստներ մշակել առանց արտաքին փոխառութեաններու: Քողաքաղթութեան պատմութիւնը կը սորվեցընէ թէ ի սկզբանէ անտի գիտութիւն եւ արուեստներ անպաղար կը ճանապարհորդեն երկրագնտի ամէն կողմը վաճա-

րոյին Գաւնոյ, զոր որճաբար եւ կոխածոյ վիմոֆ, Երկաքաղաք եւ կապարով մածոցեալ, յորում շինեալ եւ տուն հովանոց, մահարձաբոֆ, սխանչիլի դրոուածով, բարձր քանակաւ, ի համար իւր իւրոյ Խոսրովի իրոյս եւ գրեալ ի նմա գլխաւակ նկարեացի գրով:

(1) Texier. — L'Arménie, La Perse et La Mésopotamie. Paris, 1840.

(2) A. Choisy. — Histoire de l'architecture, Tome II, Page 58-59:

Հայաստանը որ Պարսից եւ Յունաց մէջ մեծեցնական պատերազմներու դաւս մը կը ներկայացներ, արուեստ մը սեղծելու համար հարկաւոր եղած խաղաղութիւնը ցաւ ու

(1) Dubois de Monperreux. Voyage autour de Caucase, 1883.

(2) Մոզ. Խորենացիի — Տիկիս 1881. Գիրք Բ. Երես 266: Չաւուս ժամանակաւ կասարէ Տրպուս գլխուածս ար-

ախանութիւններու եւ գաղթականութիւններու միջոցաւ :

Յունական ճարտարապետութիւնը, որ կարելի է ըսել համաշխարհային ճարտարապետութեանց թագուհին էր, որուն անմիջական թեւարկութեան առկա կը գտնուի տակաւին այսօրուան եւրոպական ճարտարապետութիւնը, իր նախնական խմորը ստացած է եգիպտական եւ Ասորա-քաղցէական ճարտարապետութիւններէն : Սակայն այս պարագան մեզի բնաւ իրաւունք չի տար արձամարձանքով վերաբերուելու դէպի յունական մեծ արուեստը իր մէջ օտար փոխառութիւններ տնկնուուն համար : Ընդհակառակը աւելի մեծ յարգանքի կ'արժանանայ յայն փառլուրը որ դիպցեր է իր շուրջը զարդացող քաղաքակրթութիւններէն օգտուել, եւ իր նախնական փոխառութիւնները այնպիսի կատարելագործութեան հասցնել որուն վրայ անցեալը հիանալէն յետոյ զիստ ապագան ալ պիտի հիանայ միշտ :

Արդ եթէ յունականի նման արեւելքայի գարձած ճարտարապետութիւն մը առանց արտաքին օժանդակութեան չէ կազմակերպուել, ինչո՞ւ արձամարձանին Հայերը, որոնք չուզելով նեղ շրջանակի մէջ փակուած՝ ետ մնալ զիրենք չըջատուող զարգացած մեծ ազգերէն, զիմեր են իրենց երկրէն դուրս հեռու կամ մօտ գարգացող արուեստներու օրնութեան :

Այս պարագան անհամեմատ աւելի պատիւ կը բերէ իրենց, մանաւանդ երբ կը տեսնենք որ, առանց պարզ ընդօրինակողներ ըլլալու ձեւափոխեր եւ ձուլեր են սեփական ոճին մէջ այնպէս որ դժուար է զանազանել բնիկ եւ

օտար ոճերը մէկ նայուածքով, ուստի մեզ կը մնայ հայկական ճարտարապետութեան արժանաւոր տեղը ալ ընդհանուր ազգաց ճարտարապետութեան պատմութեան մէջ :

\* \*

Ըստ ամենայնի զեղարուեստական կատարելութեամբ կանոնուած բազմաթիւ յիշատակարաններ եւ վերջին տարիներու մէջ կատարուած բարեխիղճ հետազոտութեանց արձանագարեցաւ որ եզրակացութիւններ, լիովին կ'պայտուցանեն թէ հին Հայեր ինքնուրոյն ճարտարապետական արուեստի մը զարգացման մէջ ետ չեն մնացած ժամանակակից ազգերէ :

Բայց թէ որչափ հին է հայ ճարտարապետութեան ծագումը, այդ յայտնի չէ. ես պիտի ըսեմ որ այնչափ հին է որչափ ինքը հայ ազգը : Որովհետեւ անկարելի է որ տասնեակ դարեր առաջ ինքնուրոյն կազմակերպութիւն, անկախ զիրք, եւ միջազգային քաղաքակրթութեանց մէջ կարեւոր դեր ունեցող ազգ մը նաեւ չունենար իր սեփական ճաշակը, ապրելու պայմանները ու իր ցեղին եւ միջավայրին յատուկ վայելչասիրական եւ փառասիրական ձգտումները :

Գտնէ նախաքրիստոնէական շրջանի վերջին դարերու մասին հայ եւ օտար պատմագիրներու վկայութիւններ չեն պակսիր Հայերու փառասիրութեան եւ աշխարհաշինութեան մասին, որոնցմէ սմանք թէ եւ իբրեւ մեղադրանք արձանագրուած են զանազան նկատումներով, այնու ամենայնիւ ճշմարտութիւններ ըլլալուն կասկած չիկայ : Հայուն թշնամիներէն մէկը եթէ իր աշխարհագրական աննպաստ դիրքին էր որուն պատճառաւ իրարու վրայ արշաւող մեծ ազգերու ոտքին տակ կոխկրտուել է, միւս թշնամին ալ եղած է հարուստ, փառասէր ու փարթամ կեանքը որ, յաճախ գրացի բարձրաս ազգերու նախնին ու աւարի արտօրական է գրգռած եւ այս պատճառով ալ Հայաստանը անընդհատ արեւան ծովի մէջ է լողացած : Ուստի բնական է որ այսքան քաղաքական փոթորիկներու ենթակայ երկրի մը մէջ չպիտի պահուէին խոր հնութեան դրոշմը կրող յիշատակարաններ :

Հաւատալու շատ պատճառներ կան որ քրիստոնէութիւնն ալ ոչ նուազ աղիտարեր եղած է նախկին հեթանոսական յիշատակարաններուն, որովհետեւ քրիստոնէական ընկղզանական շրջանին մէջ հեթանոսական յիշատակարաններ եթէ բոլորովին չեն քանդուել, այնու ամենայնիւ անձանաչելի պահպանու չափ այլափոխուել են նորագոյն պահանջներու պաշտօնակալու համար :

Արարատեան նաճանգին մէջ բազմաթիւ են հեթանոսական հնութիւններու մնացորդներ, բայց զիստ չեն ուսումնասիրուած թէ ի՞նչ փամանակի կը պատկանին անոնք. շէնքերու եւ

ունեցաւ. Բագրատունիներու վրայ Քաղսասի խալիճաներու հովանորեքեան ճարտիւ սկսեց 11-դ դարուն : 12-դ դարու կէսին արդէն օրհնական վիճակի հասած էր (ժամանակագրական սխալ է այստեղ հեղինակին ցոյց տուած բուսակներ. մինչեւ 14-դ դար տեսեց հայ նահապետաւորիւնը մեծ փայլով. ճիշտ է որ 12-դ դարուն ինկաւ, սակայն 13-դ ի վերջը նոր վերածնութեամբ ծաղկեցաւ) այս կարճ օրանին մէջ նորոյնակ փոքր շինութիւններով ծածկուեցաւ երկիրը սակայն կասարեալ ճեղքութեամբ (ինչպէս այիսի տեսնենք յօդուածիս ընթացքին մէջ՝ ամենավերջին հայ նահապետաւորեան, չորրորդ վերածնութեան յիշատակարանները օփորած է երրորդ օրանի հետ այս բնութագրութիւններէն զատ, թէեւ հեղինակին ծանօթ են էջմիածնի, Տիկուրի եւ Օձունի եկեղեցիները ու գիտէ ամենց աւելի կանախ գոյուրիւնը, բայց հաւանականաբար ի՞նչ փոքր տակ ստաց տեղեկութիւններ չունենալուն համար՝ հիները բացառիկ երեսոյքներ համարելով հայ արուեստի ինքնուրոյն կազմակերպութեան սկիզբը 13-դ դարը համարած է) :

բերգերու մնացորդներէ զատ, հեթանոսական խորհրդաւոր քանդակներ եւ բուհոպրեր միշտ կարելի է տեսնել:

Ժամանակագրապէս ապացուցուած հեթանոսական հնութիւն է Գառնիի Տրդատայ Թախթ անուանուածը, որն սր ըստ երեւոյթին աւելի մեհեանի մը կը նմանի քան թախթի կամ հովանոցի: Եթէ ճիշտ այդ շէնքն է որ Մովսէս Խորենացին կը վերագրէ Տրդատի, պէտք է որ շինուած ըլլայ Յրդ դարուն մէջ երբ դեռ Տրդատ չէր ընդունած քրիստոնէութիւնը:

Քրիստոնէական շինութիւններու մէջ առ այժմ ամենահինը ընդունուած են Էջմիածնի կաթողիկէն, Տիկորի եւ ուրիշ շէն ու կիսուներ տաճարներ որոնք կանգնուած են Տրդ գարուն:

Ինչ որ հասեր են մեզի Յրդ դարէն մինչեւ Տրդ դարու յիշատակարաններէն, ճարտարապետական եւ շինարարական տեսակէտով այնպիսի կատարելագործուած վիճակ մը ունին, որ արուեստի երկար դարեր անընդհատ մշակումովը միայն կարող էին այդ աստիճանին հասնիլ:

Ինչպէս ամէն ազգ, նոյնպէս ալ Հայեր իրենց գեղարուեստական տեսչերուն գոհացում տալու համար երբէք չեն վարաներ օտարներէ գեղեցիկ նմոյշներ փոխ առնել եւ պատուաստել իրենց սեփական ոճին վրայ, նաեւ երբեմն չբաւականանալով մօտակայ գեղարուեստական երկիրներու ոճերով, նորութիւն եւ գեղեցկութիւն փնտելու համար հասեր են մինչեւ հնդկական եւ արիւրիկեան թիրակղզիները:

Թէ ի՞նչ օտար ազգեցութիւններ կան հայ ճարտարապետութեան մէջ եւ ի՞նչ չափերով, այդ մասին խօսելէ առաջ, հարկ է փոքրիկ ծանօթութիւն մը ընդհանուր ճարտարապետական արուեստի քանի մը գլխաւոր ստորաբաժանումներուն վրայ:

Ճարտարապետական արուեստը իր ծագում առած օրէն հեթանոսներ է չորս գլխաւոր ստորաբաժանումներու:

1. Եփեսոսական ոճ, որուն մէջ գլխաւոր դեր ունեցած են միջավայրի կլիման, եւ շինուածանիւթերու յատուկ երկրի բնական արտադրութիւնները:

2. Գեղարուեստական կամ զարդարագեղարու ոճ, որոնք ամէն տեղ տարբեր ձեւով զարդացան, բնիկ փողովրդի մտաւոր զարգացման, միջավայրի ներշնչող յատկութեան եւ քանի մը շինուածանիւթերու նպաստաւոր ընդունակութեան համեմատ:

3. Կրօնական ոճ, որ յատուկ է ամեն տեսակ կրօններու անունով կանգնուած տաճարներու ներքին եւ արտաքին բաժանումներուն Այս ոճին գլխաւոր դիկավարները եղած են ծէսերը եւ կղերականներու քմահաճոյքը. ճարտարապետին բաժինը եղած է պահանջուած մասերու վրայ կրօնի պաշտօնէին յոյս տաւած

պարտաւորիչ յարամասունքներուն պատշաճ ներգաշնակութեամբ դատաւորումը:

4. Քաղաքային եւ սեփական ոճ. որոնք կը վերաբերին հանրային շինութիւններու, ընտանեկան բնակարաններու եւ ուրիշ զանազան տեսակ տնտեսական պէտքերու յատուկ ներքին բաժանումներուն. ասոնք ամէն երկրի մէջ տարբեր ձեւ եւ դասաւորութիւններ ստացան տեղական առանձնայատուկ պահանջներու եւ սովորութիւններու համաձայն:

Ասոնցմէ դուրս թերեւս առանձին ճիւղ մը համարուի ղերուորական ոճը որ յատուկ է բերդեր եւ մարտիոցներ կանգնելու: Հայոց մէջ շատ հետաքրքրական կողմեր ունի այս ոճը, բայց ոչ մէկ մասնագէտ մինչեւ այսօր չէ շահագրգռուած անոնց ուսումնասիրութիւնով:

Ահա այս ստորաբաժանումներն են որ երբեմն հաւաքաբար կրբեմն ալ անոնցմէ մէկը կամ երկուսը փոխանցուեր են մօտ կամ հեռու ճարտարապետական արուեստներուն:

Այժմ համառօտակի քննենք թէ ի՞նչ տարիճան ինքնուրոյնութեամբ մշակեր են Հայերը ճարտարապետական արուեստը եւ ի՞նչ չափերով օգտուեր են այս կամ այն ազգի ստորաբաժանումներէն:

Առանձին ուշադրութեան արժանի է նաեւ հայ ճարտարապետութեան ուրիշ ազգերու վրայ ունեցած ներգործութիւնները, որոնք որոշ դարերու մէջ աւելի մեծ տեղ կը բռնեն քան փոխառութիւնները:

Եփեսոսական ճիւղին վրայ իւրեւ զուտ գիտական նիւթ աւելորդ կը սեպեմ այստեղ խօսիլ:

Քաղաքային եւ տնտեսական ճիւղերու մասին ալ մեր նիւթերը առատ չեն, քանի դեռ ընդարձակ չափերով պեղումներ չեն եղած, հետեւաբար պիտի ջանամ եղածը միայն սրտակիրացնել:

Իսկ կրօնական եւ գեղարուեստական ճիւղերու վրայ կարելի է ըստ բաւականին ճօն նիւթեր առ քաղելով կանգուն ու կիսականգուն յիշատակարաններէ եւ վերջին տարիներու մասնաւոր պեղումներէ, որոնք կը յուսամ թէ հաճելի ըլլան պատմական հայ գեղարուեստով հետաքրքրուողներու համար:

Բ

ՀԱՅ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Որովհետեւ հեթանոս Հայերու մեհեանական ոճերուն վրայ տակաւին դրական ոչինչ չգիտենք, այդ պատճառով ալ մեր տեսութեան նիւթը պիտի կազմէ այս մասին մէջ հայ եկեղեցական ոճը:

Մինչեւ 4րդ դար ոչ մէկ քրիստոնէայ հասարակութեան մէջ եկեղեցիներու համար մըշակուած որոշ ձեւ չկար. ընդհանուր կարծիքը այն է թէ առ հասարակ տուներու մէջ գանձուած մեծ սրահներ բաւականութիւն կուտային

քրիստոնէից այն ժամանակուան պարզ ու համառօտ ծիսակատարութիւններու, ուր բոլորովին կամայական կերպով կը զեանդուէր ընթրիքի սեղանը եւ հաւատացեալներ սրահի պատշաճութեան համաձայն գիրք կը բռնէին:

Չորրորդ դարէն առաջ այս անորոշութեան գլխաւոր պատճառներէն մէկն էր քրիստոնէութեան գէմ եղած գրեթէ մշտնջենական հայածանքը, միւս կողմանէ նոյն իսկ քրիստոնէական վարդապետութիւնը որ մեղք կը համարէր երկնային աննիւթ աստուածութեան մը անուսով՝ որ խոնարհարար յանձն առած էր մասըին մէջ ծնիւ, նիւթական փուճ փառքերով զարդարուած տաճարներ շինելը: Մարդոց հոգին պէտք էր որ ըլլար Աստուծոյ տաճար: Մինչևէ իսկ ճշմարիտ քրիստոնեայ անհատին ալ ներելի էր աշխարհային անցաւոր փառքերու մէջ ապրիլ: Այս վարդապետութիւնը որ անընդհատ երեք դար իր քարոզիչը եւ հետեւողները ունեցաւ, սոսկալի անկում պատճառեց ճարտարապետութեան եւ գեղարուեստի, քրիստոնէութեան բազմացած երկիրներու մէջ: Նախ քան 4րդ դար հազիւ կը յիշատակուին քանի մը մասնաւորապէս կանգնուած եկեղեցիներու անուններ, որոնք այնչափ ողորմելի եւ անշուք կազմած ունէին որ մինչև 5րդ դար հետքերնին անգամ մնացած չէ:

Կոստանդիանոս կայսրը, քրիստոնէութիւնը պետական կրօն յայտարարելէն քիչ յետոյ, փորձեց մինչևէ այն աստի պառակտուած եւ բաժանուած քրիստոնեայ հասարակութիւնները մէկ դրօշակի տակ հաւաքել, դաւանանքի եւ ծիսակատարութեանց միօրինակութիւն յտաջ բերել, որուն հետեւանքը պիտի ըլլար նաեւ եկեղեցիներու ձևերու մէջ ալ միօրինակութիւն:

Ի՞նչ եղաւ Կոստանդիանոսի ջանքերուն հետեւանքը, այդ իմ գործս չէ քննել, միայն յայտնի է որ բոլոր քրիստոնեաները օգտուելով նորագոյն ազատութենէն, սկսան անթիւ եկեղեցիներ կանգնել կայսրութեան ամէն կողմը. պետութիւնն ալ մեծապէս կ'աջակցէր ժողովրդին այս աշխատութեան. կը պատմութիւնը աւելի քան ութ հարիւր ճարտարապետներ զբաղած էին կայսրութեան ամէն կողմը եկեղեցիներ կանգնելու... եւ 337 թուականէն մինչև 527 թուականը տասնհուսու թ հազար եկեղեցիներ կանգնուած էին:

Կոստանդիանոս տեսնելով բազմամիլիոն քրիստոնէից եկեղեցիներու համար ունեցած անմիջական կարիքը, եւ բաւարար չափով կարճ ժամանակի մէջ նորերը կառուցանելու դժուարութիւնները, հրամայեց հեթանոսական մեհանները եւ Basilique ըսուած շինութիւնները քրիստոնէից տրամադրութեան տակ դնել նոր կրօնի անունով սրբազործուելու համար:

Յուշական մեհանները առ հասարակ երկար

քառակուսի սրահներ էին, երբեմն արտաքուստ շրջապատուած սիւնազարդ ծածկով, ներքը երկայնութեան մէկ ծայրին վրայ (սովորաբար արեւմտեան կողմը) կը գտնուէր հեթանոս աստուծոյն գահը: Կային նաեւ բոլորովին բոլորակ ձևով մեհաններ՝ որոնք եւս ուշ կամ կանուխ նուիրուեցան քրիստոնէական պաշտաման:

Basiliqueները նմանապէս երկար քառակուսի շինութիւններ էին, ներսի կողմը յաճախ երկու կամ աւելի սիւնաշարքերով թեւերու (nef) բաժնուած զէպի երկայնութեանը: Այս շէնքերը կը ծառայէին հասարակաց ժողովներու. երկայնութեան մէկ ծայրին վրայ՝ ունէին շէնքէն դուրս ցցուած կիսաբոլորակ absideներ, որոնք յատուկ էին կամ թաղաւորին եւ կամ անոր փոխանորդող ժողովի նախագահին:

Այս քանի մը տեսակ շինութիւնները մէկ անգամէն ընդունուեցան ծիսակատարութեանց ձևերու մասին եղած նախնական տարբեր առաջարկներու պատճառաւ. մրցումը երկար տևեց, սակայն հետզհետէ ամէն տեսակ ձևերն ալ ընդունուեցան. միայն Basiliqueի կիսաբոլորակ absideը վերջնական յաղթանակ տարաւ ամէն ձևի եկեղեցիներու արեւելեան կողմին վրայ, հաւանականաբար 5րդ դարու սկիզբին:

Եկեղեցիի մէջ պատարագի սեղանի պատշաճ տեղի մասին տարբեր ուղղութիւններու վէճերը մինչևէ 7րդ տեսցին: Անոնք որ շէնքին արեւելեան կողմին վրայ սեղանը յարմար կը տեսնէին՝ մէկ անգամէն ընդունեցան պաղիլիներու ձևը գրեթէ առանց կարեւոր փոփոխութիւններու. իսկ որոնք որ կեդրոնական սեղանի ուղղութեան կուսակիցներ էին, անոնց համար աւելի պատշաճ էին մեհանները մասնաւոր բոլորակ ձևով եղածները: Կեդրոնական եւ արեւելեան կողմի սեղաններու մրցումին ժամանակ աւելցաւ նաեւ խաչաձև յատակագիծը որուն մէջ կը պատշաճէր սեղանի երկու ուղղութիւնն ալ:

Բուն պաղիլիք ձևը իր բոլոր համաչափութիւններով մշակուեցաւ արեւմտեան քրիստոնէից մէջ եւ նոյն ձևով ալ կը շարունակուի մինչև այսօր:

Արեւելքի մէջ ապսիսը միայն ընդունուելով, մնացած մասերուն մէջ տարբեր համաչափութիւններ երևան եկան, որոնք շատ հետու են պաղիլիքներու յատկութենէն. անշուշտ ենթարկուեցան ուրիշ տեսակ մը հանրային շինութեանց ձևերուն, որոնք տարածուած էին արեւելեան պետութեան երկիրներուն մէջ: Վեցերորդ դարու սկիզբին Կ. Պոլսոյ մէջ կանգնուած Ս. Սօփիա եկեղեցին գրեթէ հաւասարակողմ քառակուսի ձևով դժուար է համեմատել պաղիլիքներու հետ՝ բայց կիսաբոլորակ ապսիտէն:

Այժմ դառնանք Հայոց եկեղեցիներուն

որ մեր գլխաւոր նպատակն է, ուր պիտի տեսնենք այս տեսութիւնները աւելի լուսաբանող իրողութիւններ :

\*\*\*

Բովանդակ Հայաստանի մէջ նախ քան Ծրդ դար կանգնուած ըլլալը փաստացի հաստատուած եկեղեցի չունինք, ամենահին համարուածը էջմիածնի կաթողիկէն է, Վահան Մամիկոնեանի ձեռքով վերաշինուած Ծրդ դարու կէսէն յետոյ (180ին) :

Ընդհանրապէս ընդունուած կարծիք է թէ Վահան Մամիկոնեան որչափ որ ի հիմանք քանդեց եւ վերաշինեց էջմիածնի կաթողիկէն, սակայն Տրդատի եւ Լուսաւորչի օրով շինուած սաճարին չափն ու ձեւը անփոփոխ պահեց :

Քանի մը պատճառներով այս կարծիքը հաստատութիւն չի գտներ, որովհետեւ ապացոյցներ չեն պակաս որ Վահան Մամիկոնեան նախնական ձեւը փոխելու մէջ խղճանքովու պատճառ մը չունենալէն զատ, նոյն իսկ իր շինած ձեւն ալ պահուած չէ յիստորիկ ժամանակներու մէջ : Իբրեւ Մայր-Աթոռ շատ ուշ ժամանակ ստացաւ այն նշանակութիւնը ինչ որ մենք կը վերագրենք անոր, Վահան Մամիկոնեանի ժամանակ կաթողիկոսական արժողարդէն վաղուց Դուին փոխադրուած է. եւ նա ոչ թէ իբրեւ Մայր-Աթոռ ալ իբրեւ « զհնացեալ գործ նախնեաց իւրոց (\*) » հոգ տարուած վերաշինելու :

Աւելի արուեստագիտական ապացոյցներու վրայ պիտի հիմնեմ իմ կարծիքս քան պատմական, թողնելով այս վերջինը իբրեւ երկրորդական նշանակութիւն ունեցող փաստ :

Վահան Մամիկոնեանի շինած էջմիածինը կիսաբոլորակ վերջաւորուած թեւերով խաչաձեւ յատակագիծ ունենալուն վրայ պատմական փաստ չունենալնէս զատ եթէ եկեղեցական ճարտարապետութեան ուղիղ ճանապարհով քննենք, աւելի շատ հերքող փաստեր կը գտնենք :

Լուսաւորչի շինած եկեղեցիին խաչաձեւ յատակագիծ ունենալուն վրայ պատմական փաստ չունենալնէս զատ եթէ եկեղեցական ճարտարապետութեան ուղիղ ճանապարհով քննենք, աւելի շատ հերքող փաստեր կը գտնենք :

Ոմանք էջմիածնի այսօրուան ձեւը Լուսաւորչի վերագրուած տեսիլքէն հանուած կը համարին (1), բայց այդ տեսիլքի նկարագրու-

(\*) Մամիկոնեաներ ինքզինքն Պառլամենի ցեղ կը համարէին իբրեւ Լուսաւորչի սերունդ :

(1) Ազգաբնագրոյ Տիպիս 1909, էրես 381—387 :

Թիւնը թերեւս համեմատի այսօրուան ներքին կողմէն չորս մեծ սիւներով գմբէթաւորեալ ձեւին, սակայն ընդհանուր յատակագիծը խաչաձեւ. ենթադրել աալու ոչ մէկ հիմ չունի : Այս օրուան ձեւը, հիմնուելով գիտական հետազոտութիւններու վրայ, ոչ մէկ քրիստոնեայ երկիրներու մէջ չէր կարող գոյութիւն ունենալ Ծրդ դարէն առաջ :

Ի հարկէ ցանկալի էր որ հաստատուէր թէ Լուսաւորչին է հղած խաչաձեւ եկեղեցիներու առաջին հեղինակը եւ հայկական խաչաձեւ ոճը իբրեւ աղբիւր ծառայեր է բոլոր քրիստոնեայ ազգաց խաչաձեւ եկեղեցիներուն Բայց սա արդէն անհիմն ենթադրութիւն մ'է :

Միայն պէտք է նկատի ունենալ պարագայ մը սպազայ ուսումնասիրութեան համար, որ ըստ իս վերջնական լուծման կարօտ է, եւ թերեւս լուծուի ինպատաս հայ ճարտարապետութեան :

Ամենեւին կասկած չիկայ որ Վահան Մամիկոնեանի շինած խաչաձեւը բոլորովին նորութիւն էր Հայաստանի մէջ եւ թերեւս առաջին օրինակը, սակայն այդ նորութիւնը հեղինակութիւն էր թէ ընդօրինակութիւն ուրիշ ազգաց ճարտարապետութեան : Սա արդէն վիճելի է :

Ճիշտ է որ կրդ դարուն Կոստանդիանոսի ձեռքով շինուած խաչաձեւ եկեղեցի մը կը յիշատակուի Կ Պոլսոյ մէջ, թէեւ այդ եկեղեցին Յուստինիանոս օրով մեծ փոփոխութեանց ենթարկուած է ու անկից յիսոյ գոյութիւնն ալ երկար պահած չէ. սակայն այսօրուան վիւնեաթիի Ս Մարկոսը նոյն խաչաձեւի ճիշտ ընդօրինակութիւնը կը համարուի : Եթէ իրօք Ս Մարկոսի եկեղեցիին ձեւը ունէր Կոստանդիանոսի շինած եւ յիսոյ Յուստինիանոսի նորոգած Կ Պոլսոյ առաքելոց եկեղեցին, այն ատեն պէտք է զիտնալ որ Վահան Մամիկոնեանի շինած խաչաձեւը, ճաշակով եւ գաղափարով անհունապէս կը զանազանի Կ Պոլսոյ առաքելոց եկեղեցիէն : Վահան Մամիկոնեանի ձեւը մինչեւ Ծրդ դար ոչ մէկ երկրի մէջ գոյութիւնը հաստատուած չըլլալէն զատ անոր Ծրդ դարուն մէջ փոփոխութեամբ ստացած ձեւն ալ շատ հազուադէպ է արեւմտեան եւ հարաւային քրիստոնեայ երկիրներու մէջ : Գալով Լուսաւորչի ժամանակ հիմնուած սաճարին, այնտեղ ոչ պազիլի կարող էր շինուիլ, ոչ absideներ, եւ ոչ ալ խորան ու գմբէթ : Ահա թէ ինչո՞ւ :

Պատմական իրողութիւններու հետեւելով կը տեսնենք որ արդէն քրիստոնէութիւնը ընդարձակ ծաւայ ստացած էր Հայաստանի մէջ, եւ հալածանքի թեթեւութեան պատճառաւ աւելի ամուր հիմ բռնելով կազմուած էին եկեղեցիներ եւ եկեղեցական վարչութիւններ :

Բայց ինչ որ ալ ըլլար քրիստոնեայ Հայոց եկեղեցիներուն ձեւը Տրդատի քրիստոնէութիւն ընդունելէն առաջ, յայտնի բան է

Թէ 300—303 Թուականներուն, զինու զօրութեամբ ճնշուեցան հեթանոս Հայերը եւ անոնց ձեռքէն մեհնանները աւնուելով կկեղեցիներու վերածուեցան՝ (1) զեւ Էջմիածինը հիմնարկուելէն շատ առաջ։ Ուրիմն Էջմիածինի հիմնարկութենէն գոնէ մէկ երկու տարի առաջ մեհնական ձեւը սրբազործուեցաւ Հայոց քրիստոնէական կեղեցիներու համար։ Հետեւաբար մեհնաները սրբազործող Լուսաւորիչը պատճառ չունէր իր հիմնարկած տաճարին համար տարբեր ձեւ ստեղծելու։ Եւ ի՞նչ ձեւ կարող էր ստեղծել։ Կենք կարող ըսել պազլիիք, որովհետեւ այդ տեսակ շէնք Հայաստանի մէջ գոյութիւն չունէր եւ Հայերը գաղափար իսկ չէին կարող ունենալ անոր ձեւին վրայ։

Առ նուազն 15-20 տարի անցեր էր Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուելէն յետոյ երբ կոտորանքիտանոս եւս հետեւեցաւ Տրքասի օրինակին, եւ հեղձկտէքքիտանէից արամադրութեան տակ զբաւ հեթանոսական մեհնանները եւ պազլիիք ըսուած շինութիւնները՝ կկեղեցիներու փոխարկելու համար։ Մինչեւ այդ ժամանակ ոչ մէկ կասկած չէ կարող ըլլալ որ Հայերը արդէն ունէին օրինաւորապէս կազմակերպուած կկեղեցիի համար ալ որոշ ձեւ։

Նաեւ կթէ ի նկատի ունենանք որ արեւմուտքի մէջ ալ շատ զիւրութեամբ չընդհանրացաւ պազլիիք ձեւը, այն տոեւն բնակահօրէն պիտի հետեւցընենք որ անոր ներգործութիւնը մինչեւ Հայաստան հասնելու համար շատ տարիներ հարկաւոր էին։

Արեւելեան կողմին վրայ սեղանը դրուելու ուղղութեան հետեւողներուն համար էր որ պազլիիքի կիսաբոլորակը շատ յարմար էր։ Բայց այս ուղղութեան վերջնական յաղթանակը Փոքր-Ասիոյ սամաններուն մէջ տարած չըլլալուն մեծ պայցոյց է Գր. Նազիբնազադի իր հայրենի երկրին մէջ 4րդ դարու կէսէն յետոյ շինել առւած կկեղեցիին, որուն մէջ պատարագի սեղանը շէնքին կկեղծուին վրայ էր։

Արեւմտեան կկեղեցիներու մէջ մինչեւ Բ. Տիեզերական ժողով՝ ծիսակատարութեանց վերաբերեալ խնդիրներ գրեթէ չէին յարուցուած,

մինչեւ այն ատեն զբաղած էին դաւանաբանական վէճերով։ Այս վէճերուն փոքր իշատէ խաղաղելէն յետոյ պէտք է փնտռել իւրաքանչիւր կկեղեցիներու ներքին բարեկարգութեանց եւ ծիսակատարութիւններու մասին մշակուած օրէնքները։ սեղանի կամ պատարագիլու ձ Գրի խնդիրը որ աւելի ծիսակատարութեան կը վերաբերի քան դաւանութեան, հետեւաբար այս հաշուով մինչեւ անոր փոքր ի շատէ որոշ եւ միօրինակ ձեւ ստանալը արդէն Տրդ դարուն կը մտնեցընէ մեզ։

Ուրիմն ապահովապէս կարող ենք ըսել որ, մինչեւ սեղանի տեղի եւ կամ արեւելեան կիսաբոլորակ խորանի վէճեր ծագելը, եւ երկար տարիներ ձեւուելով ո եւ է որոշ լուծում ստանալը, արդէն Հայաստան ունէր այդ ծիսակատարութեանց համար ալ անկախ մշակուած ու հաստատուած օրէնքներ։ Եթէ արեւելեան կիսաբոլորակ ապսիսին Հայաստան հասնելը Տրդ դարու սկիզբին ալ համարինք, հազիւ թէ մէկ անգամէն Հայերը թողէին իրենց լուսաւորչաւանդ կկեղեցական ձեւը եւ յանձն առնէին օտար նորութիւն մը մայնել իրենց կկեղեցիին մէջ։ Անշուշտ երկար ժամանակ հարկաւոր էր ընդհանրանալու համար։

Ի հարկէ Վահան Մամիկոնեանի չորս ապսիսներով խաչաձեւ կկեղեցին չէր կարող մէկ անգամէն երեւան կկած ըլլալ նախքան իր պարզ նախատիպին ունենալը։ հաւանականաբար անկէց առաջ մտած էր արեւելեան ապսիսը Հայոց մէջ (բայց ոչ Տրդ դարէն առաջ) որուն հետեւեցաւ չորս ապսիսով խաչաձեւը՝ բացի գեղեցկութենէ ե վայելչութենէ նաեւ քրիստոնէական խորհրդանշանի մը նմանցուելու բացարձակ պատճառաւ։


Վ Այժմ հետաքրքրական է դիտնալ թէ ի՞նչ ձեւ ունէին Հայոց մեհնանները, որոնք Լուսաւորչի ժամանակ փոխարկուեցան կկեղեցիներու եւ լուսաւորչաշէն Էջմիածինն ալ նոյն ձեւով կանգնուած ըլլալը հաւանական կը համարինք։ Այս մասին հաստատ տեղեկութիւններ չիկան, սակայն պատմական հատուկոտոր տեղեկութիւններ եւ քանի մը հին յիշատակարաններու ու սուլմասիրութիւններ մեզ կը հասցնեն բաւական որոշ եզրակացութեան։

Նախ քան քրիստոնէութիւն հազիւ թէ Հայեր կրակապաշտ եղած ըլլային, բոլոր տեղեկութիւններ կը հաստատեն որ յունական գիցապաշտութեան մէկ տեսակն էր զարգացած Հայաստանի մէջ։ մանաւանդ հեթանոս կրօնի վերջին թաղաւոր Տրդատը, ոչ միայն յունական գիցապաշտութեան ջերմ՝ հետեւող էր (1) այլ եւ կը

(1) Փաւստոս Բիւզանդացւոյ Պատմ. Հայոց, Ա. Պետերբուրգ, 1883, զլ. Գ. Երես 7: « Իանգի այսպէս իսկ սովոր էին եպիսկոպոսն հայոց, հանդերձ քաղաւորօքն եւ մեծամեծօքն, նախարարօքն եւ աշխարհախումբ քաղմութեան պատուել զնոյն տեղիս որ յառաջ էին տեղիք պատկերացն կոնց եւ ապա յանուն աստուածութեան սրբեցան եւ եղեն տուն աղօթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք »:

Ազարանգեղոս - Տիխիս . 1909, Երես 400—412: « Առնոյր այնուհետեւ խորհուրդ հաւանութեան ընդ քաղաւորին եւ ընդ իշխանն, նախարարօքն եւ զօրօքն հանդերձ՝ վասն խաղաղութեան հասարակաց, քակել կործանել, բառնալ զգայքակողութեան ի միջոյ ի բաց կորուսանել « ... »:

(1) Ազարանգեղոս . Տիխիս 1909, Երես 31 : Եթէ ոչ առնուցուս լանձն դիցս պատուս մասուցանել, մանաւանդ այսմ մեծի Անահայտի սիկնոցս որ փառք է ազգիս մերոյ եւ կեցուցիչ, զոր եւ քաղաւոր ամենայն պատուել, մանաւանդ քաղաւորն Յունաց ....:



Յասակագիծ Տիկորի սահարին (կանգնուած Ե. դարուն)

ցանկար որ ամէն կարգ կանոն, ծէս ու պաշտամունք այնպէս կատարուէր իր երկրին մէջ որպիսին ինք տեսած էր Յունաց աշխարհին մէջ(1):

Անտարակոյս յունական կրօն ունեցող ազգին մեհեաններն ալ յունական մեհեաններու որոշ նմանութիւնը պիտի ունենային եւ կամ՝ ինչպէս սովորաբար կը պատահի երկու ուժեղ տարբեր հոսանքներու ենթարկուած ազգերու, թերեւս խառն սասանական ազգեցութիւնով:

Այս ենթադրութիւնը մեծապէս կ'արգարանայ Տրդ եւ Յրդ դարերէն մեզ հասած յիշատա-

կարաններու մանրագնին քննութեամբ, որոնք կը գտնուին Արարատեան նահանգին մէջ, բայց բաւականի պահած իրենց նախնական վիճակը:

Այս հնագոյն յիշատակարաններէն մէկն է Տիկորի եկեղեցին, որուն յատկապէս կը գնեմ այստեղ իբրև նմուշ բազմաուժեան համար:

Արեւմտեան դրան վրայ եղած կցկտուր արձանագրութենէ մը կ'երեւայ որ, այս եկեղեցին շինած է Սահակ կամարական անունով իշխան մը Տրդ դարու վերջին: Սահայն արուեստագիտական քննութիւններ շատ պարզ ապա-

(1) Ազգաբնագրոս. Տիփլիս, 1909, երես 74: Ամենայն ոմ գիտացէ ի մերոյ հրամանացս առ ձեզ զի վասն ձեր շինութեան իմ հոգացեալ, զի յորժամ էաք մեք ի Յունաց աշխարհին՝ տեսնեալ անդ զհոգաբարձութիւն բազաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին, ի պատուել զբազինս դիցն աստուածոց շինուածով եւ սպանդիւր գոնիցն

եւ երեւելի պատարագացն ընծայիւր եւ գունակ գունակ նուիրոքն եւ ի պտոցն յամենայնէ զամենայն նոցա մասնացանելով, եւ ջերմաւորն իւրալ զեւալ պատասխանն շեղացուցանելով եւ զարդովն զարգարելով եւ զերեւելի զնոյապապ գանեղդ դիսն մեծարելով :.....

ցոյցներ կուտան որ, Սահակ Կամարական այդ եկեղեցին ոչ թէ ի հիմանց նոր շիներ է, այլ Ծրդ դարէն առաջ գոյութիւն ունեցող ուրիշ եկեղեցի մը վրայ կարեւոր նորոգութիւններ եւ փոփոխութիւններ կատարած է:

Յատակագծի ամբողջութեան մէջ երեւցած սեւ գոյնով շրջագիծը, նախ քան Սահակ Կամարականի նորոգելը եղած ձեւն է որ հաւանաբար դարձեալ եկեղեցի էր Ծրդ դարու սկիզբին, դուրսէն առաջ, բայց ինչպէս կը տեսնուի առանց կիսաբոլորակ խորանի: Կիսաբոլորակ խորանին տեղը կը բռնէ ուղղանկիւն նեղ խորշ մը, որ կարծեցնել կուտայ թէ Հայոց մէջ նախ քան Ծրդ դարու կէսը ընդունուած էր արեւելեան սեղան եւ այդ խորշը սեղանի յատուկ էր: Այս ձեւը անգամ մը եւս կուգայ ապացուցանելու որ նախ քան Ծրդ դար էջմիածնի մէջ ալ չէր կարող կիսաբոլորակ ապսիտ գոյութիւն ունենալ, որովհետեւ բոլոր Հայոց եկեղեցիներու քննութեամբ պարզ կ'երեւայ որ ամէն դարու ամէն ոճի եկեղեցիներ միշտ մեծ մասամբ հետեւողութիւն եղած են էջմիածնի: Դ՛ր դարուն շինուած էջմիածնի յատակագծի ձեւը ունին, թերեւս այս վերջինն ալ ունէր իր նախատիպը Հայոց մէջ, եթէ ներսէս Երմոզն էր որ այսօրուան յատակագծին վերածեց:

Տիկորի եկեղեցիին յատակագծին մէջ երեւցած սեւ գոյնով շրջագիծն ալ այդ շէնքին ամեն նանախնական ձեւը չէ. անոր ամբողջութիւնը ունենալու համար պէտք է երեւակայեմք նոյն լայնութեան վրայ աւելի երկար շէնք մը ուղիղ քաւակուսի, և փոխանակ չորս ներքին սիւներով վեց սիւներով կամարակապուած սրահ մը, առանց գմբէթի:

Ոչ դը թող առանց ապացոյցի չի համարի ըսածս, դեռ կան ճիշտ նախնական ձեւով նմանորինակ շէնքեր, որոնց յատակագծերը այստեղ տալու հնարաւորութիւն չունին. բայց թուեմ անոնց մէկ քանին: Արարատեան նահանգին մէջ Քասաղի եկեղեցին, Երրակի մէջ Երբրուքի եկեղեցին եւ Օծունի (\*) եկեղեցին են. ևն. ասոնք ամէնն ալ պահած են վեց սիւներու վրայ կամարակապ յատկութիւններն առանց գմբէթ ունենալու:

Տիկորի եկեղեցին շատ բան լուսարանեց, ան ծառայեց իրբեւ դուռ մը ուրիշէն կ'անցնուէր դէպ ի հեթանոսական աշխարհ: Անվրէպ փաստեր երեւցան Տիկորի ուսումնասիրութեամբ որ նոյնօրինակ շէնքերու գոյութիւնը կը հասցնէին մինչև 3րդ դար, յորում եթէ քրիստոնէութիւնը մեծ ծաւալ ստացած էր, այնու ամենայնիւ քանի որ դեռ բոլորովին ապատ կրօն ալ չէր, հետեւաբար այս մեծ և հոյակապ շէնքեր չէին կարող քրիստոնէական տաճարներ ըլլալ (\*\*): Ամենայն հա-

ւանականութեամբ այդ խոշոր շէնքերը իրենց կատարեալ միօրինակութեամբ Հայոց հեթանոսական մեհնաններ էին:

\* \* \*

Հայոց եկեղեցիներու ձեւերը առաջին անգամ օտար ազդեցութեան ենթարկուած կ'երեւին Ծրդ դարու սկիզբներուն: Մերութանի էջմիածինը քանդակէն յետոյ վերաշինուածը շատ հաւանական է Տիկորի սեւ գծերով ներկայացուած յատակագծին ձեւն ունէր, որուն անմիջապէս հետեւեր է ապսիտի յաւելումը որ հռոմէական պագիլիքի միակ յատկանիշն է:

Ինչպէս կ'երեւի ապսիտը ուղղակի Հռոմէն եկեր է Հայաստան՝ ճանապարհին իր հետքերը թողելով Կիլիկիոյ մէջ, և հետը բերեր է միաժամանակ ուրիշ ազդեցութիւններ ալ որոնք միմիայն հռոմէական նախնական եկեղեցիներու ձեւերուն յատուկ են, ինչպէս արեւելեան կողմէն դէպ ի հիւսիս և հարաւ դուրս ցցուած թեւեր, որոնց մէջ կը բովանդակուին աւանդատուներ և արտաքին ճակատը շրջապատող սիւնազարդ ծածկոյթներ, ինչպէս կը տեսնուի Տիկորի եկեղեցիի յատակագծին թուխ գոյնով Սահակ Կամարականի յաւելումները ցոյց տրուող մասերուն վրայ: Հռոմի մէջ 3րդ դարուն շինուեցաւ ճիշտ նոյն ձեւով Ս. Պրաֆսուս ըսուած եկեղեցին և կ'դարուն նախկին Ս. Պետրոսը: Ասոնց շուրջը թէեւ կը պակսի սիւնազարդ ծածկոյթը, սակայն մեծ հաւանականութիւն կայ անոնց գոյութեան իրբեւ անմիջական ազդեցութիւն յունական մեհնաններու: Այս ձեւի ուղիղ ազդեցութեան տակ կազմուած են Երբրուքի նախկին շինութեան վրայ եկեղեցիի փոխարկման համար կատարուած յաւելումները:

Արտաքուստ սիւնազարդ շուրջանակի ծածկոյթներ որոնք ամենայն հաւանականութեամբ սկզբնական եկեղեցիներու մէջ հեթանոսաց գաւթիքներ էին, լուսաւորչաշէն եկեղեցիի մէջ գոյութիւնը կամ բացակայութիւնը կարելի չէ հաստատել, բայց վահան Մամիկոնեանի շինածին շուրջը գոյութիւն ունենալուն համոզիչ ապացոյցներ երեւցան վերջերս, ասոնք քանդուեր են Դ՛ր դարուն ապսիտները դուրս հանուած ժամանակ:

Օտարամուտ ապսիտը Հայոց մէջ թէեւ մըշտնջեցանապէս ընդունուեր է, սակայն անոր հետ միաժամանակ եկող արեւելեան կողմէն դուրս ցցուած թեւերու և արտաքին սիւնազարդ ծածկոյթներու ոճը շուտով վերջ գտեր են: Դ՛ր դարուն առանց բացառութեան այլևս չեն երևիր այդ ոճերը: Նոյն իսկ հեթանոսաց գաւթիքի նշանակութիւնն ալ կորսուած է Հայոց մէջ Դ՛ր դար-

(\*) Օծունի եկեղեցին ես դեռ անձամբ չեմ տեսած, բայց արժանահաւաս մարդիկ կը վկայեն անոր այս յատկութիւնը:

(\*\*) Այս մասին մանրամասն փաստացի ապացոյցներ

տալու համար յօդուածիս սահմանը շատ ցնդ է, բայց շատ քիչ կը տեսնուին արժանի աշխատութիւնս Տիկորի մասին ուր մանրամասն ներկայացուցած եմ բոլոր փաստերը:

րէն մինչև 129 դար, այս երկար շրջանին մէջ ոչ մէկ եկեղեցի չենք գտներ Հայոց մէջ որ յատկապէս շինուած հեթանոսաց գաւիթ ունենայ: Ինչպէս կ'երևի յետագոյն պատմական վկայուած թենէ մը, Արևմուտքէն աւելի ապաստանիս Հայերը չեն ուզեր հնազանդիլ « Մի ո՛ք յերեսայից » ի ժամանակ եկեղեցիէն դուրս ելլելու համար սահմանուած օրէնքին, այդ պատճառով ալ գաւիթներ շինելու պէտք չէ զգացուեր: Երբ 11 և 129 դարերուն այդ օտարամուտ սովորուած թիւնը վերստին երեւցեր է Հայոց մէջ. այս անգամ ալ միևնոյն ընդվզող գիրքն են բունած Հայերը, և որպէսզի « Մի ո՛ք յերեսայից » ի ժամանակ դուրս ելլելու չի պարտաւորին, ամենեւին եկեղեցիի մէջը չեն մտեր, առ հասարակ հաւաքուեր են գաւիթի մէջ, ուր իբրև ոչ եկեղեցիին անմիջական մաս, ունեցած են անպատշաճ վարմունքներ ալ, որով գաւթակղութեանց անդի տուած են: Այս երեւոյթին վրայ գառնացած, Ներսէս Լամբրոնացին ստիպուեր է երկար ճառ մը գրել (1) եկեղեցիի գաւիթի և խորհուրդի նշանակութիւնը բացատրելով և հանդէպ այդ նուիրական օրէնքներու ժողովրդին պարտականութիւնները ընդգծելով:

« Խաչաձեւ յատակագծի Հայաստանի մէջ երևան գալով հանդերձ նախաւանդ քառակուսի երկար ձեւերն ալ միաժամանակ պահուած և անընդհատ շարունակուած են մինչև վերջը առանց արտաքին համաչափութիւններու մէջ փոփոխութեան ենթարկուելու, այսինքն իրենց լայնութեան և երկայնութեան համար աւանդաբար ընդունուած ներդաշնակութեան մէջ: Եթէ փոփոխութիւն մը կայ, այն ալ փոխանակ վեց սիւներով ներքին կամարակապ ձեւին՝ չորս սիւներով գմբէթաւոր եղած են 59 դարուն վերջերը, որոնք կը յիշեցնեն այս շրջանին մէջ Լուսաւորչի տեսիլքով նկարագրուած ձեւը ըստ ամենայնի որոշ մանրամասնութեամբ:

Բոլորովին բոլորակ եկեղեցի Հայոց մէջ առջին անգամ կ'երևայ Զուարթնոց եկեղեցին 79 դարուն: Անկէց առաջ բոլորակներու կամ բազմանկիւններու գոյութեան մասին հաստատ ոչ մէկ տեղեկութիւն չի կայ:

Եթէ հիմնուիք պատմական վկայութեան մը վրայ, պէտք է որ հուշատանք թէ՛ եթէ բոլորակ կամ բազմանկիւնի եկեղեցիներ չկային, սակայն պէտք էր որ գտնուէին մկրտարաններ, ըստ Արևմտեան սովորութեան, ուր ընդունուած միակ ձեւն էր մկրտարաններու համար բազմանկիւնին կամ բոլորակը: Այս ալ ամենայն հաւանականութեամբ դարձեալ 59 դարէն սկսած որ միակ թուականն է թէ՛ կրօնական և թէ՛ արուեստական ոճերու ներգործութիւններուն Հայոց վրայ (\*):

Բազմանկիւնի և բոլորակ ձեւերն ալ օտար են Հայաստանի մէջ. թէև սկզբնական ծագումին համար գիտնականներ համաձայն չեն որ յունական կամ հռոմէական ըլլայ, կարծողներ ալ կան որ նախ քան Յունաստանը Ասիոյ մէջ ծագում առած ըլլայ. բայց առ այժմ, գոնէ մեզի ծանօթ բոլորակ կամ բազմանկիւնի յիշատակարաններու ամենահինները Յունաստանի և Հռոմի մէջ կը գտնուին. իբրև քրիստոնէական եկեղեցի ալ կարելի է նախատիպ համարել Հռոմի Ս. Ստեփաննոսը, Բանթէոնը և ուրիշ կարգ մը նմաններ:

Ներսէս Գ. Երևոյ Արևմուտքէն բերաւ Զուարթնոցի բոլորակը, այս կաթողիկոսը ինչիր գաղափարներով այնպէս ալ իր ճաշակով առանձին տեղ բունէր էր հայ կաթողիկոսներու շարքին մէջ, Դէպի քաղկեդոնականութիւն ունեցած ձգտումով, լուսաւորչականութիւն և քաղկեդոնականութիւն իրարու մէջ ձուլելու ջանքերուն հետ միաժամանակ ուզեր է նաև այդ երկու դաւանութեան եկեղեցիներն ալ միմեանց մէջ ձուլել. յիշաւի, եթէ առաջինին մէջ բոլորովին չէ յաջողեր, երկրորդին մէջ արդիւնքը հրաշալի է. անոր ճարտարապետը հայկական նուիրագործուած խաչաձեւը յունական բոլորակին հետ ներդաշնակօրէն պատշաճեցնելու համար արտակարգ յանդգնութեան հետ եղական հանձար ի գործ դրեր է ի մեծ դարմացումն այսօրուան մեր գիտական աշխարհին:


Զուարթնոցի մէջ պատարագի սեղանին գրաւած տեղն ալ հայ եկեղեցական ոճին բոլորովին անսովոր է, մասնաւանդ հետաքրքրական է այն տեսակէտով որ կեդրոնական սրբարանով եկեղեցիներու հեռեւորութիւն ցոյց կուտայ. թէև սեղանը ճիշտ կեդրոնին վրայ չէ, սակայն արեւելեան պատէն ալ շատ հեռու կը մնայ՝ իր ետեւը թողելով ժողովրդեան բաժին: Աւելորդ է ըսել թէ հայ եկեղեցական ճարտարապետութեան մէջ ընդհանուր ուղղութիւնէն այսքան մեծ շեղում և օտար ներգործութիւն Զուարթնոցի վրայ՝ Ներսէս Գ. կաթողիկոսի քաղկեդոնիկութեամբ միայն կարելի է բացատրել:

Առանձին հետաքրքրութեան արժանի է Զուարթնոցի կեդրոնին վրայ եղած մկրտութեան գիտնափոր աւազանը: Ինձի կը թուի որ այս ոճը Արևմուտքին ալ անսովոր էր, որովհետև Արևմուտքի մէջ չի մկրտուած մարդ եկեղեցիին մէջ մտնելու իրաւունք չունենալու համար նախապէս մկրտարանները շինեցին նախագաւիթի մէջ. ուր հեթանոսը մկրտուելէն յետոյ կարող էր մտնել բուն եկեղեցին. իսկ վերջը շինեցին առանձին մկրտարաններ եկեղեցիէն բոլորովին դուրս և որոշ չափով ալ հեռու: Ինձի տակաւին անձանօթ է արեւելեան թէ՛ արևմտեան հին եկեղեցիներուն մէջ կեդրոնին վրայ մկրտարանով եկեղեցի:

Մասնաւորապէս Հայոց մէջ անլուծելի գաղտնիք է մկրտարաններուն կամ մկրտութեան աւազաններուն ձեւն ու տեղը: Ես կը կարծեմ որ

(1) Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնի ի կարգա եկեղեցոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վեներիկ, 1847, էրես 21—40:

(\*) Տեսնել յաջորդ ծանօթութիւն:



Յասակագիմ Զուարթեց եկեղեցիի (շինուած է. դարուն)

Հայոց մէջ առանձին մկրտարաններու սովորութիւնը ընդունուած (1) և պահուած է երկար ժամանակ, հաւանորէն մինչև 13—14դ դարեր: Այս մասին շատ օգտակար կ'ըլլայ պեղել Անիի մէջ գտնուող բազմաթիւ մանր բոլորակ և բազմանկիւնի եկեղեցիներէն մէկ քանին, որոնցմէ շատերը կը գտնուին մեծ եկեղեցիներու մօտիկ: Մայր եկեղեցիի հարաւ-արեւելեան անկիւնի մօտ կար ութանկիւնի փոքր մատուռ մը, որ

կարելի է թէ Մայր եկեղեցիի մկրտարանն էր 1892—93 թուականներուն է բոլորովին փլած այս մատուռը:

Հաւաստողներ կան որ Կարսի Առաքելոց եկեղեցիին մօտ կար փոքր ութանկիւնի մատուռ մը, որուն յատակին վրայ գետնափոր շինուած կար խաչաձև աւազանի նմանող փոս մը սրբատաշ քարերով շինուած:

Հաւանականաբար 7դ դարու Հռիփսիմէի եկեղեցին առաջին օրինակը եղաւ չորսէ աւելի ապսիսներով եկեղեցիներու: 10դ դարէն սկսած արդէն սովորական դարձած երեւոյթ է վեց, ութը և աւելի ապսիսներով եկեղեցիներու ոճը, որոնցմէ ոմանք արտաքուստ ութանկիւնի կամ բազմանկիւնի ձևեր տակ ծածկուած են, ոմանք ալ բոլորչի ձևով որոշուած են դրսէն:

Գ.

ՀԱՅ-ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Հայոց նախաքրիստոնէական ճարտարապետութեան ըստ ամենայնի վարդացած վիճակ մը

(1) Սոփեբէ Հայկական. հաս. Բ. Պատմ. վասն Սրբոյն Սահակայ հայրապետին և Մեսրոպայ վարդապետին: Վեցէսիկ 1853, երես 81: Եւ զսանաւստ աղօթիցն՝ յորս սուրբ և աստուածընկալ սեղանն է նասասալ, յորոյ վերայ կասարի մեղսաբաւիչ և կեղանաբար խորհուող մարմնոյ և արեան ապրեցուցչին մերոյ տեառն՝ ըստ արժանի բաւականութեանն զարդարուն պահեսցեն անխափան լուցմամբ և խնկարիւրեամբ. և պարսպեալ բաղաճորմով, և մերձ ի նա մկրտարանն շինեսցին, և անդ, որպէս և սովորուիլն իսկ է և յայլսն՝ ի նմին կանգնեացի աւազան մկրտութեան:

ունենայուն վկայ են, հողէն դուրս հեթանոսական շրջաններէ մնացած հատուկօտոր բեկորներ: Աւելի պարզ և մանրամասն պատկեր մը ունենալու համար պէտք է պատուել բազմադարեան հողակոյտեր, ուր թաղուած են գեղարուեստական յիշատակարաններու փլատակներ:

Վասպուրականը, Տարօնը և մասամբ Միջագետքը պատմական հայ գեղարուեստի այնպիսի աշխարհներ են, որոնցմէ քաղուելիք արդիւնքը մեր պատմութեան առաջին գլուխները պիտի կազմեն. առանց այս գաւառներու խուզարկութեան միշտ թերի կը մնան ուրիշ տեղերու վրայ կատարուած բոլոր հնագիտական ուսումնասիրութիւններ:

Արարատեան նահանգին մէջ, ուր աւելի քիչ բան կը սպասուի հեթանոսական շրջանէն քան Վասպուրական, առանց պեղումի իսկ բազմաթիւ նիւթ կայ գիտական այցելութենէ զուրկ մնացած: Ամէն քայլափոխի կը տեսնուի պատմութեան համար անգնահատելի գոհարներ պարունակող հողակոյտեր՝ բանի ու բրջի կարօտ. բայց բանն ու բրջն ալ դաստիարակուած ու ինքնագիտակ սերունդի են կարօտ:

Հեթանոսական շրջանի քանի մը բերդերու մնացորդներ կան, որոնք բաւական են մեզի հասկնելու թէ, ի՞նչ երկաթի կամք, մարմնական բիրտ ոյժ և եգիպտական արտակարգ չարքաշութիւն ունեցեր է այդ բերդերը կանգնող ժողովուրդը:

Հրաբլիային աւագաքարի գործածութիւնը դեռ չէ սկսած բերդերու շինութեան համար, երկաթի նման կարծր և աներեւակայելի ծանրութեամբ որձաքարն է ի գործ գրուած ծաւալի վիթխարի չափերով. մինչև չորս խորանարդ մէթր քարեր իրարու վրայ դրուած են լոկ մարդկային ոյժով, առանց նոյն իսկ կրաշաղախի. շաղախի պաշտօնը կատարեր են երկաթի ամուր կապերը և արտասովոր մեծութեամբ քարերու բնական ծանրութիւնները: Ոչ մէկ ոյժ բաւական չէր անոնց ճարտարօրէն հիւսուած շարքերը քանդելու՝ եթէ բնութեան ուժեղ սասանումներու տնդիմարելի զօրութենէն չի կործանէին:

Այս բերդերու համար գործածուած քարերու խոշորութեան վրայ գաղափար մը կազմելու համար բաւական թող ըլլան մէկ երկու օրինակներ:

Երասխի և Ախուրեանի իրար խառնուած տեղը նախկին Երուանդաշատի մէջ, ուր այժմ կայ Հանք-Պայլամ պարսկաբնակ գիւղը, պարտէզներու և այգիներու շրջափակ են շինած բերդէն թափած քարերով. ամէն կողմէն մէկ շարք քար բաւական եղած է անանցանելի դառնալու համար, ամէն քարի բարձրութիւն մէկ ու կէս մէթրէն պակաս չէ, և առանց բացառութեան անոնց վրայ կը տեսնուի երկաթի կապերուն փորուածքները:

Բագարանի մէջ նոյն շրջանէն մնացած փոքր սրահ մը կայ, որուն իւրաքանչիւր կողմի պատերուն համար բաւական եղած է իրարու վրայ դնել հինգ կամ վեց քար: Քրիստոնէական

շրջանի մէջ այս սրահի մնացորդը վերածեր են տոհմային դամբարանի և ստորին կարգի շարքերուն վրայ փորագրեր են արձանագրութիւններ ու խաչեր՝ անոնց յաւիտենական անշարժութեան վրայ միանգամայն վստահ:

Բագարանի հին բերդի պարիսպները ինքնին սարսափելի մեծագործութիւններ են, որոնց հազիւ հետքը մնացեր է այսօր հողի երեսին. մասեր կան որ մինչև երկուք ու կէս մէթր թանձրութիւն ունին, իսկ քարերու խոշորութենէն մարդ կը զարհուրի. թէ ի՞նչ միջոցով այդ մեծամեծ գանգուածներ իրարու վրայ հաներ են, հասկնալ անկարելի է:

Նոյն ոճը, նոյն չարքաշ դիւային աշխատանքը կը ներկայացնէ Տիկորի բերդը, սա թէև համեմատաբար փոքր տարածութիւն ունի, սակայն աւելի որոշ է ընդհանուր յատակագիծը, որուն մէջ բաց ի պատերէն յայտնի են նաև ձեռագործ ճանապարհները, ոչ մէկ դժուարութեան առջեւ կանգ չեն առեր շինողները, զարեանյններն հարթեր են ցած կողմին վրայ որձաքարէ հաստատուն պատեր շինելով. իսկ հանդիպած ապառաժները մինչև չորս մէթր լայնութեամբ ձեղքեր անցեր են:

Բերդէն իջնող այս ճանապարհը լեռան հիւսիսային լանջին վրայ մինչև ութը մէթր կը լայննայ և կը հասնի ուղիղ կամսարականի եկեղեցիին արևմտեան դրան առջև, ուր կը ձիւղաւորուի զանազան ուղղութեամբ: Եկեղեցիին հարակային կողմը գտնուած հին գերեզմանատան մէջ տապանաքարերու վրայ եղած արձանագրութիւններէ կը տեսնուի որ, 10դ դարուն թէ՛ բերդը և թէ՛ ճանապարհը անգործածելի եղած են, որովհետև գերեզմանատունը շինուած է ճանապարհին վրայ:

Վերին աստիճան ուշագրաւ են որձաքարի մէջ փորուած հին քարայրներ: Առանց սոսկումի մարդ չէ կարող նայիլ Բագարանի մէջ գտնուող քարայրի վրայ: Վերէն վար ուղղահայեաց կերպով կտրուած բարձր լեռան մը կուրծքին, առ նուազն 80 մէթր բարձրութեամբ. քարայրէն վեր ալ կայ նաև մօտ 50 մէթր բարձրութիւն: Ամէն կողմէ անմատչելի է այս քարայրը, բաց ի միակ ձեռագործ նեղ ճանապարհէ մը որն որ յատկապէս փորուած է լեռան կուրծքին: Քիչ մարդու գործ է առանց գլխի պտոյտի անցնիլ այդ սոսկատեսիլ անդունդի վրայէն որուն ահաւորութիւնը կը բազմապատկուի Ախուրեանի Փշֆշոցներու արձագանքներովը:

Այս տեսակ անմատչելի քարայրներու շինութիւնը սովորական կ'երեւի Հայաստանի մէջ, թերեւս իբրև ապաստանարան քաղաքական փոթորիկներու ժամանակ: Խորինացին կը նկարագրէ Մանանդի գաւառին մէջ ուրիշ քարայր մը, որուն մէջ ապաստաներ էին Արշակի գանձերը փախցնողներ (1): Հետապնդողներն ստիպուեր են երկաթէ կապերով շինուած ամուր սնտուկներու

(1) Մով. Խոռեմացի. Տիխիս 1881, Երես 352:

մէջ մարդիկ նստեցնել և չուանով վերէն վար կախել, բայց կրկին չեն յաջողեր քարայրին մտանալ :

\* \* \*

Իր բոլոր կատարելութիւններով հայ գեղարուեստի թագուհին է Գառնիի մէջ Տրդատայ Թախթ ըստեալ շէնքը, որուն բեկորները հողին հաւասարած են այսօր և վայրենի գիւղացիներու քաղաքացիներ անընդհատ կը տանին անոր չքնաղ քանդակազարդ քարերը գոմեր ու մարազներ շինելու համար :

Ինչ որ ալ ըլլայ այս շէնքը, Թախթ, հովանոց կամ մեհեան, լիովին կ'արգարացնէ անոր Տրդատի վերագրուելու ժողովրդային աւանդութիւնը : Հռոմի մէջ դաստիարակութիւն ստացող Տրդատը միայն կարող էր այս ճաշակը ունենալ և անոր ոճը ընդհանրացնելու ձգտիլ Հայաստանի մէջ :

Հռոմէական արուեստի զօրեղ ներգործութեան տակ կազմուած է իր ընդհանուր գծերուն մէջ, սակայն երբ մանրամասնութեանց կը մըտնենք, կը տեսնենք որ տեղական ճաշակն ալ ոչ նուազ դեր կատարեր է :

Շատ պարզ է որ Հռոմէացի ճարտարապետ չկար անոր վրայ հսկող, եթէ ոչ չէին պատահեր այնպիսի սխալներ, որոնք հռոմէական արուեստին մէջ հաստատուն ընդհանուր օրէնքի տակ դրուած էին, այդ կոտններու մանրամասնութեանց անձանթ հայ ճարտարապետը միայն միայն կարող էր moulureներու դասաւորութեանց մէջ շեղուիլ ընդհանուր օրէնքէն : Ես կը կարծեմ որ Տրդատի յիշողութիւններն են որ զեկաժարեր են շէնքին ընդհանուր ճարտարապետութիւնը, ան ներշնչեր է հայ ճարտարապետին այնքան բան որչափ որ իրրեւ ոչ մասնագետ միտքը պահած էր Հռոմի մէջ. մնացածը թողեր է տեղական ճարտարապետի ճաշակին :

Երբ քանդակներու մասերը առանձին քրննենք, մեծ մասամբ հռոմէական արուեստին օտար կը գտնենք. և ինչ մասեր որ Հռոմի արուեստին կը պատկանին, անոնք ալ թէ՛ համաչափութիւններով և թէ՛ քանդակագործական ոճով դարձեալ տեղական ոճին ենթարկուած բանի նմանութիւններ են :

Ընդհանուր առմամբ պէտք է ըսենք որ Տրդատի Թախթը իր հռոմէական ճարտարապետութեան մեծ խառնուրդով բացառութիւն է Հայկական ոճի դարուար ուղղութիւններու մէջ : Որչափ որ Տրդատ ցանկացեր է հայ ճարտարապետութեան մէջ յեղաշրջում մը յառաջ բերել, սակայն բոլորովին չէ յաջողեր : Հայեր չեն համակրեր բոլորովին այդ ոճին, զանր և ընդունել են այն մասերը, որոնք իրենց հաճելի երեւցեր են. Ծղ և Եղ դարերու յիշատակարաններու վրայ Տրդատի Թախթը յիշեցնող հազիւ քանի մը ձեւեր կը տեսնենք :

Իմ կատարած հետազոտութիւններէս եզրակացուցեր եմ որ Հայոց քրիստոնէական շրջանի

ճարտարապետութիւնը, սկսած 4րդ և 5րդ դարերէն մինչև վերջին անկումը 14րդ դար, չորս տեսակ վերածնութիւններէ անցեր է, որոնց առաջինին կը պատկանին Էջմիածնի կաթողիկէն և Տիկորի եկեղեցին նախ քան Սահակ Կամսարականի վերանորոգութիւն կատարելը :

Վերածնութեան առաջին շրջանը, որ տևած է 4րդ դարէն մինչև 7րդ դար, յայտնի նշաններ ցոյց կուտայ որ ենթարկուած է հռոմէական ճարտարապետութեան զարգաքանդակներու եւ moulureներու քանի մը ձեւերու մէջ :

Էջմիածնի կաթողիկէն տակաւին պահած է modillonներով զարդարուած corniche մը, բայց միւս մասերուն մէջ, անընդհատ նորոգութիւններու պատճառաւ հինէն գրեթէ բան չէ մնացեր, որպէս զի կարելի ըլլար ճշտել հասկնալ թէ ի՞նչ չափով և ի՞նչ ներգաշնակութեամբ պատուաստուած էր հռոմէականը հայ ոճին հետ :

Տիկորի եկեղեցին ալ թէև յաճախ ենթարկուեր է փոփոխութիւններու, բայց շատ բնորոշ կերպով պահած է հայ և հռոմէական ճարտարապետութեան ներգաշնակ խառնուրդը :


Հռոմէական արուեստի ներգործութիւնը մասնանշող գլխաւոր մասերը Տիկորի եկեղեցիին վրայ արեւելեան և արեւմտեան մեծ frontonներն ու շէնքը շրջապատող որմասիւններու լայնութեանց և բարձրութեանց համաչափութիւններն են : Որմասիւնները օտար համաչափութիւնը պահելով հանդերձ, խոյակներ և խարխիւներ բոլորովին տարբեր կերպարանք ստացած են իրենց անօրինակ քանդակներով : Քանի մը խոյակներ կան թէև յունականի հետեւողութեան ջանքեր ցոյց տուող, բայց մնացեալ մեծ մասը ոչ մէկ կերպով չեն կապուիր շրջակայ ազգերու ոճերուն հետ : Ասոնց մէջ քանդակամասեր կան, որոնք նորածիլ բողբոջներ են 9րդ և 10րդ դարերու մէջ ծագող և յետոյ ալ գոթական ճարտարապետութեան մեծ հարստութիւններէն մէկը կազմող հայկական ամենաճոխ մանուածոյներու : Չէ կարելի չճիանալ բոլորակ որմասիւններու խարխիւները ծրագրող ճարտարապետի պայծառ երեւակայութեան վրայ. քառակուսի տախտակի մը չորս անկիւններուն վրայ շեղակի քանդակներ է աստիճանաբար իրարմէ բարձր սրածայր տերեւներու շարքեր, ամենէն բարձր տերեւներուն ծայրերուն վրայ զետեղեր է կոնաձեւ սկաւառակ մը սուր ծայրը անցուցած չորս անկիւններու տերեւներուն հեռաւորութեանէն մնացած դատարկութեան մէջ. կոնաձեւին ամբողջ շուրջը քանդակուած են մանրիկ ձողիկներ որոնք շատ կը յիշեցնեն տաճկահայ կղերին գլխու խոյրը և անոր կոնաձեւ մասին վրայի ծալքերու շարքը : Սկաւառակին վերի շրթունքները պսակուած են երկգծանի բոլորչի մանուակով մը որուն մէջտեղէն վար կախուած է մինչև ներքև լայն ժայռէնի մը վրայ քանդակուած պայտաձեւ օղակներով շղթայ մը : մանեակէն վեր կը սկսի արգէն սեւան բունը : Այսքան վայելչութիւն, շքեղութիւն այս խարխիւններուն վրայ, ոչ մէկ տեղ իրենց նախորդը չունին :

խոյակներէն մէկուն վրայ քանդակուած են երկու եղջիւրներ, որոնք իջնելով վերէն վար և փաթաթուելով խոյակին արտակարգ գեղեցկութիւն կուտան: Քառակուսի որմասիւններու խոյակներուն մէջ քանդակուած են զանազան փայրենի կենդանիներ ճարտար և համարձակ գծերով, որպիսիները դժուար է տեսնել հայ ճարտարապետութեան մէջ մինչև 12րդ դար:

Այս բոլոր կատարելութիւններու հետ կան մասեր ալ որոնք սկզբնական փորձեր միայն կը ներկայացնեն Տիկորի եկեղեցիին մէջ: Պարզ կ'երեւի որ նախ քան 5րդ դար գմբէթի կառուցումը անձանօթ էր Հայաստանի մէջ և թերևս առաջին փորձն է Տիկորի եկեղեցիին գմբէթը:

Չորս կողմէն ներս հակուած պատերով միայն կարողացեր են գմբէթի ձև տալ անոր ի ներքուստ, իսկ արտաքուստ միայն խորանարդ մը քայքայ իր նախնականութեամբ հանդերձ բաւական հանձարեղ միջոցի են գիմած առանց կաղապարի շինելու համար: Գմբէթի այս նախնական ձևին վրայ է որ հետոյհետէ զարգացեր և կատարելագործուեր են յետագայ դարերու մէջ նախանձելի շքեղութեան հասած հայկական կոնսաձե գմբէթները:

Հաւանականաբար 6րդ դարու վերջերը սկսեր է հայ ճարտարապետութեան երկրորդ վերածնութիւնը. որովհետև 7րդ դարուն արդէն նախորդ ոճէն բոլորովին տարրեր, նոր ուղղութեան



Չուարբոց եկեղեցիի ճեռի խոյակներ (գործ է. դարու)

վրայ կանգնած է: Հռոմէական ոճի ներգործութիւնը միանգամայն անհետացած է, անոր տեղը բռնած են Ասորական և Սասանական փոխանցումներ: Cornicheներ բաց ի սասանականէն կարծէք ամենահին Յգիպտական և Քարգէական ոճերու վերյուշումներ են, նոյնպէս գնդազրուխ խոյակներ երբեմն մանուածոյ քանդակներով ծածկուած, abaqueներու ներքև երկու ծայրերու վրայ յարմարցուած են յունական խոյողներ (spirale), սակայն ոչ իսկապէս յունական, աւելի նման արեւելեան ձևերուն, որոնք երևցան Նինուէի և Պերսեպոլի պեղումներով: Պատուհանները առ հասարակ շրջանակուած են բազմատեսակ moulureներով և պսակուած ծաղիկ-

ներու և անրեւներու խառնուրդով քանդակուած լայն ժապաւէններով: Այս երկրորդ վերածնութեան մէջ ինքնուրոյն զարգաքանդակներ ստեղծելու համար, շատ քիչ անգամ դիմեր են բնութեան, երեւակայութիւնն է ներշնչելու արուեստագէտներուն ուղիղ ու կոր գծերով գաղափարական տերեւներու ու ցօղուններու հիւսուածքներով ստեղծել զգլխիչ ներդաշնակութիւն մը, որուն decadence անունը կուտայ ներկայ ճարտարապետութիւնը և դարուս մէջ միայն ստեղծուած կը համարի: Արդեօք որչափ մեծ անակնկալ պիտի ըլլայ մեր ժամանակակից արուեստագէտներու համար, երբ օր մը տեսնեն իրենց սեփականութիւնը կարծած զարգարանք-

ներսև անհամար օրինակները առ նուազն ստա- ներիք դար առաջ իրագործուած Հայաստանի մէջ :

Մարդոց և կենդանիներու քանդակներուն համար յաջող շրջանն է երկրորդ վերածնունթիւ- նը , այդ ճիւղը զգալի կերպով ինկած է հակա- առկ միւս ճիւղերու կատարելագործութեան : Բացառարար Մրենիի եկեղեցիին դռներուն վը- րայ կան բարձրաքանդակ պատկերներ , որոնք աւելի պատմական նշանակութիւն ունին քան գեղարուեստական Այս քանդակներուն մէջ մենք կը տեսնենք 7Վ դարու հայ իշխանին ու արհուա- կանին տարազը իր բոլոր մանրամասնութիւննե- րով , որուն անփոփոխ շարունակութիւնը պահ- ւուած է քուրդ պէյերու մէջ : Այս շրջանին գերեզմանաբարերու վրայ ալ կը տեսնուին մար- դոց պատկերներ , որոնք միւսնոյն տարազը ունին :

Չուարթնոց եկեղեցին 7Վ դարու Հայոց ճարտարապետութեան զրուխ գործոցն է և ան- համեմատ մեծ արուեստագիտութեամբ փորա- գրուած են բոլոր քանդակները , սակայն այնտեղ ալ բոլորովին անյաջող են մարդոց պատկերներու քանդակներ :

Ինչպէս եկեղեցական նոյնպէս ալ գեղարուես- տական ճարտարապետութեան մէջ եզական օրի- նակ մը՝ Չուարթնոց եկեղեցին : Թէև շատ է խօսուած այս հրաշակերտ յիշատակարանին վրայ , բայց որչափ որ խօսուի դարձեալ քիչ է : Ճշմա- րիւտ է որ ան չունի Պանթէօնի և Ս. Ստիլայի գմբէթներու վիթխարի արամագիծը և ոչ ալ անոնց մէջ վաղած սկիի հեղեղները կան այս- տեղ , բայց կայ ճարտարապետական այնպիսի մեծութիւն մը և արուեստագիտական այնպիսի հմտութիւն , որ համաշխարհային ճարտարապե- տութեան մէջ հազուադիւր օրինակ և պսակ է Հայու ստեղծագործական տաղանդին(1) :

Մոպէս Կաղանկատացոյ վկայութեան նա- յերով , Կոստանդին կայսրը գմայած մնաց այս եկեղեցիի գեղարուեստական մեծագործութեան առջև , և իր հետ տարաւ ճարտարապետ Պոլ- սոյ մէջ ալ նմանը շինել տալու համար , սակայն ճարտարապետը ճանապարհին մեռաւ :

Եթէ Չուարթնոցի բոլոր զարդարանքները ձուլածոյ սկիւով ու արծաթով շինուէին , այնքան սքանչացում զպիտի պատճառէին որչափ որ կը պատճառեն ներքուստ ութը սիւներու վրայ կախուած կրկնակ հսկայ գմբէթները և գմբէթ- ներու խորիսիւր կազմող ութը աղեղները որոնք

(1) Եւրոպայի վարդապետ Գասեան որչափ որ պատշոյ է յարգանաց արժանի է Չուարթնոցի նման հարստապե- տական մեծագործութիւն մը ի յոյս բերելուն համար , նոյն- չափ էս պատաւարտեսի է այդ մեծագործութեան նշան- անք որ ինչչեւ այսօր գիտութեան քաղաք իր մօտ բանտարկած պատկերն համար . եթէ այսուհետեւ ալ չի վերաբացէ պե- դուհներու տուած արդիւնքին լիակատար հրատարակութիւնը , պարզապէս կը մեղանչէ նիւրապէս և բարոյապէս իրեն ազակցողներու նպատակին և ակնկալութիւններուն դէմ :

արտաքին պատին զուգահեռական կորուծեամբ ձգուած են մէկ սիւնէն զէպ ի միւսը :

Չուարթնոցի աւերակները պարզապէս կը ծաղրեն մեր այսօրուան գիտական օրէնքներու վրայ հիմնուած ասորդ-ւթեանց նրբին հաշիւ- ները . եթէ նախ քան Չուարթնոցի գտնուելը , նոյն ծրագիրը հրապարակի վրայ դրուէր , ներ- կայ արուեստագէտներ , ստեղծմով լեցուած , խելագար պիտի համարէին ներկայացնողը . բայց իրականութիւնը լուեցուցած է ամէն յաւակնոտ բերաններ :

Այս անօրինակ յանդգնութեամբ կանգնուած շէնքը երեք հարիւր տարի շարունակ կանգնած մնացած էր . սա արդէն սպացոյց է կանգնող ճարտարապետին լիակատար գիտակցութեան և մասնագիտական գերագոյն աստիճանի հմտու- թեան :

Վ Գագիկ Ա. 11Վ դարու սկիւրը (1000 թուին) , կանգնուած է Սնիի Ս. Գրիգոր եկեղեցին Չուարթ- նոցի պատճէնով , բայց ինչ անհամեմատ տար- րերութիւն կայ այս երկու միանման շէնքերու ճարտարապետներուն հեռաատնութեանը մէջ . Չուարթնոցի ճարտարապետը ճնշում սպառնա- ցող մասերուն վրայ թեթիւ աւազաբար կամ շեշաբար գործածեր է . մինչդեռ Սնիի մէջ հրա- րըղիային սովորական քարով են ճանրարու- նուած նոյն մասերը . և անա այդ անհնաաե- սութիւնը շուտով ունեցեր է իր ազէտալի հետեանքը , հազիւ 10-12 տարի անցած արդէն շէնքը ամէն կողմէ սկսեր է ձեղքուիլ ու զրկելէ անգործածելի եղած է :

Ինչպէս Գառնիի Տրդատայ Թախար , այնպէս ալ Չուարթնոց եկեղեցին Յունա-Հուովական արուեստի մեծ խառնուրդ ունի , սակայն այդ խառնուրդներէն գլխաւոր մասը կը կազմեն ար- տաքին բոլորակը և գարդաբանդակներու մասեր . մնացեալ մասերուն մէջ գերաշիւղ զիւր ունին տեղական ոճերը , մանաւանդ անոր արտասովոր կազմութիւնը , այսինքն խառնուած ձուլուած բա- լորակին մէջ . ի գուր է փնտուիլ ուրիշ երկիր- ներու մէջ այդ ոճը . անբնարարելի կերպով հայկական սեփականութիւն է :

Արտաքուսա , բոլորակ պատուհաններու ամէն տեսակ քանդակազարդ շրջանակներ կապ չունին արտաքին արուեստներու հետ , շատ աննշան բացառութեամբ . նոյնպէս ներքին աղեղներու շրթանց վրայ քանդակուածները . այս վերջին- ներս Տիկորի եկեղեցիի դրանց վրայ գտնուած- ներուն մէկ ուրիշ այլարանութիւնն են :

Արծիւներ քանդակուած չորս մեծ խոյակ- ները , որոնց վրայ հանգչած էին ներքին ութը մեծ պատասխանաու աղեղներու ծայրերը , յատկապէս Չուարթնոցի համար ծրագրուած են իրենց պաշտօնին համապատասխան ձևով . անոնց վրայ քանդակուած արծիւներն ալ շատ կարելի է հայկական աւանդութեան մը հետ կապուած են : Միւս վոքը խոյակները , որոնց գնդաձև կողով- ները մանուածոյ քանդակներ ունին և վերեւէն spiraleներ , իրենց մանրամասնութիւններուն

մէջ առանձին առանձին երկիրներու մէջ զարգացող արուեստներու փոխառութիւն են, իսկ այդ առանձին տարեքններով ամբողջական խոյակի մը ներդաշնակ կազմութիւնը պէտք է տեղական ճաշակի վերագրել: Հաւանականաբար խոյակներու այդ ձևը ՅՊ դարուն մէջ սկսած է գործածուիլ Հայոց մէջ, որուն մէկ օրինակը կայ Երևոյցի տաճարին մէջ: Ծագումով Ասորաքաղաքական են թէ՛ գունդերը և թէ՛ spirale-ները, բայց առանձին գործածուած իրենց նախնի բնագաւառին մէջ. իմ կարծիքով, այդ ոճը երեք ճանապարհով մեկնէր է գանազան կողմեր: Մէկ գծով անցեր է Հնդկաստան, մէկ գծով ալ դէպ ի Սիրիական եղերքներ. իսկ ուրիշ գծով ալ Հայաստան. այս երեք երկիրներու մէջ ալ տարբեր երևոյթ ստացեր են գնդաձև խոյակներու համաչափութիւնները: Միայն Սիրիայի և Հայաստանի մէջ միօրինակութիւն կը ներկայացընեն կողովի հիւսուած քանդակագործութիւնով որ թերևս կապ ունի սրբագործուած աւանդութեան մը հետ, և այդ աւանդութիւնն ալ Սոդոմոնի տաճարին գրան երկու քալի սիէներու խոյակներն ըլլալ կը կարծեմ, որոնց գունդերը ցանցակերպ հիւսուածքով ծածկեր է Սոդոմոնի տաճարին ճարտարապետ Փիւնիկեցի Քերամը(1):

Ով գիտէ ի՞նչ աղէտալի հանգամանքներու պատճառաւ 79 դարէն յետոյ հայ ճարտարապետութիւնը գրեթէ բոլորովին ինկած է: 89 դարէն մինչև 99 դարու կէսը կարևոր շինութիւններու ոչ պատմական շիջատակութիւն կը դրսևանայ և ոչ ալ մնացորդներ:

Ս.յս ողբալի անկումին պատճառը անշուշտ Արաբներու Հայաստան արշաւելն էր: Ս.յս շքրջանին պատմութիւնը սրտածմլիկ ողբերգութիւն մըն է. արիւնարբու գաղաններու նման ներս խուժող վայրենի ցեղին առջև ոչ մէկ սրբութիւն չէ գտնուիր, այրող խորշակի նման խամրեցուցեր ու թողնուցուցեր են երկար դարեր Հայաստանի մէջ մշակուած գեղարուեստի բուրաստաւը: Բաւական չէր թալանն ու կողոպուտը, քանդեր ու աւերեր են այն ամէնը ինչ որ քաղաքակրթութիւն, մեծութիւն և փառք կը ներկայացնէին. անոնց համոզումով անհաւատք իրաւունք չունէր պալատ, տաճար, հարստութիւն և հայրենիք ունենալու, այդ ամէնուն տէր իրենք պիտի ըլլային, և կեալուն ալ իրենց ստրուկ ու գերի: Կը կարծուի որ Զուարթնոց եկեղեցիի նման հոյակապ կոթող մը եթէ հիմնադրուած չի կործանեցին, բայց այնպիսի վիճակի մը հասցուցին որ կործանումէ տարբերութիւն չունէր:

Արծրունի և Բագրատունի թագաւորութիւններու վերականգնումով սահմանափակուեր են ծայրայեղ խժոճութիւնները և քաղաքական կեանքի վերականգնումով յառաջ եկեր է հայ ճարտարապետութեան երրորդ վերածնութիւնը:

Ոչ միայն գեղարուեստաւէր այլ և աւանդապահ հայ ժողովուրդը այս նոր վերածնութեան

մէջ չատ քիչ բան մերժեր է հին արուեստէն, գրեթէ նախկինին վրայ աւելցուցեր է հետզհետէ փոխառութիւններ և նոր ստեղծագործութիւններ:

Ս.յս շքրջանին մէջ վերստին երեցիր են պահ մը յունական տէթայլներ, որոնք ներդաշնակօրէն խառնուած են աւանդական հայկական զարգաբանականներուն մէջ: Հոռոմոսի վանքի գաւիթին առաստաղը, որ աղեղներու խաչաձևուածներով ինը զանազան մասերու բաժնուած է, իւրաքանչիւր բաժնուած առանձին տեսակ քանդակագործութիւնով զարդարուած է, որոնցմէ մէկն է այստեղ ցոյց տրուած պատկերը: Չորս հատ միակուուր քարերով ծածկուած է իւրաքանչիւր առաստաղ, և չորս քարի մէջտեղէն սև քարի լայն շերտով մը խաչաձևուած է յատկապէս զարդարուն խաչ մը քանդակուելու համար, չորս քարերու վրայի քանդակներն ալ միանման չեն, այսպէս կը պահանջէր հայ արուեստագետին ճաշակը:

Գաւիթի կեդրոնական մասը որ փոխանակ առաստաղի գմբէթի վերածուած է, դէպի ներս հակուած ութը խոշոր քարերով միայն կազմուած է ամբողջը, և ամէն քարի վրայ անկարագրելի գեղեցկութեամբ առանձին տեսակ զարդարանքներ փորագրուած են:


Երբէք չեմ մոռնար այն ըրպէն երբ իտալացի արուեստագետի մը հետ կը դիտէինք այս գմբէթը 1903 թուականին: Ս.քանչացած ու յափշտակուած իտալացին՝ երանի կարգաց ինձի, ըսելով « Բաղդաւոր ժողովուրդ էք որ այսպիսի հարստութիւններ ունիք մնացած այնպիսի դարերէ՛ յորում տակաւին Եւրոպայի մեծ մասը կիսավայրենի վիճակի մէջ էր »: Ըստ երևոյթի նկարագրացայ, սակայն միևնոյն ժամանակ ձևաքս չէր չի կարմրիլ, մտածելով որ միջին դարու Եւրոպացիի շապիկէն շա՛տ աւելի աղտոտ էր այսօրուան մեր շապիկը, զուցէ իբրև մեղադրանք նետեց երեսիս այս հեգնական գովասանքը, և շատ հաւանական է, որովհետև յետոյ երբ տեսաւ Աշոտ Ողորմածի գերեզմանին շուրջը եղած ապականութիւնները, չի կրցաւ ծածկել ներքին զգացումները « Մեր այս կարգի շիրիմները սակեթեղ բեհեղով ու թաւիչով կը ծածկենք » ըսաւ: Իմ քաջութիւնս լռելն էր:

Երրորդ վերածնութեան գլուխ գործոցներն են Անիի կաթողիկէն և Գագկաչէն Ս. Գրիգոր եկեղեցին որ բացուեցաւ 1905-906 թուականներուն՝ Պր. Ն. Մառի պեղումներով:

Գագկաչէն Ս. Գրիգորի գոյութիւնը պատմութեամբ ճանօթ էր, բայց տեղը անայտ էր, անոր տեղը ճշտելու պատիւը կը վկայերի Ա. Վրոյրի որ առաջին անգամ յայտարարած է 1902 թուականին:

Շատ ճիշտ էր գրած պատմագիրը անոր մասին: Չափով, ձևով ոչ մէկ տարբերութիւն չունի Զուարթնոցէն, միայն զարդարանքակներն են որ Զուարթնոցին օտար են. 99 դարու դուռ հայկական քանդակներով զարդարուած է յու-

(1) Հին կտակարան, Գ. Թագ. գլ. Ե. հմբ. 41-42:



ԱՅԻ Ս. Գրիգոր Եկեղեցին, Զուարթնոցի նմանութեամբ  
Գագիկ Ա.ի շինածը 1000 թուականին

նականի թեթև խառնուրդով: Այս կեկեղեցին պարզեց մեզի Գագիկ Ա.ի երկու մեթո թարձրութեամբ հսկայ արձանը, որն որ եթէ իր գեղարուեստականութեամբ չէ կարող մրցիլ հայկական ուրիշ զարգացած ճիւղերու հետ, սակայն կը սորվեցնէ մեզի Բագրատունի թագաւորներու յատուկ արեւելեան ճոխ տարազը բոլոր մանրամասնութեամբ:

Աղ դարու հայ հանձարի մէկ զարմանալի պտուղն է օրհասական վիճակի հասած և ընդ միշտ այցելութենէ զրկուած փոքրիկ Հովիւի կեկեղեցին Անիի պարիսպներէն դուրս: Արտա-

քուստ մանրանկարն է Զուարթնոցի և Գագիկ շէն Ս. Գրիգորի, իսկ ներքին կողմէն, ամբողջ կիսակլոր աղեղներու ծայրերը հաւաքուելով կեդրոնին վրայ, առանց սիւնի կախուած մնալուն նկարագիրը՝ ոսկի տաւերով պէտք է արձանագրել ճարտարապետութեան ընդհանուր պատմութեան մէջ. Հովիւի կեկեղեցին անգնահատելի գոհար է հայ յիշատակարաններու շարքին մէջ:

Երբորդ վերածնութիւնը մանուածոյներու անհունութեան շրջան մըն է որուն մէջ հայ արուեստագէտներ անընդհատ մրցել են մէկմէկ գերազանցելու համար: Ոչ միայն արուեստա-

գէտներու արժանապատուութիւնը պահանջեր է իրարմէ տարբեր նորութիւններ և գեղեցկութիւններ ստեղծել, այլ միւսոյն վարպետին կարծէք ներելի չէր անգամ մը շինածը վերատին կրկնել ուրիշ տեղ: Երբէք չեն համակերպած համաչափութիւն ըստած օրէնքի մը իրենց ճաշակի և պաշարի անհունութեան մէջ գտեր են գեղեցկութիւն և վայելչութիւն, և ահա այդ պատճառով է որ կը տեսնենք հայ յիշատակ պանի մը մէջ սիւներու թուով խոյակներու տեսակներ և պատուհաններու թուով շրջանակներու բազմութիւն: Բաւական չէր որ շրջանակ կամ պսակ առանձին տեսակ քանդակած են, անոնց իւրաքանչիւրին մէջ ալ քանդակներու տաննակ այլազանութիւններ խտացուցած են:

Պսակներու, շրջանակներու աղեղներու սահմանը շատ նեղ էին հայ արուեստագետին իր բեղմնաւոր տաղանդի պատկերը արտացոլացնելու համար, ան աւելի լայնարձակ տեղ գտեր է խաչքարերու վրայ, ուր դրոշմեր է անպարագրելի վեմնութիւն ու գեղեցկութիւն, Մինչև ո՛ւր պիտի սրանար Հայու գեղարուեստի հանձարը եթէ իր արամաղրութեան տակ ունենար Յունաստանի ընտիր մարմարիոնը փոխանակ հրարդխային կոշտ աւազաքարերու:

Ահա այս շրջանի մէջ ծաղկած հայ ճարտարապետութեան համար է որ, ճարտարապետական պատմարան մեծ գիտնական A. Choisy ոչ միայն կ'սքանչանայ անոր ինքնուրոյնութեան վրայ այլև քայլ առ քայլ կը հետեւի երկրագունտի վրայ անոր կատարած արշաւանքներուն.

Ընթերցողին աւելի մեծ վստահութիւն և հաճոյք պատճառելու համար այստեղ կը գնեմ մեծարգոյ հեղինակին սեփական քանի մը սողերը.

«Մ. Պարոյ և Հայաստանի ոճերուն մէջտեղ, բայց աւելի ճօշկի հայկական ոճին կողմուած կ'երեւին հարաւային Ռուսաստանի կրօնական յիշատակարանները (1):»

«Դանուբի հովտին մէջ, Սերպիա, Ռումանիա, Մօրաուիա, հայկական զարդաքանդակներու յառկանիչն է որ դրոշմուած է մինչև այսօր: Ռավանիքայի, Բրուչէվաքի, Շիւտաանիքայի եկեղեցիներու վրայ բիւզանդական հաստեամներու մէջ պառչածեցուցուած են հայկական մանուածոյնի: Քուրթէա ա'Երճէլի, Թէկովլիցի, Տրակովրայի եկեղեցիներուն վրայ չի կոյ զարդաքանդակ մը որ Հայաստանի չի պատկանի: Զարդաքանդակներու ճարտարապետութեան տեսակէտով Դանուբի ստորին հովիտը հայկական դաղթալայրի մը կը նմանի: Միակ ոճը որ չէ ընդունուած այնտեղ ձուածել աղեղն (ogive) է (2):»

/1) A. Choisy. Hist. de l'Arch. Tome. II page 61.  
(2) » » » » » »

«Միւսոյն ժամանակ երբ բեղմնաւորապէս ճշակուած արուեստի մը ազդեցութիւնը կը յառաջանար դէպ ի Կ. Պօլիս, միւսոյնը Պարսկաստանէն երկար արշաւանք մը կը կատարէ Եփրատի վրայով, կը տիրէ Տրապիզոնի նահանգին և կը հասնի Եւրոպա՝ Սև ծովի և անոր մէջ թափուլ գետերու միջոցաւ (1):»

«Պարսկական արուեստի տարերքը, որուն վաւարանը փոխադրուած էր Պաղատա, Հայաստանի մէջ ծնունդ տուեր է այն ինքնուրոյն արուեստին, որուն վրայ խօսեցանք (երես 21, 30 և 58): Այս հայկական արուեստը անցնելով Սև ծովը, կը տարածուի հարաւային Ռուսաստան և Դանուբի նահանգներուն մէջ Բօքքովայի, Քիէվի Ռուսոց, նաև Ռումանացոց, մանաւանդ Սերպիայի եկեղեցիներու ոճերը աւելի հայկական են քան բիւզանդական:»

«Այսպէսով բոլոր Սև ծովի եղերքը, Տրապիզոնէն մինչև Դանուբի աւազանը կապուած են Հայու սեփական արուեստին հետ և՛ հայկականով՝ աւանդական սասանականին:»

«Արիական գողափարները, հասնելով այս տեղերը, փոխանցման բաց ճանապարհներ ունէին իրենց առջև, որոնք Սև ծովի օժանդակ գետերն էին, Տօն, Տնիեսիք, Վօլկա: Այսօր իսկ Արիական վաճառականութեան մեծ զիճն է Վօլկան, որուն ձեռնարկութեան մեծ զիճն է Վօլկան, որուն ձեռնարկութեան է նօվիօրօսը: Տնիեսիքը կը հարդրակցի Վիթիլի հետ և կ'առաջնորդէ Սքանախալայի սահմաններուն: Եւ յիւրախ նորվէկիլայի, նոյնպէս Շուէտի մէջ սահական արուեստներու ներկայութիւնը աւելի զգալի է քան Ռուսիայի:»

«Ազդեցութիւնը կանգ չէ առած Սքանախալայի մէջ. այս գեղաքանդակներու ոճը նորթճանի լատերու միջոցաւ վերատին իջեր է ամբողջ ովկիանոսի երկարութեամբ վերածնութիւն տարու համար Անգլիայի, Իրլանտայի և նորմանտիայի ռոմանական զարդաքանդակներուն:»

«Աերջապէս Իրլանտայի մէջ դրժածական զարդաքանդակներ նմանութիւններ են հայկականի, որոնք թէև վաղուց նկատուած էին, սակայն հեռուոր Ասիայի ներգործութեանն էին վերագրուած (2):»


Երկու դար հազիւ կեանք ունեցեր է հայ ճարտարապետութեան այս փայլուն շրջանը:

(1), (2) A. Choisy, Hist. de l'arch. Tome II page 84-86.

Ազիալանի արշաւանքը (1064) ամէն բան հիմնայաւորակ կործանել է բովանդակ Հայաստանի մէջ. մտաւորապէս 120 տարի Հայերը չեն կարողացել գեղարուեստի կամ ճարտարապետութեան վրայ մտածել. մարդ ի զուր կը փնտռէ այս 120 տարուան մէջ նոր շինութիւն մը կամ

արձանագրութիւն մը: Անիի կաթողիկէն այս ժամանակ 60 տարի իբրև մզկիթ ծառայեցնելէն զատ քանի մը արձանագրութիւններէ ալ կ'իմանանք որ շատ մը եկեղեցիներ բոլորովին քանդել են:

✦ Բռնակալութեան ոյժը 129 դարու կէսէն



Հռոմոսի վանքի գաւիթի առաստաղներէն մէկը, շինուած ժ.Ա. դարու

յետոյ սկսել է կամաց կամաց թուլանալ, որով ժողովուրդի սրտին մէջ սկսել է աակաւզարթնել գեղարուեստի սէրը. 1198 թուականին երբ երկրի վարչութիւնը Վրաստանի հովանաւորութեան տակ Զաքարէ սպասաւարի ձեռքն էր անցել, անմիջապէս անհաւատալի արագութեամբ ամբողջ երկիրը ծածկուել է նոր ոճի նոր գեղեցկութիւններով զարդարուած

անթիւ յիշատակարաններով: Այս շրջանին մէջ ոչ միայն շինուել են տաճարներ, այլև բերդեր, կամուրջներ, ձեռագործ ճանապարհներ, և այլ բազմաթիւ հասարակական շինութիւններ: Անիի պարիսպներու այսօրուան կանգուն բարձրաբերձ աշտարակներէն շատերը 139 դարու կէսէն առաջ շինուած են:

Զաքարէի գահակալութեան հետ միաժամա-

նակ յանկարծական փայլով երեւան եկող այս նոր արուեստն է հայ ճարտարապետութեանն չորրորդ վերածնութիւնը, որուն մէջ դարձեալ կը տեսնենք որ աւանդական հին ոճը իր պատուաւոր տեղը ունի, բայց այլևս ծանրաբեռնըւած է արտաքոյ կարգի նորաստեղծ քանդակագործութիւններով: Այս շրջանին կը պատկանին գոյնզգոյն մանր ու խոշոր քարերով նախշուն առաստաղները: Երկրաչափական գծերով զարդաքանդակներու մէջ խառնած են ձեռքի ճարտարութեամբ գծուած տերեւներ, ծաղիկներ, ցօղուններ, հիւսուած՝ զանազան վայրի և ընտանի անասուններու ու բազմատեսակ թռչուններու շուրջը: Փոխուեր են մեծ մասամբ խոշոր սիւներու ձեւերը և անոնց քանդակագործութեանց ոճերը: Սկիզբէս զարգացեր են քանդակապարբ մոզայիքներ (գոյնզգոյն հրաբլխային քարերով շինուած) սթալաքթիթներ կամարներու կամ աղեղներու բազմատեսակ խաչաձեւումներ: Ահա այս ոճերն են որ ոմանք արաբական կամ սելճուքեան կը համարին, առանց համոզիչ փաստերու վրայ հիմնելու իրենց ենթադրութիւնները: Բայց որովհետեւ այդ կարծիքի մեծ մասամբ հերքումը ուսումնասիրութեան ընդարձակ նիւթ է և առանձին յօդուածներ են հարկաւոր այդ մասին իմ առանձին տեսութիւնս պարզելու համար, հետեւաբար, ուրիշ յարմար առիթի թողելով՝ այստեղ պիտի բաւականանամ քանի մը կարեւոր բացատրութիւններով:

Անուբանալի է որ հայ ճարտարապետութեան այս վերջին վերածնութիւնը զուտ արեւելեան է, անոր մէջ ո՛չ յունական կայ, ո՛չ հռոմէական. միւսնոյն ատեն ունի իր մէջ բաւական խառնուրդ, բայց այդ խառնուրդը ո՛չ արաբական է և ո՛չ սելճուքեան, այլ պարսկականի այն ծիւղը որ ծաղկեցաւ արաբական տիրապետութեան փամանակ, որուն զարգացման ուսումնասիրութեան եթէ մտնենք, պիտի տեսնենք որ այդ շրջանի պարսկական արուեստն ալ նախընթաց դարերու Հայաստանի ճարտարապետութեան զգալի չափով յետագարձ աղբեցութեան տակ զարգացած է, բայց այս մասին ուրիշ անգամ:

Այս շրջանի հայ ճարտարապետութեան մէջ է որ A. Choisyի կարծիքը կ'արգարանայ արմատը Պաղտատի մէջ տեսնելու մասին (1), եթէ ոչ Յէն մինչև 12դ դարու հայ ճարտարապետութեան մէջ քաղզէականի, ասորականի և հին սասանականի հեռաւոր աղբեցութիւններ կան թէև, սակայն անոնք ալ արդէն վաղուց օտարացած և անզգալի դարձած են կ'դարէն սկսած անընդհատ մշակուելով:

Միջին դարերու մէջ ծաղկող ասիական արուեստները իրենց բազմակողմանի զարգացման պատճառաւ գիտական ուսումնասիրութեանց մէջ յաճախ շփոթուած են ոճերու յատկութեան տեսակէտով, ասոր ալ պատճառը ես կը կարծեմ որ

(1) Տեսնել էջ 2, սխալակ Բ. ծանօթ. 2 :

համեմատաբար շատ քիչ քննուած ըլլալն է: Եւ որովհետեւ ընդհանրապէս Արաբական տիրապետութեան սահմաններուն տակ կը գտնուէին յաճախ այդ արուեստներու վառարանները, կարճ խօսքով Արաբներու նուիրեր են այդ ամէն զարգացման ուժն ու տաղանդը, որոնք բոլորովին զուրկ էին այդ առաւելութենէն: Այսպէս էր նաև ժամանակ մը բիւզանդեան ոճը. քիչ էր մնացել որ ինքնուրոյն համաշխարհային արուեստի հոչակ ստանար՝ եթէ վերջին տարիներու դիտական լուրջ քննութիւնները անոր թեւաբարութիւններուն սահման չի դնէին և բազազրութեան տարեբար չի գտէին:

Այս յօդուածիս ընթացքին մէջ մասնաւոր կերպով տեսնուեցաւ թէ ինչպէս հայ ճարտարապետութիւնը ինկած է ճիշտ այն թուականներուն երբ Արաբը, Սելճուքը կամ Թաթարը ողողելով երկիրը քանդեր ու աւերեց են:

Այս թուականներուն շատ զարմանալի երևւոյթի մը կը հանդիպինք Հայաստանէն դուրս, մահմետական երկիրներու արուեստները ուսումնասիրելով: Պարզապէս հայ ճարտարապետութիւնը Հայաստանէն դուրս սկսած է ծաղկիլ, խառնուելով նոյն տեղերու արուեստներու հետ, այն ժամանակ երբ Հայաստանի մէջ արդէն դարձած է:

Վերը տեսանք որ 5դ դարուն Հայաստանի մէջ սովորական էին պայտաձև աղեղները և կամարները, 7րդ դարուն ծագում աւեր էին նաև ogive ըսուած ձևերն ալ (1), բայց չէին վերջացած պայտաձևները, գրեթէ մինչև հայ ճարտարապետութեան վերջին անկումը գործածուած կը տեսնենք այդ ոճը, թէև շատ ցանցառ: 8րդ դարուն արդէն Արաբներ Հայաստանը բոլորովին քանդեր էին, այլ ևս ճարտարապետութիւն գոյութիւն չունէր մինչև 9րդ դարու վերջերուն մօտ: Եւ ահա այս աւերման շրջանին, 8-9րդ դարերուն մէջտեղ Սիւրիոյ մէջ կը գտնենք պայտաձև աղեղներու ոճը հայկական ուրիշ տեսքային երով միասին. 10րդ դարու վերջերն ալ Սպանիայի մէջ երևան կուգայ Բորտովոյի մկիթի վրայ: Այստեղ ոչ միայն կը տեսնենք որ 5րդ դարէն առաջ սովորական եղող հայ ոճը

(1) Ogive աղեղներու մասին դարձեալ սխալ կարծիք կազմեր է A. Choisy (His. de l'arch. T. II. page 21) անուուց 7րդ դարու հայ յիւսիսապետներու մասին ժամանակագրական կամ ցեղագրական նիւս տեղեկութիւն չունենալուն պատճառաւ. արդեմէն ոչ քէ առաջին անգամ Անիի կաթողիկէին մէջ երեցած է ogive աղեղը 1010 թուին, այլ դեռ 7րդ դարուն Ալամանի Ս. Անանիայ, Բարաանի Ս. Թեոդորոս եւ ուրիշ կարգ մը ժամանակակից եկեղեցիներու մէջ աղեղները առանց բացառութեան ogive են, միայն Մրենի եկեղեցիին աղեղներն են որ քէն դարձեալ բեկում ունին կասարին վրայ, սակայն այնքան քիչ որ անզգալի է եւ առաջին նայումով ուղիղ կիսաբարձրակի սպառուրդիւնը կը բողոն:

մինչև Քորտովա հասեր է, այլ և կը պարզուի թէ ի՞նչ շաւղով անցեր է մինչև Սպանիա հասնիլը:

Ոմանք կը կարծեն թէ՛ (անշուշտ Ծրդ դարու հայ ճարտարապետութեան ծանօթ չեղողներ) Հնդկաստանէն դացած ըլլայ մինչև Սպանիա. այս կարծիքին որչափ անհաւանական ըլլալը ստուգելու համար, ես կ'առաջարկեմ միայն մէկ բան 5 րդ դարէն մինչև 10րդ դարու պատմութիւնը բաղդաստի աշխարհագրական քարտէզի հետ:

Միայն 5 և 6րդ դարերու հայ ճարտարապետութիւնը չէ որ դէպ ի հարաւ և հարաւ-արեւմուտք տարածուեր է, այլ ամէն դարու մէջ ծաղկող հայ ճարտարապետութիւններ միշտ իրենց ներգործութիւնը ունեցեր են Հայաստանէն դուրս մահմետական տիրապետութեան ներքեւ գտնուած երկիրներու մէջ, այն ալ Հայաստանի մէջ ինկած պահուն. բնականաբար այս երևոյթը պէտք է բացատրել գերեզմարութեամբ:

Երբ Հայաստանի մէջ 11րդ դարու վերջին քառորդին ճարտարապետութիւնը վերջին շունչը տալու վրայ էր, յանկարծ Գոնիայի մէջ կ'երևայ Ալայէտտի նուազաւոր մզկիթը, որուն վրայի զարդարանդակները մեծ մասամբ հայկական ըլլալէն զատ՝ թէ՛ մզկիթը և թէ՛ ներսի ամպիոնը հայկական ութանկիւնի կաթողիկէ կըմբէթներով պսակուած կը տեսնենք: Ամպիոնի վրայ եղած արձանագրութիւն մը ցոյց կուտայ որ ամպիոնը, հաւանականաբար նաև մզկիթը շինած է Ախլաթցի դաւանաւորին հայ մը (1158 թուին) Մէքքէէն վերագործին (1): Պէտք չէ մոռնալ որ Վան, Ախլաթ, Արձէշ և Վանայ ծովի շուրջը ուրիշ քանի մը քաղաքներ հայ ճարտարապետութեան մեծ վառարաններ եղած են միշտ. ամէն տեսակ ոճեր, ամենէն առաջ այս տեղերը ծագում առեր և տարածուեր են ամէն կողմ:

Դժուար է առ այժմ ամէն շրջանի համար բազմութիւն օրինակներ բերել արտաքին ներգործութիւններու մասին, որոնք շատ առատ են, օրինակ մ'ալ վերջին վերածնութեան փոխանցումներէն բերելով կը բաւականանամ:

Հայ ճարտարապետութեան չորրորդ վերածնութիւնը որ մասնաւորապէս զարգաբանութեան տեսակէտով ամենէն հարուստ էր, տեղութեան տեսակէտով ամենէն զժբաղդը եղաւ, 13րդ դարու կէսէն յետոյ արդէն սկսած է կամաց կամաց իր փայլը կորսնցնել: Այս անգամ թաթարներու արշաւանքը այնպէս քանդեց երկիրը որ այլևս չի վերականգնեցաւ ընդմիշտ. Ժողովուրդը գաղթականութեան մէջ փնտուեց իր խաղաղութիւնը միանգամայն երկիրը թողնելով թշնամիին ձեռքը:

Բայց ի՞նչ եղաւ երկրին ճակատագիրը, թող

պատասխանեն մահմետական տարրին մէջ գեղարուեստի սէր, տաղանդ և քաղաքակրթութեան ընդունակութիւն տեսնողներ. պատասխանի կարօտ չէ իրականութիւնը. առանց Հայու իրենք ալ չապրեցան Հայու արիւնով լուացած երկիրներուն մէջ. թշուառացած, դժբաղդացած, անօթի գայլերու պէս քաշուեցան ուրիշ տեղեր իրենց շահատակութիւնները շարունակելու համար, թողելով երկիրը անտէր ու ամայի:

Ահա այս վերջին արշաւանքներէն յետոյ Հայաստանէն դուրս ուրիշ երկիրներու մէջ կը գտնենք դարձեալ մաքուր հայկական ոճերով կանգնուած մահմետական յիշատակարաններ:

Գոնիայի մէջ 1666 միւսարէյի մէսրէսէ ըսուած շէնքը կանգնուած է 1251 թուականին, որուն վրայ դարձեալ արձանագրուած է ճարտարապետին անունը, դաւանաւորին հայ մը, Գալուստ անունով (1): Եստ գարմանալի երևոյթ է այս դարուն մէջ մանաւանդ դաւանաւոր Հայերուն անունին արձանագրելը իրենց կանգնած շէնքերուն վրայ, մինչդեռ Հայաստանի մէջ հայ ճարտարապետներուն այդ սովորութիւնը ամենեւին չտեսնուիր: Կարմիր վանքը (Ղօշավանք) բացառութիւն է, որուն արձանագրութեան մէջ յիշատակուած է շէնքը կանգնող Սամէհան ճարտարապետին անունը:

Իմ հետազօտած սահմաններու մէջ կ'երևի որ մինչև 14րդ դարու կէսը հազիւ թէ կարողացեր են Հայերը իրենց տնտեսական և քաղաքական գոյութիւնը պահել: Մինչև այս ժամանակ հատ հատ կը պատահինք փոքրիկ մատուռներու, կամբարաններու շինութեանց, իսկ 14րդ դարու կէսէն յետոյ ամէն բան անյայտութեան մէջ թաղուած է, ճարտարապետական կամ գեղարուեստական ոչ մէկ բան կարելի չէ գտնել. ասկէ անդին երկրէն դուրս գաղթականութեան չուած ճանապարհներու վրայ պէտք է փնտուել հայ գեղարուեստի շարունակութիւնը կամ վերջին մնացորդները:

\*\*

Դ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԺԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹԻՒՆ

Հին Հայերու ներքին կեանքին և անոնց ապրելու պայմաններուն ծանօթանալու համար առ այժմ մեր աղքատիկ պատմագրութեանց դիմելէ զատ ուրիշ միջոց չունինք: Բայց որովհետև տե նորագոյն քննադատական ուղղութիւնը, առանց իրական փաստերու պատմագրական տեղեկութիւնները իբրև ճշմարտութիւն ընդունելու համար շատ դժուարահաճ է, այդ պատճառով ալ մենք հազուադէպ պարագաներու մէջ պատմութեան վրայ յոյս դնելով՝ պիտի դիմենք մաս-

1) G. Migeon, Manuel d'art musulman, tome II, page 120.

(1) H. Saladin, Manuel d'art musulman tome I, Page 456.

նաև որ ուսումնասիրութիւններու և պեղումներու միջոցաւ ձեռք բերուած արդիւնքներուն: Դրժբազդաբար սակայն, ո՛չ ընդարձակ չափով պեղումներ եղած են մինչև հիմա և ո՛չ ալ այդ կարգի հետազոտութիւններ. այդ պատճառով ալ շատ քիչ նիւթ պիտի ունենանք այս ճիւղին վրայ խօսելու:


Ի հարկէ կան որոշ չափով տրամաբանական դատողութիւններ, որոնք մեզ կը պարտաւորեն հաւատալ թէ, երբ ազգ մը իր հտեր թողեր է գեղարուեստական անթիւ կոթողներ, հոգ չէ թէ անոնք ըլլան միայն կրօնական, պէտք էր որ անորոշման ան իր ներքին կեանքին մէջ ալ ունենար նոյն վայելչասիրութեան ճաշակը:

Կովկասի Հայութիւնը վերջին 3-5 տարիներու մէջ նախանձելի մեծ քայլ մը առաւ, որով անհամեմատ բարձր կանգնեցաւ քան թուրքահայր: Արժանաւորապէս գիտցաւ օգտուիլ մեծունուն հայագէտ գիտնական Պ. Ն. Մառի նպաստաւոր տրամադրութիւններէն, որուն սրտին շատ մօտ էր արեւելեան ազգաց պատմութիւնն ու գիտութիւնը, և ամէն տարի գրաւ անոր արամագրութեան առկ պատկառելի գումարներ, Անիի և շրջակայից մէջ պեղումներ կատարելու համար:

Յարգելի գիտնականը կովկասահայու սպասածէն շատ աւելի օգտակար եղաւ իր բազմաչարչար և միանգամայն բարեխիղճ աշխատութիւններով. ոչ միայն յաճախ անտանելի պայմաններու մէջ անվհատ շարունակեց իր պեղումները, այլ և կատարեալ խնամքով հաւաքեց պեղումներէ հանուած բոլոր առարկաները ու պետեղեց նորակառոյց թանգարաններու մէջ: Անոր միակ ձեռնհաս գործունէութեան կը պարտինք այսօրուան Անիի մէջ պետական բարձր հովանաւորութեամբ ապահովուած երկու թանգարաններու գոյութիւնը, որոնց մէկը զուտ ճարտարապետական բաժինը կը կազմէ:

Այժմէն իսկ ուսումնասիրութեան մեծ պաշար հաւաքուած է այդ երկու թաղարաններուն մէջ, որոնք մեծ լուսաբանութիւններ պիտի տան հետու և մօտ անցեալներու, բայց մասնաւորապէս ներքին կեանքի և ընտանեկան պայմաններու մասին ո՞րչափ հեռաւոր պատկերներ կարող են տալ այդ նիւթերը, այդ մասին հաստատ բան բերլ դժուար է:

Անին թէ և Ծրդ դարուն արդէն բազմամարդ էր, սակայն քանի որ անոր բազմամարդ վիճակը



Իրիգոր Էպիսկոպոս Տուսեռոգիի խաչքար Սանահինի մէջ (գործ Ժ. Գարու)

կենդանի էր մինչև 14րդ դարու կէսը՝ այդ պատճառով ալ համեմատաբար նոր քաղաք կը համարուի:

Միշտ փորձով տեսնուած է որ դարերու արկածալից հոսանքներուն ամենէն շատ գիմազրոդները եղած են կրօնական յիշատակարանները: Քաղաքային շինութիւններ ամէն ազգի մէջ ալ շատ քիչ պահուած են. այս վերջիններս համեմատաբար աւելի թոյլ շինուելէն զատ, գաղանային քմահաճոյքներու ենթարկուելու համար ալ խղճահարութեան տախթ չէին տար:

Շէն քաղաքներու մէջ ալ քաղաքային շինութիւններու ճակատագիրը տարբեր է կրօնականէն: Անոնք միշտ ենթակայ են փոփոխուելու և վերաշինուելու՝ քանի զեւ քաղաքը կենդանի է. այդ պարզ պատճառով ալ այսօր շէն քաղաքներու մէջ անփոփոխ պահուած 150 տարուան հնութիւն ունեցող շէնք դժուար է գտնել:


Արդ քանի որ պեղումներ միայն Անիի մէջ

կատարուած են և անկէ պիտի կըր-  
նանք սպասել հին Հայոց բնակա-  
րաններուն և քաղաքային շինու-  
թիւններուն մասին ստոյգ տեղեկու-  
թիւններ, և քանի որ քաղաքը  
կենդանի էր մինչև 14րդ դարու  
կէսը, դժուար թէ գտնուի այնտեղ  
ընտանեկան կեանքի, քաղաքային  
շինութիւններու, կահաւորումներու,  
սպիտուտի և վայելքի վերաբերեալ  
այնպիսի նիւթեր որոնց հնութիւնը  
13րդ դարէն անդին անցնի: Մանա-  
ւանդ երբ ի նկատի ունենանք որ  
քաղաքի բնակչութիւնը կանոնաւոր  
կերպով գաղթեր և իր ամէն ունե-  
ցածը հեան է տարիս, այն ատեն  
բոլորովին յուսահատական եզրակա-  
ցութեան կը համարուի: Աւանդու-  
թիւն կայ թէ բաղմաթիւ գեղա-  
քանդակ խաչքարեր ալ հետեւինին  
տանելէ զատ եկեղեցիներու զաներն  
ալ հաներ տարեր են:

Գաղթականութենէն յետոյ,  
զատարկ մնացած աներն ալ նախկին  
վիճակին մէջ չեն մնացեր. ժամա-  
նակաւորապէս Հայերուն տեղը ըըն-  
նող Պարսիկներ, Թաթարներ և այլ  
և այլ թափառական ցեղեր քար  
քարի վրայ չեն թողած. այսպէսով  
ամէն բան ապահանուած, այրան-  
գակուած ու ողորմելի վիճակի հա-  
սած է այսօր: Ուրեմն Անիի մէջ ալ,  
ամենախոր հնութիւն դարձեալ ճար-  
տարապետական մասն է, այն ալ  
միայն եկեղեցիներ ու բերդեր են  
յուսալի պարագայ մը կայ այն ալ  
վերջին 1319 թուականին պատահած  
երկրաշարժն է, որուն պատճառած  
վլատակները եթէ անձեռնմխելի  
մնացած են, այն տեղերէն միայն  
կարող ենք օգտուել, ուր հաւանա-  
կանօրէն կը գտնուին որոշ չափով  
յատակագիծը ամբողջ պահուած  
տներ, ապարանքներ, նաև թերևս  
կահկարասիներ, թէև այս ալ այն-  
քան յոյս չի ներշնչեր ինձի, որով-  
հետև ոչ միայն շէնքերը վերջին  
ժամանակներ քանդեր և սրբատաշ  
քարերը մինչև Կարս տարեր են  
ծախելու ալ եւ գերեզմաններն  
անգամ խուզարկութենէ ազատ չեն  
մնացած:

Բագրատունեաց արքունիքի  
պեղումները շատ մեծ յուսաբանու-  
թիւններ տուին այս մասին. այնտեղ  
պարզ տեսնուեցաւ երկու տարբեր  
ցեղերու հոգեկան վճիտ նկարագիրը, մէկը զէպ ի զարգացում և քաղաքակրթութիւն ձգտող,  
միւսը խաւարի, ագիտութեան և պարզապէս գաղանութեան մէջ հաճոյք զգացող:

Աւանձին պարխպով շրջապատուած արքունիքը մտաւորապէս 40,000 քառ. մէթր տարածու-  
թիւն ունի: Այս տարածութեան մէջ 3,500 քառ. մէթր տեղ գրաւած է միմիայն ապարանքը:  
Կան եօթը հատ եկեղեցի, մտաուռ և ուրիշ շատ մը արքունի պէտքերու յատուկ առանձին շինու-  
թիւններ, որոնց հետքը հազիւ կ'երեւայ այսօր բաց ի եկեղեցիներէն:



Քուրդ իւխանի և Խորիւանի խաչքարը  
Սաւաննի վանքին մէջ (գործ Ժ. Գարու)

Ապարանքը առանձնապէս ունեցեր է մէկ միջակ և մէկ փոքր չափով մատուռներ, և բաց ի բազմաթիւ սենեակներէ կան նաև բազմաթիւ, ջրամբար և աղբիւրներ, որոնց ջրաբաշխական երկաթէ և կաւէ խողովակները գտնուեցան ջրամբարի մօտ:

Այս տնապին ապարանքին մէջ նախնական ձևով ոչինչ չի գտնուեցաւ բաց ի քանի մը պատերէ որոնք շնորհիւ իրենց հաստատուն շինուածքին կանգուն մնացեր էին:

Աւելի քան 20 մէթր երկայնութեամբ դահլիճ մը, որուն շինութեան ոճէն յայտնի էր որ Բագրատունի թագաւորներու ժամանակակից շինութիւն է, ձոխ որմասիւներով և կամարակապ առաստաղներով վրան ծածկուած, վայրենի ձևաքեր մէկ մասը քանդեր, միւս մնացածն ալ ցետաշաղախ կոշտ ու կոպիտ պատերով մանր սենեակներու բաժներ են, սենեակներուն մէկուն մէջ ալ թոնիր թողեր են հաց և կերակուր եփելու համար: Ուրիշ աւելի ձոխ և ընդարձակ դահլիճ մը, որուն մէկ մասը անջատ սիւներով թևերու բաժնուած, գաճէ ձուլուած ընտիր քանդակներով առաստաղները զարդարուած, բոլոր քանդակազարդութիւններ մաքուր ոսկեփօծուած, միւսոյն ողբալի վիճակին հասցուցած են, դահլիճին մէջ ալ ամենէն պատուաւոր տեղը թոնիր թողուած էր:

Այս կսկծալի աւերումները հաւանականաբար սկսեր են 17րդ դարուն մէջ: Անկէց առաջ ապարանքին տիրապետող խաներուն համար անշուշտ հաճելի էր այդ դահլիճներուն փառքը վայելել. բայց ինչպէս երեցաւ, անոնք ալ ամբողջ ապարանքը չեն կարողացած պահպանել, այդ երկու դահլիճները որոշ ժամանակ պահելով՝ մնացած մասերը քանդեր փոխեր, գրեթէ արտոններու և մարագներու վերածեր են:

Ջրամբարը շատ կանուխ անգործածելի եղած է, թերևս Բագրատունիներու անկումէն անմիջապէս յետոյ: Պեղման ժամանակ երեցաւ որ ջրամբարին գտնուած տեղը առաջուց ալ եղած է մեծ դահլիճ չորս անջատ ձոխ սիւներով կամարակապ առաստաղով. խաներու օրով, երբ ջրամբարը անգործածելի եղած է, մէջը հողով լեցուցեր են և յատակն ալ բարձրացուցեր. այնպէս որ հին դահլիճին չորս սիւնախարխիսները առանց տեղէն շարժուելու, ծածկուեր են հողին տակ, վրայէն ուրիշ հասարակ սիւներով դարձեալ շիներ են դահլիճ մը, բայց փայտէ ծածքով, առաստաղն ալ նկարագրուած: Այս դահլիճին հետ միաժամանակ նկարագրուած է գաճէ ձուլուած քանդակազարդ առաստաղով, մեծ դահլիճի պատերն ալ ուր գտնուեցան նաև դեղանկար արարելէն զուրած հատուածներ:

Ապարանքը ի սկզբանէ անտի երկու մասի բաժնուած է. բացթողալ մատուորապէս վեց մէթր անցքով մը, որուն երկու ծայրերուն վրայ են արտաքին մտից դռները. այս անցքին կամ նախագաւթին վրայ կը բացուին երկու կողմի բաժանմունքները մտնելու դռները: Ապարանքին

յատուկ երկու մատուռները զրաւն մուտք չեն ունեցեր, սակէց յայտնի է որ միմիայն ապարանքի բնակչ լճեան յատուկ էին այդ երկու մատուռները:

Գաճով զարդարանքները չեն կարող հին ըլլալ քան 13րդ դարը, իսկ նկարագրուածները աւելի ուշ ժամանակի գործեր են: Նմանապէս բաղնիքը, ոչ կանուխ քան 13րդ դար. աւելի կանուխ շինութիւններէն մնացած են դահլիճներու պատերու մնացորդները և արևմտեան կողմի մտից դուռը, որոնք կարելի է տանիլ մինչև 10րդ դար: Մատուռները շատ աւելի հին են, թերևս մինչև 8րդ դարու շէնք. այս պարագան ենթադրել կուտայ որ նախ քան Անին մայրաքաղաքի փոխարկուելը այդ մատուռները գոյութիւն ունէին:

Որչափ որ ապարանքի տարածութիւնը ընդարձակ, բաժանումները շատ, սակայն դարձեալ դժուար է գաղափար կազմել նախնական ճիշտ ձևի մասին, այսօրուան վիճակը գռեհիկ գոսակարգի մը այնտեղ բնակիչը ենթադրել կուտայ, ուստի մէկ խօսքով պիտի կզրակացնեմ որ ապարանքի պեղումներն ալ գոնէ 14րդ դարէն առաջ քաղաքային ճարտարապետութեան և ընտանեկան յարկերու կազմակերպութեան մասին որոշ արդիւնք չի տուին: Չի մտնամ ըսելու որ, Ծաղկաձորի վրայ թիւրիմացութեամբ մինչև այժմ պալատ անուանուած շինութիւնը ցոյց կուտայ որ երեք-չորս յարկանի շինութիւններ անտփոր չէին. այս շէնքը թէև պալատ չէ, սակայն ամենայն հաւանականութեամբ հասարակական մեծ շինութիւն է 13րդ դարուն կանգնուած, մէկ մասը երեք յարկանի իսկ միւս մասն ալ չորս յարկանի է: Բայց այս միակ երևոյթով ալ ընդհանուրի մասին դատել այնքան ալ գուցէ ուղիւ չի համարուի, պէտք է սպասել նոր պեղումներու, այն տեղերու վրայ ուր արդէն մեծ բաներ սպասելի են:

Անիի մէջ գտնուած առարկաներ, բաց ի ճարտարապետական բաժինէն, իմ կարծիքով չեն անցնիր 13րդ դարէն անդին, սակայն մասամբ ենթադրելով իրրև շարունակութիւն աւելի հին կեանքի և սովորութիւններու, գուցէ քիչ մ'ալ հեռու տանի անոնց ուսումնասիրութիւնը, բայց իրրև վերջին շրջանի նիւթեր ալ ունին իրենց շատ հետաքրքրական կողմերը, որոնց մասին կ'անդրադառնամ ուրիշ անգամ առանձին յօդուածով մը:

Թ. ԹՕՐԱՄԱՆԵԱՆ

Ալեքսանդրոպոլ, Մայիս 1910

# ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

## Ի ԱՄԱԶԱՆԻ ԳԻՇԵՐ

Բաճազանի տամնըչորտերող օրն է, կիրակի: Ալէճաղբի Հայ-գիւղն եմ: Փոթորկալի ու անձրեւաբեր ամպեր, կէսօրին ձօռ կը փարատին ու կը հեռանան. անձրեւը կը դադրի. երկինք կը պարզուի, բայց հեռուն, հարկոնին եզրը, սպառնալից սեւ ամպերու կուռ գանդուած ճը կ'երկարի գօտի պէս. ամէն կողմ ցելս, խոնաւութիւն, ամառութիւն: Իրիկուան ժամը տամնին միայնակ ճամբայ կ'ելլամ Պոլիս վերադառնալու համար հեախոտն: Եթէ երկինք պայծառ մնայ այդպէս, հիանալի լուսին ճը պիտի հովանաւորէ զիս. — եթէ կարելի է այսպէս ընել, — իր արձաթ շքեղ շողերովը, և այդ՝ որ առաջին անգամ կը պատահի ինձի, նման պարագաներու մէջ, ինքնին կը բաւէ ճուղցնել աարու ուրիշ ամէն անպատեհութիւններ:

Անտառը թաց է համակ. թաց են ծառերը, տերեւները, գետնները. լուռ է ան ու ամալի ու տխուր. միայն՝ հեռաւոր լեռներէ եկած անձրեւի ջուրեր ուղիւսրէն կը հասին դեռ ու կը խոխոջեն. ձմեռնային պաղութեան ճը սարսուռը կ'անցնի թըրջած ու գունատած տերեւներուն վրայէն. իրիկնաճուրի կանխաճառ վիճակ ճը, աւելի կը արամեցնէ ձմեռնային սարսուռը որ բնաւ չի պայծառանար այդ հոծ տերեւներուն տակ և ուր՝ թռչուններուն դայլային ալ դադրած է, միջասնեբու բղղկնին հեռ, ինչ որ անտառին ճէջ տեւականացող անհամար ու անելեւայթ գոյգթիւններու երգն ու կեանքի միակ յայտարար նշանն է:

Կէս ժամէն խճուղիին վրայ եմ: Աջ ու ձախ կ'անցնի Մուլթան-Չիֆթլիկի ու Սարը-Բատը գիւղերէն և կը քալեմ դէպ ի Մուտուրլու: Աճուխի պարապ սայլեր կ'անցնին, վերադառնալով քաղաքէն, սայլեր՝ լծուած գոմէշներու գորս կը վարեն ձերուկներ, երիտասարդներ, տղեկներ. երեք սերունդներ ամբողջ, բոլիկ, աղքատ, միամիտ: Կը բարեւեն: Ժամը տամնըմէկուկէսին կ'անցնի Մուտուրլուէն ալ: Արեւը կ'անհետանայ հարկոնին արեւմտեան կողմը դիւրամ սեւ ամպերու ետին. լուսինն ալ անշուշտ ծագած է, բայց՝ ղիմակաւորուած կը մնայ դեռ, արեւելեան կողմի հեռաւոր ամպերուն շարքին տակ: Կ'սկսի ձմեռնային թաց է ու ցելտա: Հովիւներ կը վերադառնան գուարներով, հօտերով, որոնց

հեռ ամբողջ գանազան գանգակահարութեան ճը խուլ բայց հաճելի աններգաշնակութիւնը կը քալէ ու կ'շտապէ դէպի գիւղ, դէպի Մուտուրլու: Աւելի անդին, ճամբուն եզրը, պարապ գետնի ճը վրայ, յիսունի չափ աճուխի պարապ սայլեր կան քաշուած. գոմէշներ արձակուած, ճարդիկ ու տղաք հաւաքուած՝ կրակի ճը առջեւ, սպասելով ճոճը աւելու պահուն, կը խօսակցին ու կը խօսակցին: Ճշմարիտ պղտիկ կարուան ճը: Կը քալեմ: Ճամբան, մենաւոր գիւղացիներ, աղքատ ուղեւորներ, մէյմէկ սև հացեր՝ թեւերնուն տակ, կը դիմաւորեն զիս, կը բարեւեն ու ժամը կը հարցնեն: Ճամբերկուքին քանի ճը վայրկեան միայն կայ: Ու կ'երթան: Ու յանկարծ, խուլ սրտուած ճը ձմեռնային կ'աղմկէ, երկարելով մինչեւ ճոտաւոր լեռները ու արձագանգելով անոնցմէ. կարճեռ այդ լեռներուն ետին դարանակալ սև ամպերն են որ կ'սպառնան ու կը գոռան անհամբեր, բունի զսպուած ու կատաղած: Թնդանօթի ճայնն է: Ուրիշ աղքատ գիւղացիներ կուզան ու կ'անցնին, որոնք հիմա անյագ կը խաճնեն ու կուլ կուտան, իրենց թեւի տակի սև օթեկ հացը, չոր հաց միայն ու միայն, այնքան տխուրով ու այնքան համով. ճարդիկը իրուցնէ ճոճ են, անկեղծ ու սրտանց հաւատացող են, առանց ունենալու այն համեղ խորտիկներն ու բազմադիմի անուշեղէնները ճորս առատօրէն իրենց տրամադրութեան տակ ունեցողները յաճախ ճոճ ալ չեն: Բիջ ճը եւս առաջ և ահա ձերուկ, շալվարաւոր, խեղճ գիւղացի ճը, գետնի՝ թացին վրայ լաթ ճը փուած, ձեռքերը՝ աչքերուն եզրը պահպանակած, արեւեք դարձած կը ճնրադրէ ու կ'երկրպագէ գետնածած, բաց օդին ճէջ, բնութեան տաճարին առջև, երկինքը ունենալով իրեն գծբէթ, ձմեռնային իր աղօթքներուն ասպարէզ և ամպերը՝ իրեն վրայ: Միլլէի սքանչելի Անճէլուան է ան կարճեռ՝ իրաճացած ու Արեւիքի խորհրդաւոր ճէկ տեսնակարին ճէջը ալ աւելի վսեմացած: Կէս ճոճ է: Հիանալի է: Մացառուաքի ճը ետին կեցած, հճայուած կը դիտեմ. ամպերու ետին կանխաւ ընդ նշմարուող թեթև արձաթաւորուած ճը, հեռագետէ կ'սկսի շիկնիլ ու բոցավառիլ, մինչեւ որ մէկէն լուսնի տարապայծանօրէն ընդլայնած ու դեղնած բիբը գուրս կուզայ ղինքը ճածկող ամպերուն ետեւէն, ու գոհունակ ժպիտով ճը կը սևեռուի, ճնրադիր, ղլխահակ ու ճեռածբարձ աղօթող, հաւատացեալ ճերուկին՝ որ քիչ վերջը, աղօթքը աւարտած ու խիղճը հանգիստ, կ'սկսի քալել իր ճամբան, հացի մնացորդը թեւին տակ: Մացառուաքին ետին կը

մնամ անշարժ, երազուն. անդիմադրելի գեղեցիկութեամբ տեսարան ճըն էր ան, որ զրաւած է Տողիս ու երևակայութիւնս, բայց մեղք որ ամէն ծարղ Միլլէ չէ, ոչ ալ Հիւօ ճը, արձանագրելու ու յուերժացընելու համար այդչափ հազուագիւտ պարզութեամբ ու միանգամայն անսահման շքեղութեամբ պատկեր ճը:

Լուսինը կը բարձրանայ ու ես կը քայլեմ: Հեռուէն Գալիի հարուածներու ձայներ, ալեծածան կուգան կ'անցնին, արտերուն լուռ ու անձայր տարածութիւններուն վրայէն. բաժանի զիշեր է տալուլը մինչև առտու անոր Կաթարին է: Կը հասնիմ Մուհաճիրքէօյ. ժամը մէկը անցած է: Լոյսեր կը վառվուն գիւղին ամէն կողմը. ամբողջ ժողովուրդը ոտքի վրայ է. ճիծուպիժի գոյնզգոյն ու խառնիխառն խումբեր, ազմկալի խումբեր լուսինին լոյսին տակ, հոս ու հոն, ձօտակայ դաշտագետիններուն վրայ կը պօռան, կ'երգեն, կը խաղան, կը վազեն, կը կզուրտին, փայտէ ձիեր կը հեծնեն ու կը դառնան, քճածին էակներու պատրանքը տալով կէս ճուրին մէջ: Կիներ կը պտըտակին խումբ խումբ, անոնցմէ քիչ հեռու, վայելելով զով ու լուսնակ գիշերուան հրապոյրը: Սրճարանները լեփեցուն են զըսով ներսով, ամէնքն ալ ճոմէն վերջը կշտացած ու հանգստացած գիւղացիներ, նարիկլէնիերը վառած, խօսակցութեան կծիկը քակած: Դէպի Պուլկուրլու, ճամբուն վրայ, մենաւոր ճղկիթի ճը մինարէէն, ահա միւլէզգիւնը անուշ ձայնով ճը կ'սկսի եղանակել ամենէն պարզ, ամենէն դաշն ու ամենէն յուզիչը էզաներգութեան, որ բաժանի գիշերուան այդ զճայլի պահուն, գերազանցօրէն սիրալի ու տղաւորիչ կը դառնայ: Մօտակայ սրճարանի ճը առաջըը նստած անձեր, երկար գիշերնոցներ ու ճիւղէներ հագած, կէս ճուրին մէջ, ետեւէ ետեւ կը ճանան աղօթքի տունը, որ լուսաւէտ կը փողփողի երկու դուռները լայն բացած:

Յեխին, ճուրին ու աղտոտ փողոցին մէջէն տաղտկալի վերելք ճը և ահա՛ Քիւչիւք Չամըճաի բարձունքին վրայ ամենէն հրաշալի տեսարանը ամենէն հրաշալի տեսարաններուն: Ոչինչ աւելի մեծավայելուչ, հճայիչ, fantastique. Չամըճաի ցորեկուան անբաղդատելի գեղեցիկութենէն վերջը, նորէն Չամըճան է որ գիշերը պիտի կրնար նճանօրինակ աննճան տեսարանի ճը վայելքը ընճայել ինճի. ան միայն պիտի կրնար ինքզինքին հաւասարել, էթէ ոչ գերազանցել, գիշերին մէջ: Աճբողջ քաղաքը, Պոլիս, առանց լուսավառութիւն ճը սարքած ըլլալու,

անսահման ոլկիւնոս ճըն է փայլիլոյ լոյսերու, սկսեալ փողոցի լապտերներէն, տուներու լաճարներէն, մինչև մինարէներու լուսեղէն սպարունջաները ու կրօնական լուսաւոր վերատառութիւնները, սկսեալ Կղկիներէն, Սան-Սթէֆանօէն մինչև Վոսփորի ճայրագոյն անկիւնները, այդ ամէնուն ալ վրայ ունենալով լիալուսինին սրկած լուսեղէն փոշին որ կ'զճայլելիացնէ, կ'երազանցնէ ամբողջ խաճական անսահման ոտտանը, որ իր կարգին, ճովին անսպական հայելին մէջ, լուսեղէն փոշին հիւսած բեհեզին վրայ նրբօրէն կ'արճագանգուի ու կ'արճանագրուի, իբրև գրախտային հազարումէկ գիշերներու գիւթական ճէկ տետիլքը:

Իսլամական հսկումի, աղօթքի, վայելքի և ուրախութեան գիշեր ճըն է այս գիշերը և քաղաքը կը հսկէ. և քաղաքը պիտի լուսնէ մինչև առաւօտ, մինչև թնդանօթի այն միւս ճայնը, որ ատեն ամէն բան պիտի դադրի, անշարժանայ, լուէ, պիտի քնանայ ու թճրի, և պիտի ճանայ գիշերին ճէջ, երբ անդին՝ աշխարհ պիտի պատրաստուի արշալոյսը սղջունել:

Հիճա կ'իջնամ դէպ ի Քատրքէօյ, նեղ ու ճուր ու անայի արահետէ ճը: Հեռուէն Գալիի ճայնը, միշտ խուլ, կը թնդացնէ ճթնորտը: Մօտակայ պարտէզներէն պահապան շուներ կատաղօրէն կը հաչեն, անճանօթ անցորդի ճը հոտն առնելով: Քաղաքին ճօտ, հետզհետէ, կառքով ու քալելով ճարդիկ կ'ելլեն դէճս, որ պտոյտի կամ ճբօսանքի կը դիմեն. շոգենաւերու ու վայրաշարժերու սոցեր կը լուսին: Գլուխին ճերճակ շղարչներու ճշուշին ճէջ ճրարած թրքուհիներ, խումբ խումբ կ'երթևէկին, աղօթքէ կը դառնան, այցի կ'երթան, պտըտելու կ'երթան, լապտերակիր պահապաններ ու առաջնորդներ ունենալով հետերնին. հետզհետէ բաղճութիւնը կը շտանայ. թատրոններ՝ լոյսերու ճէջ կը շողջողան. խանութներ ու խահվէներ՝ յաճախօրդներով կը վխտան. ազճուկ, սգեորութիւն, բաղճութիւն, երթևէկ, երաճշտութիւն. քաղաքը կը հսկէ, քաղաքը կը ցնճայ, քաղաքը կը վայելէ, քաղաքը կ'ապրի:

Բաճաղաճի գիշեր, երազի գիշեր, ճճայանքի գիշեր. աղօթքի, խորհուրդի, խայտանքի գիշեր:

Իճնչ շքեղ պատկեր. իճնչ անուշ տղաւորութիւններ:

Կ. Պոլիս ՉԻՑԹԷ-ՍԱՐԱՑ

# Ա Ն Տ Ո Ն Ի Ո Ս ԵՒ Կ Լ Է Ո Պ Ա Տ Ր Ա

## Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Մ Ե

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ա

Աղէքսանդրիա — Կեսարի բանակեցող .

Կը մտնեն Կեսար . Ագրիպպա , Գոլաբէլլա , Մեկենաս ,  
Գալլոս , Պոպիլիոս , եւ ուրիշներ , բարձրասիւնսն սպաներ :

ԿԵՍ . Գընա՛ իրեն , Գոլաբէ՛լլա , պատուիրէ՛ որ յանձնըի  
Այս աստիճան ճարահատած , ըսէ իրեն թէ ան ի զուր  
Կը վատնէ իր վարանքն ու դադարներ :

ԴՈՒ . Կ'ընեմ , Կեսար :  
(Կը ԳԿԷ)

(Կը ԳԿԷ Գերկեթաս Անտոնիոսի խորոզը)

ԿԵՍ . Ի՞նչ է աս , ո՞վ ես դուն որ կը յանդգնիս աս կերպով  
Մեր անջն երեւալ :

ԴԵՐ . Գերկեթաս ես կը կոչուիմ :  
Անտոնիոսին ծառայեցի , որ ամենէն արժանի էր  
Ամենէն լաւ ծառայուելու . մինչ ան կանգնած էր երկրիս վրայ  
Ու խօսք ունէր բերնին մէջ , ան իմ տէրս էր ու ես կեանքս  
Կը կրէի զինքը ատող անձանց վրայ զայն համակ  
Մաշելու : Եթէ հաճոյ թուի Ձեզ զիս Ձեր քովն աւնել ,  
Ինչ որ էի ես իրեն՝ նոյնը կ'ըլլամ Կեսարին  
Եթէ հաճոյ չէ Ձեզի , կեանքս Ձեր ոտքը կը դընեմ :

ԿԵՍ . Ի՞նչ է ատ քու ըսածըդ :  
ԴԵՐ . Կեսար , կ'ըսեմ թէ մեռա՛ւ

Անտոնիոս :  
ԿԵՍ . Այդպիսի մեծ մէկ բանի մը խորտակու՛մը  
Աւելի մեծ ձայն մը պէ՛տք է հաներ . բոլորչի  
Այս աշխարհս պէտք է սարսեր՝ առիւծներ թափեր քաղքին  
Փողոցներն , ու փոխադարձ՝ քաղքըքըն անոնց որջերն :  
Անտոնիոսի մահը միաւոր աղէտ մը չէ՛ . աշխարհիս կէ՛սը  
Կ'ամփոփուէր այդ անուան մէջ :

ԴԵՐ . Մեռա՛ւ , Կեսար , ո՛չ իրաւանց  
Հանրային գործադրիչէն , ոչ ալ վարձուած վատ դաշոյնէ ,  
Այլ նոյն այն ձեռքն որ իր ըրած գործերուն մէջ իր պատի՛ւը  
Կը գըրէր , սրտին տուած քաջութեամբ սիրտը ձեզքից :  
Աս իր թուրն է : Ես ան վէրքէն կապտեցի , աես ներկուած է  
Իր գերագնիւ արիւնով :

ԿԵՍ . Տրամեցա՞ն դէմքերնիդ , ո՞վ  
Բարեկամներ : Թող ասուածները զիս պատժեն եթէ այս լուրն  
Արքաներու աչքն արցունքով թրջել չի տար :

ԱԳՐ . Եւ ո՞րքան  
Տարօրինակ որ բընութի՛ւնը մեզ ողբալ հարկադրէ  
Մեր ամենէն յամառապինդ հետամըտած գործերուն վրայ :  
Իր արասներն ու փառք պարձանք զոյգ հաւասար կը կշռէին :  
Աւելի չըքնաղ հոգի մը մարդկութի՛ւնը երբէք չէ՛  
Ղեկավարած : Բայց ձեր կամքն է , ո՞վ ասուածներ , մեզ տալ մաս  
Մը թերութիւն որպէսզի մարդ կազմէր մեզ , Կեսար յուզուած  
Է ակներեւ :

ՄԵԿ . Երբ այսպիսի մեծատարր հայելի մ'է

Ար կը դըրուի իր դիմաց, հոն ինքզինքն ի հարկէ  
Պէտք է տեսնէ:

ԿԵՍ.

Ո՛վ Անտոնիոս, քու ետեւէդ հետապնդած  
Ասոր հասայ: Բայց չէ՞ որ մեր մարմինն մէջ խոցերն յաճախ  
կը դանակենք. հարկէն ստիպուած պէտք էր ես քեզ իմ արեւս  
խոնարհած տեսնել տայի կամ ես քուկի՛նրդ տեսնէի:  
Բովանդակ այս աշխարհ մեզ երկուքնուս ասպատանն չէ՛ր  
կրնար ըլլալ: Բայց դարձեալ, թողէք ողբամ սիրտը հոսող  
Արեան պէս մեծարժէք արցունքներով, որ դո՛ւն  
իմ եղբայրս, իմ մրցակից ընկերս ամէն խորհուրդներու  
Բարձրութեան մէջ. կայսրութեան մէջ բարձակիցքս, պատերազմի  
ճակատին մէջ իմ բարեկամն ու ընկերքս, բուն իմ մարմնիս  
Բազուկը դուն, սիրտն ու միտք որուն մէջ իմ խորհուրդներս  
Քուկի՛ններդ կ'արծարծէին — որ մեր աստղերն, անհաշտօրէն,  
Զոյգ հաւասար վիճակնիս այսպէս պէտք էր դատէին՝ հո՛ս  
Բերէին: Մըտիկ ըրէք, բարեկամներ — բայց աւելի  
Յարմարաւոր պահու մը մէջ կը պատմեմ ձեզ:

(Կը մտնէ Եփեմայի մը)

Այս մարդուն դէմքն  
Իր գործին փոյթը կը յայտնէ: Պիտի լըսենք ինչ որ ունի  
Ըսելու: Ա՛ր տեղէն կուգան դուն:

ԵԳԻՊ.

Եփեմայի

Մը հէք եմ դեռ: Իմ տիրուհիս՝ Թագուհին փակուած իր միակ  
Ունեցածին դամբարանին մէջ կը բաղձայ Ձեր մտադրութեանց  
Տեղեկանալ որպէս զի պատրաստուած յարմարէ  
Ինքզինքը ինչ ընթացքի որ իր վրայ հարկ դըրուի:

ԿԵՍ.

Պատուիրէ՛ որ սիրտ առնէ: Քիչ ատենէն ան կ'իմանայ,  
Մեր կողմէ զրկուելիք մէկէ մը ի՛նչ պատուաւոր  
Ու ի՛նչ անիւ կարգադրութիւն իր նկատմամբ ընելնիս,  
Զի ցորչափ Կեսար կ'ապրի, անագնիւ չէ՛ կարող ըլլալ:

ԵԳԻՊՏ.

Այդ կերպ պահեն Ձեզ աստուածք:

(Կը մտնէ)

ԿԵՍ.

Եկուր հոս, Պրոկուլէոս: Գընա ընէ, մենք իրեն  
Անպատուութիւն չենք մըտադրեր, տո՛ւր իրեն ինչ սիրտանք  
Ար իր յուզման բարձրութիւնը պահանջէ, զի չըլլայ թէ  
Իր մեծ հոգով, մահարար մէկ հարուածով մը յուսովրէպ  
Ընէ մեզ, զի Հըռոմի մէջ իր ապրին յաւերժական  
Նըշանակ մը պիտի կենայ յաղթանակնուս: Գընա՛ ու փոյթ  
Ճեպովըդ մեզ լուր բեր թէ ինչ կ'ըսէ ու ինչ մտքի  
Վիճակի մէջ գտար ան:

ՊՐՈ.

Կ'ընեմ, Կեսար:

(Կը մտնէ)

ԿԵՍ.

Գալլոս, գնա հետ

(Կը մտնէ Գալլոս)

Ո՛ւր է Գոլաբէլլա, Պրոկուլոսն երկրորդելու:

ԱՄԷՆ-ՔԸ:

Գոլաբէլլա՛:

ԿԵՍ.

Ձըգեցէք գան, զի կը յիշեմ հիմա թէ ի՛նչ  
Գործով է. երբ ժամը գայ՝ պատրաստ կ'ըլլայ: Եկէք իմ վրանս  
Ինծի հետ — հոն պիտի ձեզ ցուցընեմ թէ ո՛րքան ծանր  
Ու դժկամակ մղուեցայ ես այս մարտնչման, թէ ո՛րքան հեզ  
Ու հանգարտ իմ բոլոր գըրութեանց մէջ վարուեցայ:  
Եկէք ինձ հետ ու տեսէք ինչ որ ունիմ ցուցընելու  
Այս բանիս մէջ:

(Կը մտնէ)

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Աղէֆանգրիա — դամբարանին մէջ սեփեակ մը  
Կը մտնեն Կլեոպատրա, Ծարմիան եւ Իււան:

ԿԼԷՈ.

Իմ սրտաբեկ լըքումըս կ'ըսկըսի լուսագոյն կեանք  
Մ'ինձ յարգարել. ճըղճի՛մ բան է Կեսար ըլլալ. քանի որ ան

Բաղդը չէ՛, Բաղդին ծառան է միայն, անոր կամքին Մէկ պաշտօնեան. և մեծութիւն է ընել այն բանն որ վերջ կուտայ ուրիշ ամէն արարքներու, որ արկածներ վը շղթայէ, ու փոփոխում կը փականքէ, զոր ընելով Մարդ կը ննջէ, ու ալ քիվքին չի տար ճաշակ ազրը բնաւ. Գայեակն հասարակաց՝ մուրացիկի թէ կեսարի:

(Վը մոնէն՝ դամբարանին դռուը՝ Պրոկուլէոս, Գալլոս և Ղնուրբէր)

ԳՐՈ. Կեսար ողջոյն կը զրկէ Եգիպտոսի թագուհիին, Ու պատուէր կուտայ խորհիլ թէ ինչ արդար պահանջ կ'ուզէք Ձեզ շընորհէ:

ԿԼԷՈ. Անունդ ի՞նչ է:

ԳՐՈ. Պրոկուլէոս է իմ անունս: ԿԼԷՈ. Անտնիոս իրաւ քու վրադ ինձ խօսեցաւ, պատուիրեց որ քեզ հաւատամ, բայց շատ ալ իմ փոյթըս չէ որ խաբուիմ ես որ ալ պէտք չունիմ մնացած հաւտարու: Եթէ քու տէրդ Թագուհիիմ իրմէ մուրալ՝ ողորմութիւն հայցելն ուզէ, Պէտք է ըսես իրեն թէ վեհափառ մը, որպէսզի իր վայելուչ շուքը պահէ, պետութենէ մը նուազ բան Պէտք չէ մուրայ. և թէ նուաձուած Եգիպտոսն ան հաճի Ինձի շնորհել զաւկիս համար, ունեցածէս ինձ այնքան մը Տուած կ'ըլլայ որքան բաւ է զիս ծընկան վրայ շընորհակալ ընելու:

ԳՐՈ. Ձուարթ մունեցէք սրտերնիդ: Արքայական Ձեռքի մէջ էք, ոչ մէկ բանէ մի՛ վախնաք: Համարձակ իմ իշխանիս առաջ զըրէք ամէն բան. ան ա՛յնքան Անտուութեամբ առլի է որ կարօտական ամէն մարդու վրայ կը յորդէ: Թոյլ տըւէք որ ես իրեն լուր տանիմ՝ Հեզ ու յօժար իրեն յանձըն ըլլալնիդ, ու այն ատեն Պիտի գանէք յաղթակալ մը որ օժանդակ աղերս ի՛նք վը ինչքէ իր մարութիւնը ցուցնելու հոն ուր իրեն Ծուռկի կուգան շնորհ հայցելու:

ԿԼԷՈ. Ինչքան զիւրին է գանի ձեռք անցընել: Ես իր բաղդին հլու հպատակ ծառան եմ, ու իրեն վը զրկեմ՝ այն մեծութիւնն որ ունի: Ես ամէն ժամ Հնազանդութեան դաս կը սորվիմ. և թէ ուրախ պիտ' ըլլայի Գէմ առ դէմ զի՛նքը տեսնելով:

ԳՐՈ. Կը հաղորդեմ ատ իրեն Անիւ աիկին: Սփոփուեցէք, զի գիտեմ թէ ձեր վիճակը կը գըթայ նոյն ինքը զայն առթողն իսկ:

ԴՈՒ. Կը տեսնե՞ս

Ինչքան զիւրին է գանի ձեռք անցընել: (Պրոկուլէոս և Երկու պահակներ պարտահանին դէմը դրոսած անդրադէ մը վէր կ'ըլլեն ու վար իջնալով Կեսպարի կողմէ կէն կուգան: Բանի մը պահակներ չիքերը կը վերցընեն, ու դռները կը բանան:)

(Պրոկուլէոսն ու պահակն) Պահ կեցէք վրան, Մինչև որ կեսար գայ: (Վը մէկէ)

ԻՌԱՍ. Արքայատո՛հմ թագուհի:

ՇԱՐ. Ո՛ր կէտպատրա, բանուած ես, թագուհի:

ԿԼԷՈ. Շուտ, շուտ, ո՛վ ձեռք բարերար (Իտաշոն մը տաշելով)

ԳՐՈ. Կեցիք, ազնիւ աիկին, կեցիք (Կը բանէ ու Ղնուրբէր կ'ընէ)

Մի այդպէս անիրաւէք ձեր անձին, որ ատով Պաշտպանութեան կը հանդիպիք, ոչ թէ զաւի:

ԿԼԷՈ. Ի՛նչ, պաշտպանուիլ Մահուընէ ալ որ մեր շունեքն իսկ կը փրկէ հարումաշող վատումէ:

ԳՐՈ. Կէտպատրա՛, իմ աիրողըս վեհանձնութիւնը

Չարաշար մի՛ գործածէք, ինքըզինքնիդ քանդելով: Թողուցէք որ աշխարհ տեսնէ իր մեծ հոգւոյն կատարելիք Դերը բարձրը զոր ձեր մահն անցուցադիր պիտի թողուր Առ յաւէտ:

ԿԻՌ. Ա՛ւր ես դուն մահ: Հոս եկուր, եկուր, եկուր, եկուր ա՛ն թագուհի մը որ հազար կ'արժէ մանկիկ Աւ մուրացիկ:

ՊԻՌ. Ա՛հ, տիկին, քիչ մը չափ  
ԿԻՌ. Պարո՛ն, չուտեմ

Պիտի միս, չի պիտի խրմեմ, պարո՛ն, եթէ երբէք Անպէտ խօսք հարկ է ընել, ոչ ալ պիտի քընանամ, Մահկանացու մարմնի այս տունը ես պիտի աւերեմ, Թող կրցածն ընէ կեսար: Գիտցէք, պարոն, ես կալուկապ 2ի պիտի՛ սպասի կենամ ձեր տերոջ արքունեաց մէջ, եւ ոչ ալ բնաւ հանդիպիմ թող ու գանդազ Հովտաւայի Ծանրը աչքին պատուհասին: Ա՛նք վերցընեն պիտի զիս Աւ ցոյց ընեն խճրճասէր Հռոմի ազմկագոջ Սինլըբորին: Լաւագոյն է Եգիպտոսի մէջ փոս մը Գողազը շիրիմ ինձ ըլլայ, Լաւագոյն է Նեղոսի Յեկին վըրայ զիս յօրէմերկ պատկեցընէք, ու թողուք որ Զըրաճանձեր զեռացընեն վըրաս զպիր որդեր՝ Գարշա՛նք Ազգելու չափ: Լաւագոյն է իմ երկրիս բարձրը բուրգերն իմ կախաղանքս ընէք ու զիս կախէք շղթայակապ:

ՊԻՌ. Սարսափի այդ քստմենլի մտածումներն աւելի Գուք հեռուները կը տանիք քան թէ պատճառ պիտի գտնէք կեսարի քով:

(Կը մտնէ Դաւթելա)

ԴՈՒ: Պրոկուլէո՛ս, կեսար քու տէ՛րըդ տեղեակ է Ըրածիդ, ու կը կանչէ քեզ իր քով — իսկ գալով Թագուհիին, անոր ե՛ս պիտի ըլլամ պահապան:

ՊԻՌ. Այդպէս ըլլայ. Գոլաբէլա, ասիկա զիս ամենէն գոհ Պիտի ձրգէ մեզմ բընքուշ եղիր անոր. (Կէտողորէր Գառաւլով) կեսարի Ինչ որ կ'ուզէք կը խօսիմ եթէ պաշտօն տաք ինձի:

ԿԻՌ. Ըսէք մեռնիլ կ'ուզէի:  
(Կը մտնէ Պրոկուլէոս և շէտրէտ)

ԴՈՒ: Ասեմաշուք թագուհի,  
Լսած էք իմ ո՛վ ըլլալս:

ԿԻՌ. 2ըզիտեմ:  
ԴՈՒ: Ապահով

ԿԻՌ. Գիտէք ով եմ:  
Փոյթ չէ, պարոն, թէ ինչ գիտեմ կամ լըսած եմ: Գուք կը ինդաք, երբ տըղաք կամ կ'իններն իրենց երա՛զը կը պատմեն: Միթէ ատ չէ՞ ձեր վարմունքը:

ԴՈՒ: 2եմ հասկընար:  
ԿԻՌ. Երազ տեսայ թէ Անտոնիոս կայսրը մը կար: Ա՛հ այդպիսի Աւրիշ քուն մ'ալ ունենայի որ այդպիսի ուրիշ մարդ մ'ալ կարենայի ես տեսնել:

ԴՈՒ: Եթէ հաճոյ թըլի ձեզ...  
ԿԻՌ. Անոր երե՛սը երկընքին նման էր ու անոր մէջ կային արև ու լուսին իրենց ընթացքը պահելով Աւ լոյս տալով փաքրիկ գունաին՝ այս երկրիս:

ԴՈՒ: Բարձրիշխա՛ն  
ԿԻՌ. Ա՛հ՛հ տիկին:

Իր սրունքներն Ովկէա՛նն իրենց ներքե կ'առնէին, բազուկն իր վերամբարձ զինանշանն էր աշխարհիս. իր ձա՛յնը միջոցի գաշնակաւոր Գունտաերուն ձի՛րքը ունէր, ու ատ՛ բարեկամացը Համար, բայց երբ կ'ելլէր այս երկրագո՛ւնտը գողացնել Աւ սարսել, գոռացող շանթի նման էր: Իր առատ Տուրքին գալով, ձրմեռ չըկար անոր մէջ, աշուն մըն էր Ան մշտտաւ, քանի՛ հընձուէր, այնքան կ'աճէր: Իր բերկրանքներն

Դըրիիններու կերպով էին, իրենց ապրած տարրին մէջէն  
Վեր բարձրացող թիկունքը միշտ ցոյց կուտային. իր ծառայի  
Համագրկեստով թագակիրներ, գահակալներ կը ձեւէին.  
Պետութիւններ ու կղզիներ իր գրպանէն ինկած արծաթ  
Դըրամներու պէս էին:

ԴՈՒ:  
ԿԼԷՈՒ:

Կէսպատրա:  
Կը կարծէք

Որ եղած է, կամ կրնայ այդպիսի մարդ մը ըլլալ  
Նրման այս իմ երազածիս:

ԴՈՒ:  
ԿԼԷՈՒ:

Ո՛չ, չեմ կարծեր, ազնիւ տիկին.

Սուտ կ'ըսէք, աստուածներուն ականջին մինչև երկինք  
Բարձրահաս. բայց եթէ գըտնըւի, կամ թէ երբէք  
Եղած ըլլայ մէկն այդպիսի, երազելու չափէն վեր է  
Անիկա: Բընութեան նիւթ կը պակտի՝ նորանըջան  
Չեւերու մէջ մտքի ստեղծող աշխուժին հետ մրցելու.  
Այսու հանգերձ Անտոնիոս մը յղանալ բընութեան  
Մէկ հրաշակերտը պիտ' ըլլար մտքի ստեղծող աշխուժին դէմ,  
Նրկուն թողլով լոկ ըստուերնե՛ր բացարձակ:

ԴՈՒ:

Մըտիկ ըրէք.

Բարի՛ տիկին: Կորուսանիդ ձեր հոգիին պէս է, մե՛ծ.  
Ու դուք անոր ծանրութեան զոյգ համեմատ կը կրէք զայն:  
Թող երբէք չը տըրուի ինձ ժամանել հետապնդուած  
Յաջողութեան, եթէ չեմ զգար, ձերինին անդրադարձմամբ,  
Վիշտ մը՝ որ կը զարնէ բուն իսկ սրտիս արմատը խոր:  
Շընորհակալ եմ, պարոն: Գիտէ՞ք թէ Կեսարի  
Միտքը ի՞նչ է ընել զիս:

ԴՈՒ:

Կը դրժուարիմ՝ ըսելու

Չեղի, ինչ որ կ'ուզէի որ դուք գիտնայք:

ԿԼԷՈՒ:

Ո՛չ, մի՛ պահէք

Խնդրեմ, պարոն:

ԴՈՒ:

Թէև ան պատուաւոր է...

ԿԼԷՈՒ:

Ըսել է, զիս

Պիտի տանի յաղթանակի՞ն:

ԴՈՒ:

Այո, տիկին, ատ լաւ գիտեմ:

(Փողայն և ներքե նշանակէր «Ճանապարհ, հունապարհ հոգ՝ Կեսարն է»)

Կը մահեն Կեսար, Գալլոս, Պոսիդոն, Մեկեմաս  
Սելեկոս, եւ ուրիշ հետեւորդներ:

ԿԵՍ:

Որն է Եգիպտոսի թագուհին:

ԴՈՒ:

Կայսրն է, տիկին:

(Կէսպատրա ծռակ կը շարժէ)

ԿԵՍ:

Ելէք վեր, ո՛չ չի պիտի դուք ծնրադրէք, կը խնդրեմ  
Վեր ելէք, Եգիպտոսի թագուհին:

ԿԼԷՈՒ:

Տէր իմ, այսպէս

Կը կամենան աստուածներն, պէտք է տիրոջ ու իշխողիս  
Հրպատակիմ:

ԿԵՍ:

Գրժընգակ մըտածմունքով ինքըզինքնիդ

Մի՛ տանջէք: Չեր մեզ ըրած վընասներուն յուշը գառն  
Թէև մեր միս ու ոսկրին մէջ գրուած ըլլայ, լոկ զիպուածի  
Արդիւնքի պէս պիտի մեր միտքը բերենք:

ԿԼԷՈՒ:

Ո՛վ միա՛կ տէրն

Աշխարհիս, ես չեմ կրնար իմ գատս այնպէս ճարտարորէն  
Գնել Չեր առաջ որ անպարտ ցուցընեմ զայն, բայց կ'ընդունիմ  
Որ մինչև ցարդ մեր սեռին շատ անգամներ ամօթ բերող  
Թեթևութեանց ենթակայ ե՛ս ալ եղած եմ:

ԿԵՍ:

Կէսպատրա,

Գիտցած եղիք, մեր փափաքն է մեզմացընել քան թէ շեշտել:  
Եթէ դուք մեր մտադրութեանց պատշաճեցնէք ինքըզինքնիդ,  
Որոնք իսկոտ ազնիւ են ձեր նրկատմամբ, այս փոփոխման  
Մէջ շահ՝ օգուտ պիտի գտնէք. իսկ եթէ վրաս անգթութիւն  
Մը բեռցընէք, հետեւելով Անտոնիոսի ընթացքին,



Գաստափետու՛մը կը կրենք, ու երբ կ'իյնանք, մեր անձին վրայ  
 կը տուգանուի՛նք ուրիշներո՛ւն արժան եղած պատիժին:  
 Կլէոպատրո՛ւ, ո՛չ պահածնիդ և ո՛չ ալ յայտ բերածնիդ  
 Մեր յաղթութեան աւարամաս կը համարինք: Թող դարձեալ ձերն  
 Ըլլայ ան: Բաշխեցէք ան ինչպէս կ'ուզէք, ու հաւտացէ՛ք  
 Վաճառական չէ՛ Կեսար որ ձեզի հետ գնելու ելլէ  
 Վաճառորդի ծախած բաներ: Անոր համար, գուարթ եղիք,  
 Ձեր մտածմո՛ւնքը ձեզի բանտ մի՛ յօրինէք: Ո՛չ, սիրելի  
 Թագուհի, զի մեր միտքն է ձեզ նկատմամբ այնպէս ընել  
 Կարգադրութիւն ինչպէս դուք իսկ մեզ խորհուրդ տաք: Հանգիստ  
 կերէ՛ք

ԿԵՍ.

Ու քընացէք: Մեր ինամքն ու գութն այնպէ՛ս է ձեր վրայ  
 Որ միշտ կը մնանք ձեզ բարեկամ, ու այս կերպով, մնաք բարեաւ:  
 Իմ տէ՛րս ու իշխո՞ղս:

ԿԻ ԷՈ.

ԿԵՍ.

Ո՛չ այդպէս, մընաք բարեաւ:  
 (Փռւած յայտ, կը ձգնէ Կեսար ու հեռուորդները)

ԿԼԷՈ.

Կ'անուշ բերնէ զիս, ա՛ղջիկներ, կ'անուշ բերնէ որ ետ կենամ  
 Ինքզինքիս վրսեմական ըլլալէ, բայց եկո՛ւր  
 Ըսեմ քեզի, Շարմիան: (Կը քափոյ Կարգանի ահա՛ ըն)

ԻՌԱՍ.

Վերջացո՛ւր, բարի տիկին:

ԿԼԷՈ.

Ձուարթ լուսով տիւր հատաւ, ու ալ մութին մենք կը մընանք:  
 Գընա նորէն: Խօսքը արդէն եղած է, ու ատ պէ՛տքը  
 Հոգացուած: Գընա տես որ փոյթ գըրուի:

ՇԱՐ.

Տիկին, կ'երթամ  
 (Նորէն կը մտնէ Դուրբեւա)

ԴՈՒ.

ՇԱՐ.

ԿԻ ԷՈ.

ԴՈՒ.

Ո՛ւր է Թագուհին:  
 Ահա, պարոն: (Կը ձգնէ)  
 Դուրբեւա:

Տիկին, իբրև ասոր երգուընցած ձե՛ր հըրամանով  
 Ձոր գործադրել սրտիս սէրն իրեն կրօնի ո՛ւրիտ կը ճանչնայ,  
 Կուգամ ասի ձեզ ըսել. Կեսար ճանբան Սուրիոյ վրայ  
 Բռնել իր միտքը դըրած է, և այս երկը օրուանըս մէջ  
 Ձեր զուակաց հետ միասին Ձեզ առջեւէն պիտի զրկէ:  
 Օգտուեցէք ասկէ որչափ որ կրնաք: Ես իմ հաճոյքս  
 Ու խոստումըս կատարած եմ:

ԿԼԷՈ.

Դուրբեւա: Ձեր պարտապանը  
 Պիտի մնամ:

ԴՈՒ.

Ես՝ Ձեր ծառան: Մընաք բարեաւ, վե՛հ Թագուհի,  
 Պէտք է երթամ Կեսարի քով իմ ըստապիս:

ԿԼԷՈ.

Երթաք բարեաւ,  
 Ու ջե՛րմշնորհակալիք:

(Կը ձգնէ Դուրբեւա)  
 Հիմա, Իռա՛ս, ի՞նչ կ'ըսես:  
 Եզիպտական պուպրիկ մը՝ դո՛ւն՝ պիտի ցոյցի դրուիս Հռոմ,  
 Ինչպէս ես: Արհեստաւոր ստրուկներ իրենց իւզոտ գոգնոցներով,  
 Քանոններով ու մուրձերով պիտի բռնեն վեր վերջընեն  
 Մեզ ցոյցի. կոշա կերակրով ծանրահոտ իրենց թանձրը  
 Շունչերուն մէջ ամպոտած պիտի կենանք, ու գործըն  
 Պիտի խըմել ստիպուի՛նք:

ԻՌԱՍ.

ԿԻ ԷՈ.

Աստուածներն հեռու ընեն:  
 Բայց խիստ ըստո՛յգ է, Իռա՛ս: Պինդերես ոստիկաններ  
 Մեզի խօսք պիտի նետեն, որպէս թէ պոռնիկներու,  
 Ու քոտտ տաղարարներ մեր վրայ երգեր պիտի շինեն  
 Աննորդաշնակ. սրամիտ գաւեշտ խաղացողներ յանպատրաստից  
 Թատարբեմին վրայ պիտի մեզ ձեւցնեն, ու անշուշտ  
 Աղէքսանդրիոյ մեր խրախճաններն ներկայացնեն: Անտոնիոս  
 Գինովցած պիտի բերուի տեսարան, և սըրածայն  
 Պատանեակ մը՝) պիտի տեսնեմ Կլէոպատրի մեծութիւնն

\*) Շէլսփիրի ասեմ դեռ կիներ բաճարեմ ելած չլլալով՝ կամանց դերեր պատանեակ-  
 ներու կը յանձնուէին:

Հասցախի պրոնիկի մը կեցուածքով:

ԻՌԱՍ.  
ԿԼԷՌ.  
ԻՌԱՍ.

Ո՛հ ողորմած սասուածներ:

Բայց ըլլալիքն ա՛տ է ստոյգ:

ԿԼԷՌ.

Երբէք ես առ տեսնելու չեմ,  
Ձի վստահ եմ իմ՝ եղունգնէ՛րըս աչքերէս ուժով են:  
Տե՛ս առի է ձիշդ միջոցն իրենց լարուած պատրաստութեան  
Քթին խնդալու ու խիստ անխելք խորհուրդներնին խորտակելու:  
(Կէրտին կը մոռնէ Երբեմն)

Հիմա, Շարմիան, նա՛ժիշաներս, թագուհիի մը կերպով  
Ձիս շքեղութեամբ երեցուցէք, գացէք բերէք շքեղագոյն  
Իմ՝ Հագուստներս: Կրկին կ'երթամ ես Կիւանոս, զԱնտոնիոս  
Դիմաւորել: Օ՛ն, Իռաս, գնա՛: Հիմա, ազնիւ Շարմիան, իրա՛ւ,  
Փութով գըլուխ պիտի հանենք, ու երբ այս գործն ալ կատարես,  
Արձակուրդ կուտամ քեզի երթալ խաղալ մինչև հուն  
Յաւիտենից: Բե՛ր մեր թագն ու ամէն ինչ: (Կը մոռնէ Իռաս, աչ-  
ման գորտը) Ի՛նչու է այս

Աղմուկը հոգ:

(Պահալ մը կը մոռնէ)

ՊԱՀ.

Գեղջուկ մարդ մը եկած է որ անհրաժեշտ  
Կը պահանջէ Ձեր բարձրութեան ն ըկայութեանը ելլել:  
Թուզ կը բերէ:

ԿԼԷՌ.

Թող ներս գայ: (Կը մոռնէ)

Ի՛նչ խեղճուկ մէկ գործի մը  
Կրնայ վեհ գործ մը ընել: Ան ինձի ապատութիւն  
Կը բերէ: Որոշումըս սեւեռած է, ու կնոջական  
Ոչինչ ունիմ՝ ա՛լ մէջըս: Ալ հիմա յոտից ցըլուխ  
Մարմարակերպ ամրապինդ եմ, ալ հիմա յարաիրօրի  
Լուսինը չէ՛ իմ լուսաւորս:

(Նորէն կը մոռնէ պահալը, շնահանի մը կէտ որ շաբէտը կը բերէ)

ՊԱՀ.

Մարդը սա է:

ԿԼԷՌ.

Գնա՛ ու գանի հոս ձգէ:  
Ունի՛ս հոգ Նեղոսի սիրուն որդն որ կը մեղքընէ  
Ու ցաւ չի տար:

ՇԻՆ.

Ալ ինչ խօսք, ունիմ հասցա՛, բայց ես ան մարդը չեմ որ անոր  
զրպեղնիդ ուզեմ, ինչու որ անոր կծկը մահաթիւն է (մահառիթ).  
անկէ մեռնողները քիչ հեղ կ'աղէկան կամ բընաւ չեն աղէկատր

ԿԼԷՌ.

Անկէ մեռած մէկը կը յիշես:

ՇԻՆ.

Ըստ, մարդ ալ, կնիկ ալ: Դեռ շատ չի կայ, երեկուան օրը  
մէկուն վրայ իմացայ. շատ օրինաւոր կնիկ մը, բայց քիչ մը  
սուտղուցութեան ինքըզինքը տուած, որ կնիկ մը ընելու չէ բայց  
միայն օրինաւոր կերպով: Ինտոր մեռաւ կծկէն, ինչ ցաւ իմացաւ,  
իրաւ որ, շատ աղէկ տեղեկութիւն կուտայ որդին վրայ, բայց  
ամէն բաժնուն որ մարդ հաւտայ բաժնուն կէսն ընելով հոգին  
վրայ կուտայ, բայց սա բաժնս վրէպ է (անվրէպ), որդը տեսա՛կ  
մը որդ է:

ԿԼԷՌ.

Լաւ, ել գընա՛ երթաս բարով:

ՇԻՆ.

Խերը տեսնէք որդին, ամէն կերպով (Լաւ դէտէլ շաբէտը):

ԿԼԷՌ.

Երթաս բարով:

ՇԻՆ.

Նայէ բսեմ՝ միտուընիդ սա զրէք՝ որդը՝ ի՛նչ է իր բնութիւնը՝  
ա՛ն պիտի ընէ:

ԿԼԷՌ.

Լաւ, լաւ, երթաս բարով:

ՇԻՆ.

Նայէ բսեմ, որդը ամէն մարդու ձեռք հաւտալ չըլլար, միայն  
խոհեմ մարդոց, ինչու որ իրաւ բարի բան չիայ առ որդին մէջ:

ԿԼԷՌ.

Փոյթ մի ընիր, զգուշութիւն կ'ըլլուի:

ՇԻՆ.

Ըստ աղէկ: Բան մի՛ տաք անոր, կը խնդրեմ, ինչու որ կեր տալը  
չարժեր:

ԿԼԷՌ.

Կ'ուտէ՛ զիս:

ՇԻՆ.

Ձի կարծէք որ այնչափ ալ ապուշ եմ որ չգիտնամ թէ սատանան

անգամ կին չուտեր : Գիտեմ որ կին մը սատուածներուն բերնին պատառ է , եթէ սատանան իր ձեռքովը աղած պղպեղած չըլլայ ան : Բայց , խօսք չի կայ , սա շունչանորդի սատանաները մեծ վնաս կը հասցընեն սատուածներուն իրենց սակզծած կիններուն մէջ , ինչու որ իրենց շինած տանին հինգը սատանաները կ'աւրեն :

ԿԼԷՈՒ  
ՇԻՆՆ

Լաւ , եւ գնա , երթաս բարով :  
Այո , շիտակ սրտով կ'ըսեմ խերը տեսնէք որդին : (Կը զգնէ)

(Նորէն կը մտնէ Իսաակ շքեպուշ , Բաբուշ , Լևո)

ԿԼԷՈՒ

Տուր ինձի իմ զգեստըս , գլխուս վըրայ զիր թաղըս :  
Անմահական ըղձանքներ ունիմ ներսըս , ալ բընաւ  
Եգիպտոսի խաղողին հոյզը չըպիտի թըջէ շուրթըս :  
Ճարպիկ , ճարպիկ , ապիւր Իսաակ , շուտ ըրէ . կարծես կը լսեմ  
Անտանիոսի կանչելը զիս : Կը տեսնեմ ես անիկա  
Որ եռանդով կ'ոգեւորուի իմ վեհ արարքըս գովելու :  
Կը լրեմ ծաղըր իրեն Կեսարի յաջողման վրայ ,  
Չոր սատուածք մարդուս կուտան իրենց ետքի սխերմութիւնը  
Չքմեղած ըլլալու : Ամուսինըս , կուգամ ահա ,  
Ահ հիմա , իմ քաջութիւնս թող հատատէ իմ իրաւունքըս  
Այդ անունին . կրակ ու օդ եմ , միւս երկու իմ տարրերս  
Ստորին կեանքի ես կուտամ : Լաւ , լաւ , լմնցուցիք :  
Ուրեմն եկէք , ու շուրթերուս հուսկ տաքութիւնը  
Առէք : Մընաս բարով , բարի Շարմիան : Իսաակ , երկա՛ր  
Մընաս բարով : (Կը համբարէ , Իսաակ Կեանք , կը զգնէ)

ՇԱՐՈՒ

Շուրթերուս վրայ միթէ ունիմ թոյնը իժիւն :  
Կ'իյնաս այդպէս : Եթէ դուն ու բընութիւն այդպէս հեղիկ  
Կը բաժնուիք իրարմէ , մահուան հարուածը նըման է  
Տարիաւորին կըծելուն որ ցաւցնելով հանդերձ գարձեալ  
Կը փափաքուի : Եթէ այդ կերպ կը հեռանաս դուն հոսկէ ,  
Ատով կ'ըսես աշխարհիս թէ ան չարժեք հրաժեշտի  
Մնաք բարովներ :

Լուծուէ , թանձր ամպ , անձրևէ՛ որ ըսեմ թէ  
Աստուածներն իսկ կ'արտասուեն :

ԿԼԷՈՒ

Աս ստորնութիւն կը բերէ ինձ :  
Եթէ առաջ ան դէմն ելլէ իմ գանգրահեր Անտանիոսիս ,  
Աս անոր պիտի ուղղէ իր պահանջն , ու մսխէ  
Այն համբոյրն որ բերկրանքս է բերնէն առնել  
(Իժի Բե . շոք Կործիւն կը կոչուէ)

Եկու՛ր , խեղճ

Մահատու , քու սո՛ւր տկուաներովդ մէկանց քակէ՛  
Կեանքի այս կա՛պը մանուածոյ , խեղճ թիւնաւոր անբան էա՛կ ,  
Օ՛ն գայրացիր ու լմնցուր : Ահ ուր էր թէ կարենայիր  
Լեզու ելլել , որ լրսէի մեծ Կեսարը խորհրդազուրկ  
Աւանակ մը քու կոչելդ :

ՇԱՐՈՒ

Ո՛վ աստղ արեւելեան :  
Հանգա՛րտ , հանգա՛րտ : Չե՛ս տեսնիր ծոցիս վըրայ իմ մանկիկս ,  
Որ կը ծըծէ ու քուն կ'ընէ սանտուն :

ՇԱՐՈՒ

Ահ , ձեղբուէ՛ , սիրտ  
Ճեղքընէ՛ :

ԿԼԷՈՒ

Անուշ որպէս պալատան , փայտուկ ինչպէս  
Օղը : գողարիկ . . . . . ո՛հ Անտանիո՛ս , բայց եկուր քեզ ալ առնեմ  
(Ուրե՛ն է՛ Բե՛ն ալ Բա՛նէն կոչուէլ)

ՇԱՐՈՒ

Ինչո՞ւ պէտք է յամենամ . . . (Կը զգնէ)  
Այս անարգ աշխարհիս մէջ :  
Ուտաի գընա՛ , բարեաւ գընա՛ : Պարծենցիր հիմա , ո՛վ մա՛հ ,  
Անհամեմատ աղջիկ մը ձեռք անցուցիր : Փետրակակո՛ւղ  
Պատուհաններ , փակուեցէք , ու թող Արե՛գը ոսկեփայլ  
Մէկ մ՛ալ երբէք չգիտուի այնպիսի արքայաշող

Աչքերէ: Թագրդ ծուռ է, շտկեմ՝ յետոյ երթամ խաղալ \*):  
(Կը մտնէ գահակ)

Ա. ՊԱՀ. Ա՞ր է, ո՞ւր է թագուհին:

ՀԱՐ.

Մեղմ խօսէ, չարթնցնես ան:

Ա. ՊԱՀ. Կեսար զրկեց...

ՀԱՐ.

Շա՛տ դանդաղ պատգամաբեր մը արգարև

(Ի՞նչ է Կը Կը Կը Կը)

Ա. ՊԱՀ. Ո՛հ շուտ եկուր, լմնցուր: Մասամբ կը զգամ քեզ արդէն:  
Մօտեցէք օ՛ն: Գէշ բան մը կայ: Կեսարին խաբէութիւն  
Եղած է:

Բ. ՊԱՀ.

Դոյաբէլլա՛ն կայ Կեսարէն զըրկըւած:

Ա. ՊԱՀ.

Ա՛ն կանչեցէք:

Ի՞նչ գործ է աս որ հոս եղած է, Շարմիան,

ՀԱՐ.

Աղէ՛կ եղած է ասիկա: Աղէկ եղած ու վայել

Այնքան թուով արքաներու տոհմէն սերած իշխանուհու:

Ա՛հ զօրական:

(Կը մտնէ)

(Վերադառնալէ Կը մտնէ Իւլիոսէլլա)

ԴՈՒ.

Ի՞նչ կ'անցնի հող:

Բ. ՊԱՀ.

Ամէ՛նք մեռած:

ԴՈՒ.

Կեսար, ինչ որ

Կը խորհէիր, ահա ասոր մէջ իրացաւ, դուն ինքըդ

Ահա կուգան կատարուած տեսնելու այն խիթալի

Արարքն որ այնքան ջանք դուն կ'ընէիր արդիւնելու:

(Ներսէն « Ճանապարհ, ճանապարհ հոգ Կեսարին »)

Վերադառնալէ Կը մտնէ Կեսար ու իր բուրբ հետեւորդները շինարարական Կայլ:

ԴՈՒ.

Ո՛հ աէ՛ր, չափազանց վստահելի գուշակ մըն էք,

Ձեր վստացածն եղաւ ահա:

ԿԵՍ.

Յետին պահուել արիագոյն:

Մեր մտքի նպատակին զարկաւ շիտակ, ու ինչպէս

Արքայազնի վայել է, ինքն իր կերպով տընօրինեց

Ինքըզինքին: Սակայն կե՛րպն իրենց մահուան: Արիւններին

Ձեմ տեսներ:

ԴՈՒ.

Ամենէն ետքն իրենց հետ ո՞վ կը գտնուէր:

Ա. ՊԱՀ.

Պարզմիտ գեղջուկ մը որ իրեն թուզ կը բերէր: Աս էր զամբիւղը  
Մոր:

ԿԵՍ.

Թունաւորուած ուրիմըն:

Ա. ՊԱՀ.

Ո՞վ Կեսար,

Սա Շարմիանը գեռ հիմա կեսնք ունէր վրան, կայնած էր

Ու կը խօսէր, զինքը զըտայ երբ իր մեռած տիրուհիին

Գլխուն վըրայ թագն ու պսակն ձեռի կը դնէր: Կայնած տեղն ինք

Կը գողար, մէկ մ'ալ յանկարծ գետինն ինկաւ:

ԿԵՍ.

Ով վե՛հ

Տըկարութիւն: Եթէ թոյն էին կ'լլած, արտաքուստ

Ուռնալէն յայտ պիտի գար, բայց ան քունի երևոյթը

Ունի վրան որպէս թէ ուզէր ուրիշ մէկ Անտոնիոս

Մըն ալ որսալ շքնորհներու իր զօրե՛ղ ծուղակին մէջ:

ԴՈՒ.

Հոս կուրծքին վրայ արիւնի ցայտում մը կայ, ու քիչ մ'ուռեցք:

Նոյնը կայ բազուկին վրայ:

Ա. ՊԱՀ.

Ատի իժին ձրգած հետքն է,

Ու աս թուզի տերեւներն իրենց վրայ լեզ ունին, ճիշդ այնպէս

Ինչպէս իժեր Նեղոսի քարայրներուն վրայ կը թողուն:

ԿԵՍ.

Այո՛, խիստ հաւանական է այդ կերպով մեռած է,

Զի իր բժիշկն ինձ պատմեց թէ մեռնելու հեշտ կերպեր

\*) Ակնարկելով ինչ առաջ իր իրաւօրէին քաղաքիին այն խօսիմ քէ՛ անճանապատ  
քեան գործը կարգադրել յետոյ՝ արձակուրդ կուտար իրեն երթալ խաղալ մինչեւ յաւիտեան:

Անվերջ փորձով կը խուզարկէր : Ա՛նք առէք իր անկողինն ,  
 Աւ իր կինն՝ըր տարէք դամբարանէն : Ան պիտի իր  
 Անտոնիոսին քովը թաղուի . աշխարհիս վրայ ո՛չ մէկ շիրիմ՝  
 Պիտի իր մէջ ընդգոգէ զոյգ մը այսքան մեծահազարակ :  
 Ասոնց նըման բարձրանըջան դիպուածներ կ'ազդեն նոյն իսկ  
 Զանոնք նիւթող՝ աւթողին վրայ , ու անոնց պատմութեան մէջ  
 Արգահատանքը նոյնքան բաժին ունի որքան փառքն  
 Անոր որ զիրենք ողբի ենթարկեց : Մեր զօրքերուն  
 Բանակը ծա՛նր հանդէսով պիտի ներկայ գտնուի  
 Դամբանական յուզարկին : Աւ յետոյ Հ.ու.մ : Գոլարեւիտ՝ ,  
 Եկուր , նայէ՛ որ վե՛հ շուք՝ ու կարգ տրուի այս մեծ  
 Հանդիսութեան :

Թարգմ. Գ. ՓՍ.ՈՆԱԿ

Վ Ե Ր Զ

### ՇԻՐՎԱՆՁԱԴԷԻ ՅՈՒՄԵԼԵԱՆԸ

Աւրախուժեամբ կ'իմանանք որ Շիրվան-  
 զագէի յորեկանը տօնելու համար կազմուած է  
 Թիֆլիսի մէջ կարգադիր մասնախումբ մը՝  
 նախագահութեամբ Պ. Համբարձում Մելիք-  
 եանի : Այդ մասնախումբը արդէն որոշեր է որ  
 յորեկանը տեղի պիտի ունենայ մայիս 7/20ին ,  
 Թիֆլիսի Արքունական Թատրոնին մէջ : Մասնա-  
 խումբը որոշեր է նաև ի լոյս ընծայել ի պատիւ  
 Շիրվանզագէի յորեկանական ժողովածու մը՝  
 որուն պիտի մասնակցին ուսաստայ , թրքաստայ  
 և պարսկաստայ գրողներ , և մատչելի գնով ժո-  
 ղովորական հրատարակութիւն մը՝ որ պիտի  
 պարունակէ Յաւազարը և կենսագրական ու-  
 սումնասիրութիւն մը Շիրվանզագէի մասին :  
 Յօրեկեանի օրը՝ հանդիսասօր թատերական  
 ներկայացում տեղի պիտի ունենայ :

Չենք տարակուսիր որ աշխարհիս ամէն  
 կողմը գտնուող Հայերը պիտի մասնակցին այս  
 ազգային-գրական մեծ հանդէսին : Թէպէտ  
 տակաւին շրջաբերական չենք ընդունած և  
 հասցէ մը չկայ նշանակուած , կը կարծենք սա-  
 կայն թէ անոնք որ կ'ուզեն յարաբերութեան  
 մտնել կարգադիր մասնախումբին հետ՝ ուղարկելու  
 համար ուղերձ կամ նուիրատուութիւն , կարող  
 են դիմել հետեւեալ հասցէին՝

Mr. Ambartsoum Melikoff,  
 Tiflis (Caucase, Russie)

Անհրաժեշտ է որ մասնաւորապէս թրքա-

հայ մտաւորականութիւնը հանդիսաւորապէս  
 մասնակցի ուսաստայ մեծ գրագէտին յորեկ-  
 եանին : Յանկալի էր որ Պոլսէն պատգամաւոր-  
 ներ ուղարկուէին , և կամ Թիֆլիսի տօնէն  
 յետոյ՝ Պոլիս հրաւիրուէր յորեկեարը և իրեն  
 ի պատիւ ցոյց մը կատարուէր նոյն իսկ Պոլսոյ  
 մէջ . լուսագոյն է որ այս երկուքն ալ տեղի  
 ունենան :


### ՏԻԳՐԱՆ ԽԱՆ ՔԵԼԵԿԵԱՆ

ԵՒ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒՐՈՊԱՑԻ ՄԷՋ

Աւաճիտի ընթերցողները կը յիշեն այն ներբու-  
 ղալից գնահատումները որ յայտնուեցան փարիզեան  
 ճամուլին մէջ՝ Տիգրան խան Քելեկեանի արևելեան  
 նկարադարդ կերպաներու հաւաքածուին ցուցադ-  
 րութեան աւթիւ և որոնց թարգմանութիւնը հրա-  
 տարակեցինք : Յուցահանդէսէն քիչ յետոյ՝ Տիգրան  
 խան այդ կերպաներուն գունաւոր վերարտադրու-  
 թիւնները պարունակող շքեղ ալպոմ մ'ի լոյս ընծա-  
 յեց , որ ահագին յաջողութիւն ունեցաւ Եւրոպայի  
 գեղարուեստական շրջանակներուն մէջ և որուն  
 յառաջաբանին մէջ , նշանաւոր մասնագէտ Պ. Ժիւլ  
 Կիֆրէ կը գրէր հետեւեալը .

« . . . Արեւելեան կերպաներու հաւաքածուն,  
 զոր Պ. Քելեկեան երկար ատենէ ի վեր սկսած և  
 ճիւղացուցած է , անտարակոյս մին է ամենէն կա-  
 րեւորներէն , մին այլազան տիպերով ամենէն հա-



Պարսկական պնակ, Սուլթանապասի մեջ գտնուած (ԺԳ. դար)

բուսաներէն, զոր շատոնց ի վեր արուեստատէր ճը կազմած ըլլայ: Այս է կարծիքը Տր. Ճուլուա Լեւինկի, այս նիւթին մէջ ամենէն ձեռնհաս ճանապէտին: ԺԵ. և ԺԶ. դարու զարգերէ և մետաքսեղէններէ բաղկացած, Բեղեկեան հաւաքածուն կ'ընծայէ զար դարուեստական մոթիֆներու հազուադիւտ խմբում ճը և անզուգական շարք ճը թէ՛ փայլուն և թէ՛ զմայլելիօրէն ներդաշնակ երկնաւորմանց: Այն որ մօտէն պիտի քննէ այս դժագրութիւնները որ նախ և առաջ տարամման կը թուին, պիտի նկատէ որ անոնց մեծագոյն մասը սկզբնական տարրերու բաւական սահմանափակ թուի ճը կը վերածուի: Զուաձև մետաքսերը, որ սրածալը կ'երկարի և առաւել կամ նուազ զարդարուն տրէֆներով կը

չըջապատուի, այս զարդարուեստին ամենէն սովորական ձեւերէն մին կը կազմէ: Մերթ ճահիլը կ'երեւայ. մերթ լուսնին լիպլը սկաւառակը բովանդակ ամբողջութեանը մեկնակէտը կը դաւնայ: Խ'նչքան հնարամիտ զուգարանումներ անդադար կը վերանորոգէն գժագրութիւնը: Խ'նչ անսպառ երեւակալութիւն՝ բնատիպերը հնարողին մօտ: Կարելի չէ՛ միթէ տիպար-շարագրութեանց սրոշ թուի ճը մէջ խմբել այդ անհուն բաղձութիւնը՝ ձեւերու, որ ամենքն ալ կը հնազանդին անխախտ երկրաչափական օրէնքներու: Առերեւոյթ խառնաշփոթեան ճը ներքեւ, համաչափութիւնը շուտով ի յայտ կուգայ՝ ուշալիբ աչքին: Այդ բոլոր քնահանգները կը հպասակին անձուկ կանոններու, որոնց բանաձևը



Դարևասկեան պնակ (ԺԶ. դար)

ուշադիր ուսումնասիրութեամբ ճը հնարաւոր պիտի ըլլար սահմանել: Երկրին ծաղիկներն ու անասունները պիտաւոր դերը կը կատարեն հոս: Երկուքն ալ շատ ազատօրէն արտայայտուած են՝ աղշեցուցիչ երևակայութեամբ ճ'օծուած արուեստագէտներու ձեռքով: Այս հաւաքածոն կը պարունակէ յատկանշական նմուշներ այս բազմազան տարրերու անթիւ շարահաւանութեան: Մարդկային դէմքն ալ հոն իր տեղը կը զբաւէ՝ հսկասակ Ղուրմնին արգելքներուն: Մերթ կը տեսնենք որտղներ որ առիւծը կամ այծեամբ կը հալածեն՝ ձուլեղին ձիարշաւներով մերթ՝ ծանրադէմ անձ ճը՝ բրգածեւ փաթթոցով կ'երեւայ՝ կանգուն, բազէ ճը բուռնցքին վրայ

սրուակ ճը ձեռքը: Ուրիշ տեղ կը ներկայացուի պարսիկ պատերազմիկին յաղթանակը՝ իր դարաւոր ստիսին կիսավայրենի Մանկալին վրայ. կը տեսնենք ձիաւոր ճը, որ իր ձիուն գաւակն առած է դեռատի պատանի ճը և ձեռքը բռնած է ծայրը չուանի ճը որով կաղուած է բանուածքներով աստղադարդեալ չինական պատմութեան ճը հագած երկար պէխերով Բալմուք ճը: Յետոյ, ցանցընուք ճըն է երկնաբանագիտութեան, սմբողջ օդային աշխարհ ճը սիրաճարգներու, թուրքներու, թիթեւներու, տարօրինակ միջատներու: Ուրիշ կտորներու վրայ, կամաւոր խառնաշփոթութեամբ ճը իրար խաչաձեւոյ արձաւենիներ կ'անջատուին անհուն անուշութեամբ վարդա-

գոյն խորքի ճը վրայ: Ի՞նչպէս նկարագրել այդ խառնակոյտը ցնորակերպ անասուններու, ուր ձիեր, շուներ, ճագարներ կը խառնուին ամէն ուղղութեամբ ծուռ տերեւանքներու, և որոնց մէջտեղը հաւալուանը իր մեծաշուք նօթը կ'արձակէ: Անիրականալի ձեռնարկ ճը պիտի ըլլար՝ արտայայտել փորձել հրապոյցն ու փայլը այդ երփնագեղութեանց որոնք այնքան զարեւէ ի վեր դեռ այնքան վառ են: Ժամանակը մեղմացուցած է միայն գոյներուն պայծառութիւնը, ներդաշնակ ու խորհրդապահ ժանդատում ճը փոխ տալով անոնց: Ի՞նչ գազանիքներ ունէին այդ Արեւելցիները, « ր կարող կ'ըլլային իրենց ներկերուն այսպիսի տեւողութիւն մ'ապահովել, երբ մեր այնքան ներբողած գիտութեան գիտերը յաճախ շատ վաղանցուկ արդիւնքներ միայն տուած են:

« . . . Այսպիսի խնամեալ և հաւատարիմ հրատարակութիւններով է որ պիտի տարածուի ծանօթացուծը և հիացական գնահատուծը Արեւելքի այս արուեստներուն, Արեւելքին, որուն միշտ հարկատուները պիտի մնանք մենք: Պէտք է շնորհապարտ ըլլալ այն շատ նուրբ ճաշակով ճարգուն, որ անխոնջ յարասուութեամբ ճը, կազմեր է խնամքով ընարուած օրինակներու այս շքեղ ամբողջութիւնը »:

Այժմ, Տիգրան խան իր արեւելեան անօթներու հաւաքածուն ցուցադրած է Լոնտոնի Քեոլինիթըն մուսէնիին մէջ, և հրատարակած է դարձեալ հոյակապ հատոր ճը՝ այդ անօթներու վերարտադրութիւնը պարունակող: Նոյնքան, և կարելի է ըսել՝ աւելի խանդավառ հիացման արտայայտութիւններով կ'ողջունուի եւրոպական հեղինակութիւններու կողմէ մեր տաղանդաւոր հայրենակցին այս երկրորդ ձեռնարկը: Լոնտոնի կարևորագոյն հանդէսներէն մէկուն Saturday Review մէջ լոյս տեսած է ուսումնասիրութիւն ճը, որուն թարգմանութիւնը պիտի հրատարակենք մեր յաջորդ թուով: Իսկ հատորին երևման անթիւ Տիգրան խան ընդունած է Եւրոպայի մեծագոյն մասնագէտներէն ամենաջերմ սքանչացման արտայայտութիւններով լի նամակներ, որոնցմէ երկուքին թարգմանութիւնը կուտանք այստեղ (1):

Նեոպապիլոպեի, 23 Հոկտ. 1910

« Սիրելի Պ. Քելեկեան,

« Ամենամեծ հաճոյքով է որ ստացայ ձեր պատկերազարդ ցուցուիլը, որ արդարեւ արեւելեան

(1) Տիգրան խանի բարեհաճ արձագանքաւր՝ կը հրատարակենք ման երեք վերահարութիւն հաւաքածուին գեղեցկագոյն կտրուներէն:

խեցեգործութեան (céramique) հոյակապ ամբողջութիւն ճը կը ներկայացնէ: Կարծեմ թէ աշխարհիս մէջ չկայ ձերինին չափ փորձառութեամբ և ճաշակով ընարուած ու խմբուած հաւաքածու ճը: Անհամբեր եմ այդ բոլոր գեղեցիկ աւարկաներուն խկականը տեսնելու, որովհետեւ սեաներկ վերարտադրութիւնները, ինչքան ալ կատարեալ ըլլան, չեն կրնար բնականաբար այդ հոյակապ աւարկաներուն գոյներու և փայլի գեղեցկութեան մասին գաղափար տալ:

« Ձեր հաւաքածուն թանկագին յիշատակարան ճը (monument) կը կազմէ արեւելեան արուեստին պատմութեան համար:

« Առիթէն կ'օգտուիմ ձեզի շնորհակալ ըլլալու այն ազնուութեան համար, որով հաճեցաք մասնակցիլ Միւնխենի Յուլիանի մուցահանդէսին: Ձեր կերպաներու հուշակաւոր հաւաքածուն և ձեր խեցեգործական կտորները բոլոր հասկցողներն ու արուեստասէրները մոգեցին, և այսպէս՝ ձեր շնորհիւ է որ մեր մուցահանդէսը կրցաւ քիչ ճը յաջողութիւն ունենալ:

« Անգամ ճը ևս շնորհակալ եմ ձեր գեղեցիկ հատորին համար որ կը ճոխացնէ մատենադարանս, և հաճեցէք ընդունիլ, սիրելի Պ. Քելեկեան, յարգալից զգացմանցս հաւաստիքը »:

ՅՐ. ՍԱՐԲԵ (\*)

Փարիզ, 10 Գեկտեմբ. 1910

« Սիրելի Պ. Քելեկեան,

« Ի՞նչպէս շնորհակալ ըլլալ ձեր այդքան ազնիւ ուղարկին համար: Աւելի մեծ հրճուանք ճը չէիք կարող պատճառել ինձի, և ինձի համար միշտ նոր հաճոյք ճը պիտի ըլլայ աչքէ անցնել այս սքանչելի գործը որ մեզի կը պահէ յիշատակը արուեստի մաւարկաներու ամենէն գեղեցիկ հաւաքածուններէն մէկուն որ երբեք տեսնուած ըլլալ: Անոր էջերը թղթատելով, ինքնիրենս կ'ըսէի թէ դուք կարող էք հպարտ ըլլալ ձեր կատարած գործով: Ձեր կեանքին այնքան տարիները նուիրելով պարսկական խեցեգործութեան ամենէն կատարեալ օրինակները հաւաքելու, յետոյ դանոնք այսքան շքեղ կերպով վերարտադրելով, դուք ի պատիւ արեւելեան արուեստին կանգներ էք յիշատակարան ճը սրուն ձեր անունը կապուած պիտի մնայ: Ձեր հաւաքածուին հանրային ցուցադրութիւնը իբր արդիւնք պիտի ունենայ վերջնական յայտնագործուծը սա ճշմարտութեան, թէ՛ իր շարադրութեանց շնորհովը, իր քմայքին զարդարուեստական ճոխութեամբը, իր երանգապնակին նրբութեամբն ու փայլովը, Արեւելքի խեցեգործութիւնը աշխարհիս մէջ իր նմանը չունի: Մուսէնի ճը համար, որքան ալ հարուստ ըլլայ ան, այսպիսի ամբողջութիւն ճը ունենալը՝ մեծ փառք մըն է. հարիւրի չափ հատրնաիր կտորներու մէջ, մարդկութեան գեղարուեստական մեծ արտայայտութիւններէն միոյն լիակատար պատմութիւնն է:

(\*) Պերինի Մուսէնիին գլխաւոր վերակազմուներէն (conservateur) մին:

« Բանի որ այսուհետև պէտք պիտի ըլլայ Մանջը անցնիլ Բեկեկեան հաւաքածուն պետեղու համար, ես երջանիկ եմ կարենալու զիս հաշուել այն սակաւաթիւ առանձնաշնորհեալներուն ձեջ, որ իրենց զրա դարանին ձեջ պիտի ունենան անոր այսքան հաւատարիմ և այսքան թանկագին ձեկ պատկերը :

« Դարձեալ շնորհակալութիւն, սիրելի Պարոն Բեկեկեան, և շատ սիրով

Ս. Պետկ (\*)

Այս բոլոր ներբողները, որ կ'ողջունեն Տիգրան խանի նրբաճաշակ հասկցողի, հաւաքողի, դասաւորողի տալանդը, պատիւ կը բերեն ոչ միայն իրեն, այլ և ձեր ցեղին : « Հայերը, որ Արևելքի ձեջ եւրոպական քաղաքակրթութեան տարածողն են եղած դարերով, կոչուած են նաև արեւելեան հոգին իր արտայայտութեանց բոլոր բարդութեանը ձեջ՝ ամենէն ներքնիմաց և լիակատար եղանակով եւրոպային ծանօթացներու (1) : Տիգրան խան կ'ապացուցանէ անգամ ձը եւս թէ Հայ ցեղն այս յուսկնութիւնը կարող է ունենալ : Ինքը, որ արդէն ծանօթ է ու սիրուած իբր ազգասէր բարեգործ Հայ ձը, գեղարուեստի տիեզերական սրտածութեան տեսակէտով ձեձ նշանակութիւն ունեցող իր այս դերով և զայն վարդեա ձեւքով կատարած ըլլալուն համար եւրոպայի ձեձ քննադատներէ իր ստացած այսքան բարձր գնահատումներով աւելի ևս արժանի է ձեր շնորհաւորութեանց և շնորհապարտութեանը :



Պարսկական շիշ, Դաւրեժի ձեջ գտնուած  
(Ժ. Գ. դար)

(\*) Մեծանուն Շրահապի գեղարուեստագէտ և Art Nouveau հաստատութեան հիմնադիր և սիրէն :

(1) Chants populaires arméniens. — Introduction.

ՀԱՆԳԱՆԱ ԿՈՒԹԻՒՆ  
ԱՐՈՎԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ Ի ՆՊԱՍՏ

Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը գեղեցիկ գաղափարն ունեցած է Արովեանի ի պատիւ յուշարձան մը կանգնելու Երևանի մէջ . արտօնութիւն ստացած է արդէն կառավարութիւնէն , և զիմած Հայ արձանագործներու որպէս զի յուշարձանի ծրագիրներ ուղարկեն և ստացած է քանի մը Հայ արձանագործներու աշխատութիւնը . այնպէս որ կը մնայ «քոնքուէր» ով որոշել լաւագոյն ծրագիրը և պատուիրել յուշարձանին յօրինումը : Դժբաղդաբար , Կուլտուրական Միութիւնը որ 18000 ընդհանրապէս մար մը անհրաժեշտ նկատած էր այդ գործին համար , չէր խորհած միեւնոյն ատեն՝ Հայ արձանագործներու զիմելէ առաջ՝ այդ գումարը ապահովել . Թերևս կը կարծէր թէ այդքան համակրելի գաղափարի մը համար՝ Հայ հասարակութիւնը ինքնաբերաբար խեղոյն պիտի գոյացնէր այդ գումարը : Արդ , Հայ արձանագործները իրենց նիհար միջոցներով բաւական ստուար զոհողութիւններ յանձն առած՝ «մաքէթ»ներ պատրաստած և ուղարկած են , մինչդեռ հարկ եղած գումարին տեղ՝ կայ միայն ու միայն 200 ընդհանրապէս : Բագուի Հայերը , որ Հայ ազգին ամենէն հարուստ մասը կը կազմեն , այդ գումարը չփութացին նուիրել : Աւ զարմանալի չէ ասիկա : Երբ կան որբեր , այրիներ , ցաւագարներ , հաշմանդամներ , յիւմարներ , կոտորածէ փախած արիւնդուայ սովալլուկներ , Հայ ունեւորը իր պարտականութիւնը կը կատարէ . երբ զուտ մտաւորական վեհ , խրոխտ , լուսաւոր գաղափարի մը իրականացման պէտք է օժանդակել , Հայ ունեւորը՝ բաց ի ամենացանցաւ բացառութիւններէ , անտարբեր կը մնայ : Կուլտուրական Միութիւնը , ճարահատ , զիմեց հին մեթոտին , թատերական ներկայացում մը տալ ի նպատակ այդ գաղափարին . ներկայացումէն գոյացաւ 2000 ընդհանրապէս , սիրուն գումար , բայց որ դեռ շատ հեռու է 18000էն : Այս խղճալի կացութիւնը տեսնելով , Թիֆլիսի Հորիզոն Թերթին մէջ՝ մեծատաղանդ բանաստեղծ Յով. Թումանեան սրամիտ գաղափարն ունեցաւ զիմե-

լու Հայ աղքատիկ քսակներուն . քանի որ խոշոր քսակները փակ կը մնան , ըսաւ , թող կոպեկներով կանգնուի Արովեանի արձանը : Հանգանակութիւնը բացուած է Հորիզոնի խմբագրութեան չորսմէ : Ժողովրդական հանգանակութեան մը գաղափարը անհունապէս սիրելի է մեզի : Այդ մասին որոշապէս գրած ենք Անահիտի նախորդ թուի նախօրուածին մէջ : Ախալ է որ ազգի մը մէջ ամէն բան հարուստներէն սպասուի : Ամէն Հայ՝ մեծ նպատակներու ի նպատակ պէտք է իր չափով զոհողութիւն մը յանձն առնէ : Բայց , ո՞վ տիրութիւն , այս ժողովրդական հանգանակութիւնը ալ շատ փայլուն արգիւնք մը չտուաւ ցարդ : Երկու ամիս է որ սկսած է և դեռ 600 ընդհանրապէս գոյացած է միայն :

Ինչքան աւելի եւանդ , փութկոտութիւն , նոյն իսկ զոհարարութիւն ցոյց կուտանք Հայերս , երբ մենէ մէկուն հօրը փորելու վրայ է խընդիրը . . .

Ցաւալի չէ : Առաջին անգամն է որ Հայ ազգը յուշարձան մը պիտի կանգնէ իր մեծ զաւակներէն մէկուն . օտարները ո և է արդեւք դրած չունին , ընդհակառակն , կառավարութիւնը խեղոյն շնորհեց թոյլտուութիւնը : Անձը որուն ի պատիւ պիտի կանգնուի յուշարձանը , ամբողջ Հայութիւնէն պաշտուած անուրախ հեղինակն է Վերջ Հայաստանիին , Հայ մը որուն անունը միայն քաղցրութիւն մը և հպարտութիւն մըն է ամէն Հայու՝ ինչ կուսակցութեան կամ դասակարգի պատկանի անիկա . . .

Մենք կը խնդրենք մեր բոլոր ընթերցողներէն իրենց նուիրատուութիւնները փութացնել Հորիզոնին (Journal Horizon, Tiflis, Caucase) : Եւ կը խնդրենք բոլոր Հայ թերթերէն որ արձագանք հանդիսանան Հորիզոնի կոչին և իրենք ալ հանգանակութիւններ բանալով ուղարկեն Կուլտուրական Միութեան : Աղքատ կամ հարուստ , պահպանողական՝ կամ ազատական , թըքահայ , պարսկահայ կամ ռուսահայ , արեւելահայ պէտք է մասնակցի այդ հանգանակութեան :

Յուշարձանը պէտք է զետեղուի Երևանի հրապարակներէն մէկուն մէջ . Մենք համաձայն չենք լէօին որ կառուցարկէ Քանաքեռի մէջ կանգնել զայն . յուշարձանը պէտք է ցցուի Երևանի մէջ , նախ որովհետեւ բազմամարդ

քաղաքի մը մէջ այդ արձանը կանգնելով աւելի լաւ պատուած կ'ըլլանք Արովեանի յիշատակը, երկրորդ՝ որովհետեւ պատշաճ է և արգար է որ առիական բռնակալութիւնը խորհրդանշող և այժմ քայքայուած «բերդ»ին դիմացը կանգնի պատուութեան առաջին հայ գիւցազներգակին յուշարձանը :

### Հ Ի Ա Շ Ք Ի Ն Ա Ղ Ա Ի Ի Բ Ը

Պատեիզակի «Դեղընքան աղբիւր»ի յիշատակին :

Աղջիկս, եկուր, քեզ տանի՛մ  
Բըլլան գօտի եղող ճերմակ ուղիէն  
Արձիւ աղբիւրն հրաշքին :  
Հիւանդներուն թափօրն անոր կը զիմէ  
Արեւին տակ հաղարով :  
Լուրթ ու կարմիր վարշամակով, խուռներած,  
Կերթեան գանդող, կը լրսն ձայնն աղօթքին  
Բըլլան գօտի եղող ճերմակ ուղիէն :  
Չեռքդ ինձի տուր, դուստրդ, աչքերդ ծածկէ  
Չիւստողիտակ քօղիդ տակ  
Որ ըզգաս — ինք մինչեւ զըզէլը հոգուդ —  
Արեգակին հասն առողջ  
Որ շուրջը մեր կը բարձրանայ աւասիկ  
Անդորրաւէտ այգիէն :  
Տերեւներուն տակ լացիչի  
Կը կարծրին սղիզիներն, ո՛րքան ատոք .  
Որթատունկէն կորակար  
Կարծես գինին — որ աշնան  
Ծունկերուդ ուժ պիտի տայ —  
Հողին վըրայ պիտի թափի անհամբեր :  
Քալէ՛, աղջիկըս, քալէ՛,  
Մօտ է աղբիւրն հրաշքին :


Վատախտարակ անբոխը գայն չըծածկած,  
Աղջիկըս, տե՛ս, ի՛նչպէս հըօր կը բըղկի  
Ժայռին ծոցէն գուռին մէջ :  
Մարաւանդէն թրխապըտուղ ճորենին  
Անոր վըրայ է կախուեր :  
Ո՛րքան ճարգրիտ ակին մէջ,  
Եւ գուռին մէջ ո՛րքան լոյս :  
Հովիտին խորը թագնուած  
Ան աղամանդ ու երգ է,  
Երգ ճըն է ան՝ մենութեան մէջ գըլգըլուն,  
Որուն ի լուր Մայր Բընութիւնը շուրջի  
Գիշերուն մէջ կ'աւշաւէտի կը մեղմէ  
Ծըլարձակձան աշխատանքն իր ճանրակիր :  
Հեռուներէ՛ն ու խորերէ՛ն ան կու գայ . —  
Կ'անցնի թաքուն անձաներէ՛ ուր աւակախ  
Շըթաքարեր կան լաղուարդ  
Նայաղներու աչքերուն պէս արուստուղ,  
Ուր կան հուրեր, լո՛ծ ոսկիի լըձակներ,  
Լայնածաւալ անասուներ՝

Իրենց մէջի ճըրըրկին հետ ածխացած,  
Ուր կան բրածոյ աղամանիկայ խըլուրդներ,  
Մարգարտացած հին օձեր .  
Ուր կայ սառույց բիւրեղեայ՝  
Որուն հաղիւ կը համին  
Մայրիներուն վիճապատառ արձատներն . . .  
Հեռուներէ՛ն ու խորերէ՛ն ան կու գայ :  
Եւ կը պատմեն թէ առած է ա՛յն օրէն  
Պայծառութիւնն իր լուսեղ՝  
Երբ սըբբուհի մը ձօտակայ գիւղերէն  
Եկաւ անոր մէջ լըւալ  
Համեստ աչքերն այրմարդէ բնու չհամբուրուած :  
Ո՛հ, ջուրն է սուրբ. աղջիկըս, ջուրը դեղ է՝  
Գերեզմանի հոտ բուրդ  
Ամէն տեսակ ախտերու :  
Հիւանդներուն հօտն ահա  
Ի՛նչպէս անոր լոյսին վըրայ կը հակի :  
Կ'ըմպէ՛ն, կ'ըմպէ՛ն, և ջուրին մէջ կը հազան .  
Կ'ըմպէ՛ն, կ'ըմպէ՛ն, և ջուրին մէջ կը տըքան :  
Կիներ են, տես, որ բընու  
Վարդ շըրթունքներ և վարդ սյուներ չունեցան .  
Ծըրխախտախ արտերուն մէջ՝ թունաբեր  
Ծառին բունին վրայ բունուղ  
Մունկերուն պէս գեղնեցան :  
Իրենց արգանդը երբէք  
Բեղմնաւորել չըրօրեց սերմն առնական :  
Կ'ըմպէ՛ն, կ'ըմպէ՛ն, և կը կապեն ճարքերի  
Մօրենիին ճիւղերուն  
Հարսանեկան նուրբ նարսանին իբրը նուէր,  
Եւ աւասիկ պտուկներն իրենց ծիծերուն  
Անգամ ճըն ալ կը թաթախեն աղբիւրին  
Ձօլութեան մէջ, — ու կ'ըմպեն :  
Տըլաքներ են, պատանիներ ջախտաւոր,  
Գործատունի մէջ ճընած,  
Որոնց աչքին մէջ խուժեց  
Արին մ'հիւանդ ու տեսաւտես, կամ որոնց  
Թեւն ու սըրո՛ւնքը մեքենան հաւատքեստ  
Իբրեւ վիշապ մ'ամենի՛  
Խըլեց, խուռնեց, կուռ ժանիքովը կասկեց :  
Կու գան ահա նըւիրական ջուրին մէջ  
Լըւալ իրենց Աշխատանքի վէրքերուն  
Բերանն հրաբուրք, և բիծերն  
Իրենց երկար թարթիչին :  
Կոյներ են, տես, ժանեկագարդ քոյրեր են,  
Որ բարձի վրայ հալեցան  
Փըրփուրներու պէս լըւիկ .  
Որոնց թօքին կէսն, աւա՛ղ,  
Դատարկեց որդը սիրոյ  
Եւ արդէն իսկ պըտըպուց  
Անոնց սըրտին վըրայ սողունն իր ցըրտին .  
Ահա լացիչի քօղերուն տակ կը հակին  
Աղբիւրին վրայ, կը խըմեն փա՛կ աչքերով .  
Աւերն իրենց գէճքերուն  
Չըտեսներու համար խորունկը ջուրին՝  
Կը խըմեն փա՛կ աչքերով :  
Եւ կը զօղեն ճաղերնէն փունջ մ'օձամուտ  
Մօրենիին՝ արդէն նուէրով բեռնաւոր,  
Ու կը դառնան ճըրմուռններով աղօթքի  
Բըլլան գօտի եղող ճերմակ ուղիէն :

Գո՛ւտորը , ահա մինակ ենք .  
 Հաւատքը թող տաք անձրեւի ձը նըման  
 Մեր սըրտերուն մէջ ցողի :  
 Եկո՛ւր , եկո՛ւր , ո՛վ իմին սէրս անուշակ ,  
 Զանազանոյ աւագուտին վըրայ նուրբ  
 Ծալլէ ծունկերդ դողդոջ  
 Եւ աղբիւրին վրայ ծըռէ :  
 Ահա ես քողըդ ետ առի . — ո՛րքան լոյս  
 Ճառագայթեց դէմքիդ վրայէն ակին մէջ :  
 Կարծես բերնին մէջ աղբիւրին՝ երկընթէն  
 Ասորդ մ՛ ընկեր կը ցոլայ :  
 Ըմպէ՛ , աղջիկըս , ըմպէ՛ :  
 Եւ թող կուրծքիդ տակ մուսի  
 Եղեւնաւոր սէրն այն հըպարտ պարմանին  
 Որ քեզ աըւա իր ճատանին , սիրտը ո՛չ :  
 Մի՛ , մի՛ հազար , ըմպէ՛ , աղջիկըս , ըմպէ՛ .  
 Այս ջուրը սուրբ Աստուածամօր արտօսում  
 Է գոյացած , թախիժդ ընդհուպ կը բուժէ .  
 Նորէն այտերդ գինիի մէջ թաթխըւած  
 Դուշանի պէս պիտ՛ բուրեն  
 Գեղ ու առոյգ թարմութիւն .  
 Եւ երբ քալես՝ պիտի սըրտիայ միսըդ յոյր  
 Բիւր ձեւերով ներդաշնակ :  
 Ըմպէ՛ , աղջիկըս , ըմպէ՛ .  
 Եւ աղբիւրին քու տալիք  
 Նըւէրդ ահա կը աըրոփէ ափիս մէջ .  
 Տատրակն է այս Աստղիկին .  
 Վարդ կըտուցով , փետուրներով ձիւնաթոյք  
 Տատրակն՝ որ միշտ թեւածեց  
 Դուրջը գըլխուդ , և ծիծերուդ վրայ թառած  
 Իր ջուրը եղի միշտ խըմեց  
 Սըրտիդ ակէն վիրաւոր :  
 Այս քու հիւանդ սիրոյդ նըշա՛նը , — ճորթէ՛ ,  
 Գուռին քարին վրայ ճորթէ՛ :  
 Հերի՛ք ճոցիդ մէջ գըգուես  
 Գըլուխը ժիր և իր խոցոյ ճապուռներն ,  
 Հերի՛ք լուսեղ ափիդ մէջ  
 Կերցընես կուտն իր անգին .  
 Աստղիկի այդ տատրակը վարդ կըտուցով՝  
 Գուռին ճամուտ քարին վրայ  
 Մորթէ՛ , աղջիկըս , ճորթէ՛ :

ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՇԱՀ-ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ՍԿՁԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ



Յունուար 27ի իրիկունը՝ Շահ-Մուրատեան  
 Ֆառաքի մէջ իր սկզբնաւորութիւնը ըրաւ՝ յա-  
 ջողութեամբ :

Առաջին անգամն է որ Փարիզի Օփերային  
 պէս տիպերահնչակ երաժշտական բեմի մը  
 վրայ , Ֆառաքի պէս նշանաւոր գործի մը գըլ-  
 խաւոր գերին մէջ , հայազգի արուեստագէտ մը  
 կ'երևայ , կը փայլի , և գեղեցիկ ապագայի մը

յոյսերը կը ներշնչէ : Զերմայէս կը շնորհաւո-  
 րենք մեր տաղանդաւոր և հաստատակամ հայ-  
 բենակիցը , որ իր ցեղին ամենէն պատուաբեր  
 զաւակներէն մին կը հանդիսանայ :

Կը հրատարակենք ստորև՝ փարիզեան կա-  
 րեւորագոյն թերթերէն ոմանց յայտնած կար-  
 ծիքի թարգմանութիւնը .

“Օփերայի տնօրէնութիւնը երէկ իրիկուն  
 մեզի ներկայացուց Կունոյի Ֆառաքին մէջ՝ Պ.  
 Շահ-Մուրատեանը , երիտասարդ թեւոր մը ,  
 առաջին մրցանակով ելած քոնսերվատուարէն ,  
 ուր ուշադրութիւն գրաւեց այնքան իր “տըմի-  
 քարաքթեր” թեւորի սիրուն ձայնով որքան իր  
 աշխատասիրութեամբ և յարատեւութեամբ :

“Երկու տարի առաջ՝ Պ. Շահ-Մուրատեան  
 կրնար աներկիւղ թողուլ դպրոցը և ասպարէզ  
 իջնել : Բայց առաջին մրցանակ չէր ստացած , և  
 կ'ուզէր անպատճառ ձեռք ձգել զայն : Գպրոցին  
 կանոնագրութիւնը ատոր չէր հակառակեր : Ամ-  
 բողջ տարի մը ոգի ի բռնի աշխատեցաւ , իր  
 վարպետներուն խորհուրդներէն արդիւնաւորա-  
 պէս օգտուեցաւ : Այդ տասն ամսուան միջոցին՝  
 բաւականաչափ կատարելագործուած էր իր ար-  
 ուեստին մէջ որպէս զի թիւրին այլ ևս իրեն  
 չզլանար մրցանակը զոր այնքան ջերմօրէն ցան-  
 կացած էր ունենալ :

“Եւ այդ վարձատրութեան շնորհիւ է որ  
 Պ. Շահ-Մուրատեան , Օփերային հետ պայմա-  
 նաւորուած , երէկ իրիկուն առաջին սկզբնաւո-  
 րութիւն մը ըրաւ որ իր ապագային համար  
 բարեգուշակ է : Իր մէջ կրկին գտանք նոյն  
 լուրջ արուեստագիտական յատկութիւնները  
 որոնցմով ուշադրութիւն գրաւած էր վերջին  
 մրցումին : Չայնը սիրուն “թեմպը” մը ունի ,  
 շատ արտայայտիչ , շատ հնչուն , և սկսնակը  
 անսայթաք կերպով կը վարէ զայն :

“Առաջին արարուածը և Պարտէզին արա-  
 րուածը իրեն նպաստաւոր եղան : Մենամարտի  
 եօթնամայնին մէջ՝ գովելի ջանքեր ըրաւ . բանտի  
 երկանուագին և եռանուագին մէջ իր դատը  
 շահած էր : Այս առաջին փորձը՝ իրեն պա-  
 տուաբեր եղաւ :

“Արդէն՝ սքանչելի կերպով օժանդակուած էր  
 Օր-Ալէքսանտրովիչէն , որ դմայլելի Մարկիթ մը  
 եղաւ , Օր-Քուրպիերէն , հաճելի Սիւպել մը ,  
 Պ. Տելմասէն , միշտ հոյակապ՝ Մէֆիսթոֆելէսի

դերին մէջ, և Պ. Տիւրքոյն, պատուական Վալանթին մը : Ամենքն ալ ծափահարուեցան ներկայացման միջոցին, և իւրաքանչիւր արարուածէ յետոյ ի տես կոչուեցան ջերմ՝ ծափահարութիւններով, մանաւանդ երեկոյթէն վերջը, երբ ամբողջ սրահը խանդավառ «օվասիօն» մ'ըրբաւ կունօյի գլուխ-գործոցին թարգմաններուն :

«... Հասոյթն եղաւ 22000 ֆրանք :»

(Լը Կոյուա)

«Պ. Շահ-Մուրատեան երէկ իրիկուն իր սկզբնաւորութիւնը կ'ընէր Օփերան՝ Ֆաուսթի մէջ : Ներկայացումը հոյակապ եղաւ : Սկսնակը շրջապատուած էր ամենափայլուն խաղակիցներով : Պ. Շահ-Մուրատեան արտօթելի ձայն մը ունի՝ լաւ թէմպոով, և շատ յաջող է «տրմիթէնթ»-ին մէջ. վանկերը շատ լաւ կը յօդէ, գրեթէ ամբողջապէս թօթափած է իր արեւելցիի հնչումը, և եթէ տակաւին ցոյց չի տար քաջավարժ բեմական ձիւքեր, գէթ ակնահաստոյ ֆիզիքական երեւոյթ մ'ունի : Իր յաջողութիւնը շատ տաք եղաւ :»

(Փարի-ժուրնալ)

«Երէկ իրիկուն, Օփերային մէջ, լեփ-լեցուն և շատ փայլուն սրահի մը առջեւ Ֆաուսթը տրուեցաւ : Պ. Շահ-Մուրատեանի սկզբնաւորութեան համար : Երիտասարդ թենորը, շատ սիրուն ձայնով մ'օժտուած, և արդէն իսկ ուշագրաւ արուեստի մը տիրացած, հասարակութեան ծափերը խլեց քանի քանի անգամ :

(Էֆօ սը Փարի)

Երէկ իրիկուն, Պ. Շահ-Մուրատեան կ'երևաւ արուստին անգամ Օփերան՝ Ֆաուսթի դերին մէջ : Անշուշտ շատ փորձառութիւն կարելի չէ պահանջել այս երիտասարդ թենորէն, որ թէպէտ լուրջ ուսումնասիրութիւններ ըրած կը թուի, սկսնակ մըն է՝ բառին ամբողջ նշանակութեամբ : Սակայն յաջողեցաւ շատ պահարկունութեամբ զսպել իր յուզումը և գնահատել տալ այն շատ իրական յատկութիւնները որոնց շնորհիւ քոնսերվատուարին մէջ առաջին մրցանակ մը ստացաւ : Այդ յատկութիւնները պիտի ընդլայնին հետզհետէ՝ երբ ինքնավստահութիւնն ու արհեստի քաջավարժութիւնը ստանայ աւելի մեծ չափով : վարժուելով Օփերայի սրահին,

հետզհետէ հարկ եղած տարողութիւնը պիտի տայ իր երանգներուն, և անշուշտ՝ զինքը շրջապատող պատուական խորհրդատուներուն մէջ պիտի գտնուին իրեն ըսողներ որ նուազ թոյլ գնացքով մը երգէ : Բայց սա անտարակուսելի է որ իր ձայնը շատ սիրուն թեմպո մը ունի, շատ համակրելի գոյն մը, և օտարականի թեթեւ հնչում մը զոր պահած է՝ չի վնասեր իրեն, ընդհակառակն, և թէ շատ մը կտորներու մէջ ամենալաւ ճաշակի ապացոյցներ տուաւ : Հասարակութիւնը զինքն ընդունեցաւ շատ բարեացակամութեամբ և ամենէն իրախուսիչ յաջողութիւնը շնորհեց իրեն :

(Քոնէսիա)

Պ. Շահ-Մուրատեանի սկզբնաւորութեան համար, երէկ իրիկուն Ֆաուսթ տուին Օփերան, առաջնակարգ խումբով մը. սկսնակը, որ շատ սիրուն ձայնով մ'օժտուած է, ամբողջ սրահին կողմէ՝ որ լեփլեցուն էր և շատ փայլուն՝ գտաւ ամենաջերմ ընդունելութիւն մը :

(Ֆիկարօ)

«Հայազգի երիտասարդ թենորը՝ Շահ-Մուրատեան, որ քոնսերվատուարի շատ փայլուն աշակերտ մը եղաւ և որ այնտեղ ունեցած իր յաջողութիւններով Պ. Մեսսեթէի և Պրուսանի ընտրութեան արժանի հանդիսացաւ, Օփերայի բեմին վրայ իր սկզբնաւորութիւնն ըրաւ Ֆաուսթի մէջ :

«Երիտասարդ արուեստագէտը ի դերը չըհանց այն յոյսերը զոր հանրային մրցումներու մէջ իր ցոյց տուած յատկութիւնները ներշնչած էին : Իր ձայնը, որ շատ մասնաւոր հրապոյր մ'ունի և որ իր ոսկեղօծ «թէմպո»-ին շնորհիւ բոլորովին արեւելեան համեղութիւն մը կը ստանայ, շատ հաճելի եղաւ հասարակութեան : Պ. Շահ-Մուրատեան գիտէ արդէն զայն վարել վստահօրէն և ճաշակով : Զմայլելի «տրմիթէնթ»-ներ ունեցաւ, վանկերը կը յօդէ պատուական կերպով, և անվախութիւնը չի պակսիր իրեն :

«Իր բարեձև արտաքինը, իր համակրելի ձևերը իրեն համար կը կազմեն բեմական ձիւքեր զոր փորձառութիւնը իրենց կատարելութեանը պիտի հասցնէ : Իր գտած յաջողութիւնը շատ բուն եղաւ :»

(Լը Փըթի Փարիզիէն)

# Հ Ա Յ Է Ձ Ե Ր

## ՏԱՂ ՍԻՐՈՅ

(ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒԼԿՈՒՐԱՆՑԻ)

Յանկարծակի ձեկ մի տեսայ որ կու ցօլայր գոյնն երեսէն .  
 Թայցայ անկայ ի տեսնէն՝ շողայր կաթէր լոյսն ի վըղէն .  
 Աչքերն է ծով , ունքն է թուխ ամպ , ծաղն է դեղձան ոսկի թելէն .  
 Ձինքըն ճօհար՝ գէտ դուռի ճեղ՝ Տըրով այրէր զերկիր ամէն :  
 Ճոխազընաց ճանրաքայլով , հոգիքն ի ճարձընէ քակով ,  
 Լուծֆն է ծածկեր զամէն աշխարհս , շարար կաթէր իւր քարամէն :  
 Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ , նայ վառեցայ գէտ մոմեղէն ,  
 Խելազընաց ի վայր մնացի , զարհուրեցայ ի տեսնէն :

Խեւ Յովանէս Թուլկուրանցի , խիստ մի՛ հաներ զոտքդ ի ծըրէն .  
 Աղէկ սուրաթն երբ մեռանի , ցածքի զընաց գոյնն երեսէն :

Էջմիածնայ ձեռ. քիւ 1999 (Տաղարան).

## Ք Ր Ո Ն Ի Կ

**Շ**ատ գէշ ճգնաժամ մըն է որ կ'անցընէ այս պահուս մեր ժողովուրդը : Աւելի գէշ քան կալիցինի կամ Համիտի օրերուն իր անցուցած ահաւոր ճգնաժամները : Այդ հին ժանտ օրերուն՝ թշնամին դրսէն էր , Հայր կ'երևար զոհ մը , որ կը տառապի բայց կը դիմադրէ , համակրելի ամէն կերպով , պատիւը անկոծ , ապագան յուսալից՝ մութ ներկայի մը մէջէն : Այսօր՝ քառսի մը մէջ կը տապալակի որուն միակ ստեղծողը ինքն է : Եւ ասիկա ահաւելի , ամօթալի , յուսահատեցուցիչ բան մըն է : Ես միշտ ջերմ ցանկացող եղած եմ որ մեր լեզուն տարածուի , ծանօթ ու սիրելի դառնայ օտարներուն : Բայց այս միջոցին՝ գրեթէ բարեբաստիկ կը համարիմ զմեզ , որ օտարները չեն գիտեր հայերէն : Ի՞նչ պիտի մտածէին մեր մասին՝ եթէ կարգային այս պահուս Պոլսոյ կամ Թիֆլիսի թերթերը և մեր ներքին կեանքը ճանչնային իր ամբողջ ցաւազարուածեամբ... Ի՞նչ պիտի մտածէին :

Մենք միշտ պարծենցած ենք թէ իրաւունքի նախանձախնդիր , արդարութեան ախոյեան ժո-

ղովուրդ մըն ենք . Ատանայի կոտորածէն յետոյ , մենք զայրոյթի ճիչեր արձակեցինք տեսնելով որ արդարութիւնը լիակատար կերպով տեղի չէր ունենար՝ յանցաւորները պատժելու գործին մէջ... Իսկ մե՞նք . — մենք հիմա երևան կը հանենք գայթակղութիւններ աւելի տխուր , Օրմանեան սրբազանը ամենախայտառակ կերպով կոխտեցին իր հակառակորդները՝ Օսմ.Սահմանադրութեան հաստատման առաջին օրերուն , զինքը ներկայացուցին իբրև Համիտի մեղսակից , մատնիչ , ազգատեսաց , ազգին դրամները իւրացընող , ևն . ևն : Ան հրատարակեց իր հաշիւները և պահանջեց դատ . ահա երկուք ու կիս տարի է որ կը տեւէ այդ դատավարութիւնը , և դեռ չէ վերջացած , ու Օրմանեան սրբազանի պէս անձնաւորութիւն մը , որ պատրիարքութեան միջոցին ունեցած է թերութիւններ , բայց որ՝ իր ամբողջ կեանքն ու բովանդակ գործունէութիւնը և իր բազմազանի կարողութիւնները ի նկատի ունենալով՝ մեր հոգեւորական դասուն ամենէն հզօր և բեղուն գէմքերէն մին է՝ մեր իսկ այս անխիղճ ընթացքով (և այսպիսի օրերու մէջ ուր մարդու սով ունինք) կը մնայ անգործ , տունը փակուած :

15 տարի շարունակ մենք աղաղակեցինք

Եւրոպային թէ հայ ժողովուրդը քաղաքակիրթ տարր մըն է, բարբարոս ուժերէ հալածուած, ճնշուած, և թէ ազատ բեժիմի մը մէջ՝ ան մեծ թուիչ կարող է առնել և ընդհ. քաղաքակիրթութեան մեծ ծառայութիւններ մատուցանել: Այսօր ահա Տաճկաստանի մէջ կայ բեժիմ մը, որ հեռու է կատարեալ ըլլալէ, բայց որ Հայուն թոյլ կուտայ գէթ իր պատրիարքարանին, ազգային ժողովին, իր բոլոր ցեղային հաստատութեանց կանոնաւոր պաշտօնավարութիւնը վերահաստատելու. արդ, պատրիարքարանը և ազգային ժողովը երբէք՝ նոյն խիչ հին բեժիմի ամենէն մնայլ օրերուն՝ չեն ընծայած այնպիսի անիշխանական. արտառոց, թոհուրհոհային կացութիւն, ինչքան այժմ: Երուսաղէմայ միաբանութիւնը՝ որ շատոնց ի վեր փորձանք դարձած է հայ ժողովրդի գլխուն, նոր բեժիմի մէջ աւելի մեծ գայթակղութիւններ երեւան հանեց, աւելի խայտառակ ըրաւ հայ ազգի պատիւը՝ քան երբ և իցէ: Այժմ կ'աւելիցն չկայ հիմա. բայց ի դաշնակցականներու դէմ մասնաւոր հալածանքէն որ հակահայ բնոյթ չունի, այլ հակայեղափոխական ընդհանուր պայքարին մէկ փուլն է միայն, կառավարութիւնը հայ հասարակութեան ներքին խաղաղ բարգաւաճմանը, ցեղային հաստատութեանց պարգացմանը հանդէպ յայտնապէս թոյլատու ընթացք ունի. թատրոն, մամուլ, գրանանութիւն ազատ են. դպրոցներու հիմնարկութիւն, Էջմիածնայ վերանորոգում, Հրատարակչական ընկերութեան վերահաստատում, Աբովեանի արձանի կանգնում, այս բոլորը արտօնուած են: Արդ, Հայերը կ'օգտուին՝ այս պայմաններէն՝ ինչքան որ կարող էին, ցոյց կուտան այդ «մեծ թուիչը»: Ո՛չ: Հրատարակչական Ընկերութիւնը մէկ ու կէս տարի է որ հիմնուած է, և դեռ մէկ փոքր չէ հրատարակած, ու հասարակութիւնը անոր տուած է դեռ միմիայն 350 կամ 400 անդամ, խղճալի թիւ... Աբովեանի արձանը կանգնելու հարկաւոր դրամը գտնելու համար նախաձեռնակներուն հոգին բերանը կուգայ, և դեռ շատ հեռու են... Մեր Հայրապետը վախճանեցաւ, և որպէս թէ մեր Մայր-Աթոռին դարձեալ այսպէս յանկարծական կերպով թափուր մնալը՝ և մանաւանդ այնպիսի մարդու ու մեծ դէմքի մը վաղաժամ անհետացումը բա-

ւական չըլլային մեր սիրտը անհուն վշտի մէջ թաղելու համար, ահա այդ մահուան լոյսովը՝ երեւան կուգայ Էջմիածնայ միաբանութեան ներքին կռիւներէն կազմուած հեռալից, մնայլ պատկերը, — այնքան աւելի մնայլ, տխուր, ու վճատեցուցիչ, որ այդ միաբաններէն ոմանք որոշ յատկութիւններով լեցուն մարդիկ են, հմուտ են, աշխատասէր են, տաղանդաւոր են, բայց «միաբան» չեն, ոչ միայն քրիստոնէական միաբանութեան մը կարգապահութեան, համերաշխութեան և հնազանդութեան ոգին չունին, այլ նոյն խիչ պարզ մարդկային, հայրենասիրական համերաշխութեան զգացումէն զուրկ են: Անհար է ընդունիլ թէ Հայրապետին մահուան պատճառ եղեր են միաբանները. սրտի հիւանդութիւնը անողոք է, և Հայրապետը քանի որ ունէր այդ հիւանդութիւնը՝ որ (ինչպէս այժմ երեւան կ'ելլէ) բաւական յառաջացած էր, անոր օրերը ուրեմն համրուած էին. զմեզ չցուցնենք աւելի յանցաւոր քան ինչ որ ենք, այդպիսի ահեղ ոճիր մը չբարդենք մեր խղճին վրայ: Բայց եթէ մենք չենք զայն մեղքնողը, ձիշդ է որ անոր վերջին տարին դառնացնողը, թունաւորողը մենք ենք եղած, մենք՝ հայ ազգը՝ Էջմիածնայ միաբաններուն ձեւին տակ...: Աւ վաղը, մեր առջև կը կանգնի՝ նոր Հայրապետի մը ընտրութեան հարցին հետ, և անկից առաջ՝ սա հարցը. — «Էջմիածնայ մէջ անհրաժեշտ է որ հայ-քրիստոնէայ խիական միաբանութիւն մը գոյութիւն ունենայ, որոշ օրէնքներով, կարգապահութեամբ, համերաշխութեամբ և հնազանդութեամբ կապուած ներդաշնակուած. — հակառակ պարագային՝ լաւագոյն է հայրապետ մը զրկելու տեղ՝ ջլախտաբոյժ մը զրկել հոն: Իսկ Պոլիս, չեմ գիտեր այս պահուս ի՞նչ կամ ո՞վ զրկելու է՝ կազմուած յիմարական թնձուկը լուծելու համար. — հրաշագործ ոգի մը, երկնաւաք հրեշտակ մը հաղիւ կարողանայ մէջէն ելլել: Ամէնքը կարծես կը ջանան կոր կրցածնին ընելու որպէս զի իրերու վիճակը աւելի անլուծելի, աւելի արտառոց դառնայ: «Ազատականի և պահպանողականի պայքար է՝ ըսողներ կան. բայց ես ոչ ազատականներ կը տեսնեմ հոս և ոչ պահպանողականներ, այլ հիւանդ հասարակութիւն մը, որ կիցած տեղը ոտքերը գետինը կը գարնէ, ու

յաճախ ինքզինքը կ'աքացէ այդ երերուն բայց երբէք չյառաջացող ողորմելի ոտքերովը... Ամբողջ քառու սապէս «անիմաստ» հարցերէ ծագած է' Հոգեւորականները դո՛ւրս ազգային գործերէն . — Կուսակցականները դուրս ազգային գործերէն . — Եկեղեցիները լսարան դարձնել — Սօփան կուսակցական պայքարի սովորական ու պաշտօնական գէնքերէն մին դարձնել — Սօփա զարնողն ու սօփան ուտողը պատրիարքական հոգածութեան ու սիրոյն հաւասարապէս արժանի զաւակներ համարիլ... բոլորն ալ նշանները՝ յոգնած, շուարած, ղէկն ու հաւասարակշուութիւնը կորսընցուցած, «նէօրասթենիք» հասարակութեան մը ...

Ու մինչ այս խառնաշփոթութեան մէջ կ'երերտկան, կը տապալակին, կամ աւելի ճիշդ՝ սկիւռի նման իրենք իրենց վրայ անընդհատ կը դառնան Պոլսոյ Հայերը, Ի՛նչքան ինքզիններ, ցեղին պատիւին կամ շահերուն հետ սերտ կապ ունեցող, կը մնան երեսի վրայ... Գործելու համար նպաստաւոր պայմաններ կան ու գործող չկայ... Այս բոլորը արդարև յուսահատեցուցիչ է :

\*\*\*

Բայց ես այս «յուսահատութիւն» բառը չեմ սիրեր: Եւ կացութեան ամբողջ տիրութիւնը մատնանիշ ընելէս յետոյ, ես ինքս կ'ուզեմ որ յուսահատութիւնը վաննէք մենէ հեռու, և ջանանք բժշկել մենք զմեզ: Ես չեմ ընդունիր այս կացութեան մէջ տեսնել, ոմանց նման, մեր ցեղին հոգեբանութեան սովորական ու մշտական պատկերը սկիզբէն ի վեր Ո՛չ. եթէ մեր ցեղը միշտ այսպէս եղած ըլլար, հարիւր տարի չէր տեսեր ան, և չէր կարող կանգնել ո՛չ մեր հոյակապ լեզուն, ո՛չ մեր հին շքեղ արուեստը, ո՛չ մեր պատմութեան կարգ մը փառաւոր էջերը: Ո՛չ: Թամանակաւոր անկման, խոնջէնքի, ջլագարութեան շրջանի մը մէջ ենք, շատ բացատրելի՝ 15-20 տարուան հսկայ պայքարով, մեր ուժերէն շատ վեր պայքար մը, որուն մէջ ոչ միայն նիւթապէս, այլ և բարոյապէս շատ արիւն կորսնցուցինք մենք: Բուժուելու համար այս սպառիչ տկարութենէն, մենք պէտք ունինք ամէն բանէ առաջ բարոյական դարմանումի մը ինքզինքնիս ենթարկելու. պէտք է որ — ասիկա կը կրկնեմ քսաներորդ անգամ ըլլալով, — մեր իւրաքանչիւր

կուսակցութիւնը, իւրաքանչիւր անհատը՝ ամէն անգամ որ ազգին ընդհանուր հիմնական շահերը խնդրոյ առարկայ են, ազգային մեծ եսը իր մասնաւոր եսէն առաջ զնել գիտնայ: Ասով է որ մեծ ազգերը մեծ եղած են: Այս ոգին պէտք է որ մենք ներմուծենք, տարածենք մեր մէջ: Ահա միակ դեղը մեր ցաւին:

Մեր ազգը շատ ճգնաժամներէ յաջողած է ելլել ողջ և առողջ: Ես կը յուսամ որ այս ներքին ճգնաժամին ալ պիտի կարենայ յաղթել: Ամէն անոնք որ հայ ցեղին պատիւն ու ապագան ամէն բանէ վեր կը դասեն, պարտք ունին ընել ինչ որ կրնան՝ ծայրայեղ կրքերը հանդարտեցնելու և էական հարցերու մէջ այլ և այլ հակամարտ տարրերու միջև համերաշխութիւն մը գոյացնելու համար:

26 Յունուար, 1911 Ա. ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. — Վերջին պահուն, թերթը մամուլի տակ դրուելու րոպէին, Պոլսոյ թերթերէն կ'իմանամ թէ երկու ընդդիմամարտ կուսակցութեանց միջև համերաշխութիւն գոյացեր է, որով Ազգային ժողովը պիտի կարենայ վերջսկսիլ իր խանգարուած պաշտօնավարութիւնը և 3-4 ամսէ ի վեր Թուրքիոյ Հայութիւնը խեղդող ծանր մղձաւանջը պիտի սկսի տեղի տալ ազգային կեանքի կանոնաւոր մարդավարի բնաշրջութեան մը: Բաւ չեմ գտներ յայտնելու համար զգացած ուրախութիւնս: Լրագիրներուն մէջ՝ երկնքէն ոգիի մը կամ հրեշտակի մը Պոլիս եկած ըլլալուն խօսքը չկայ. բայց որովհետև այդ հրաշապատում՝ էակաները անտես են ընդհանրապէս, ապացուցուած չէ թէ 'դժոխային կացութեան մը այս յանկարծական բերկրառիթ բարեփոխումը յառաջ բերելու նպատակով չըլլան այդ աներևոյթ այցելուներէն մէկ քանին. առանց ատոր — ինչքան ալ յայտնի ըլլայ պատուական դերը զոր այս համերաշխութիւնը գոյացնելու համար կատարեր են քանի մը աղնիւ և ամէն շնորհակալութեան արժանի Հայ անձնաւորութիւններ — բաւական դժուար է բացատրել այն դիւթական արագութիւնը որով երեք-չորս ամսէ ի վեր ամենատարրական բաներու վրայ իրար հասնելու չուզող, թերթերու և միթիւնիկներու մէջ զիրար ամենէն ահաւոր նախախնայներով քարկոծող տարրեր մէկ ժողովով, երկու ժամուան մէջ, գամուռի դարձած, եղբայրաբար լուծած լմնցուցած ըլլան անհամաձայնութեան բոլոր կնճիռները: — Ար մտղթնք որ այդ բարերար ոգիները, այժմ որ իրենց գործը կատարեցին Պոլսոյ մէջ, թեւեթնին պարզեն ղէպ ի Էջմիածին...

Le Gérant : FRÉDÉRIC MACLER.  
Impr. CH. NERCÈS, 328, Rue St-Jacques — Paris.

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ ԱՇՈՒՂԸ

ԵՒ

ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ԻՆԿԱՐԻԶԸ

(26 նկարներով զարդարուած)

Գին 3 Ժրանգ

Այս հատորը հրատարակուեցաւ Տիգրան խան Բելլեկեանի աջակցութեամբ :

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՅՈՐ ԵԱՐՃԱՆԵԱՆ (ՍԻԱՄԱՆԹՕ)

Անբողջական գործը

Ա. Հասոր

ԴԻՅԱԶՆՕՐԷՆ, ՀՈԳԵԻԱՐՔԻ ԵՒ ՅՈՅՍԻ ԶԱՅԵՐ,  
ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ,  
ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱԻԵՐ

Շքեղ տպագրութեամբ հատոր մը, գինն է՝  
1 տոլար 50 սէնթ :

Դիմել journal Hairenik, 9 Knapp str.  
Boston, Mass. U. S. A.

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ

Բ.

Թրփահայ գրողներ

Կազմեցին Ղ. ԱՂԱՅԵԱՆ, ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ,  
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Գին երկու բուլլի

Դիմել Librairie Gouttemberg, Tiflis, Caucase

Petite Bibliothèque Arménienne

Publiée sous la direction de F. MACLER.

MINAS TCHÉRAZ

NOUVELLES ORIENTALES

Préface de F. Macler

գին, 2 Ժրանգ 50 սնթ.

դիմել Ernest Leroux, Editeur,

38, Rue Bonaparte — Paris,

Ա. ԶՕՊԱՆԵԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գին Ժրանգ

Les massacres d'Arménie,  
préface de G. Clémenceau. 1

L'Arménie, son histoire, sa littérature,  
son rôle en Orient; introduction  
d'Anatole France. 1

Zeitoun, depuis les origines jusqu'à  
l'insurrection de 1895, par Aghassi;  
traduction française; préface de Victor  
Bérard.

Նահապետ Բուչակի դիւանը, (քննական  
ուսումնասիրութեամբ մը հրատարակուած) 2

Poèmes arméniens anciens et  
modernes, traduction française,  
précédée d'une étude sur la poésie et  
l'art arméniens par Gabriel Mourey. 1

Chants populaires arméniens,  
traduction française avec une introduc-  
tion et des notes; préface de Paul  
Adam. (պատկուած՝ Յրանսական Ակա-  
դեմիայէն) : 3,50

Մկրտիչ Պեփրաբաբեանի փերուած-  
ներն ու նաւերը, (ճանօթագրութենէրով  
հրատարակուած) : 2

Les Trouvères arméniens, tra-  
duction française, avec une introduc-  
tion et des notes. 3,50

Մկրտիչ Պեփրաբաբեանի կնքն ու  
գործը, քննական ուսումնասիրութիւն  
Գին 5


Փերուածներ. 3



ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Պոսթոն	Պարոն	Հ. Երուանդ
Նիւ-Եոբ	»	Խմբագրութիւն «Արմէնիա»ի
Սենթրըլ Ֆոլս	»	Սահակ Ծառուկեան
Փրովիսենս	»	Գարեգին Տիւլկէրեան
Ադէֆաւնդրիա	»	Յովհաննէս Գարանձեան
Գանիբէ	»	Արմենակ Ատիլեան
Կ. Պոլիս	»	Պալենց գրատուն
»	»	Արծիւ գրատուն
Ադրիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիթ	»	Դաւիթ Պօղոսեան
Իզմիր	»	Սեդրաք Թօքաձեան
Պարսիզակ	»	Մելքոն Յովսէփեան
Թոֆաթ	»	Ա. Ետիս Հայկազեան
Նիսաւր	»	Պետրոս Տրապիզոնլեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիփանեան, «Արարատեան» գրատուն
Ամասիա	»	Սենեքերիմ Քէպապճեան
Մարզուան	»	Յակոբ Պապասինեան
Կեսարիա	»	Գէորգ Ճամճեան
Բաբերդ	»	Զարէոս Այվազեան
Կարին	»	Գառնիկ Լուսպարոնեան
Երզնկա	»	Սարգիս Ազնաւուրեան
Շապին-Գարահիսար	»	Վահան Հիւսիսեան
Խարբերդ	»	Գարեգին Կոստանեան
Կիւրին	»	Սարգիս Չիլինկիրեան
Տօրթ-Եօլ	»	Միհրան Տէր-Մելքոնեան
Հալիպ	»	Վահան Պասթաճեան
Մուշ	»	Համազասպ Տէր-Յովհաննէսեան
Վան	»	Տիգրան Չիթուհի
Սեբասիա	»	Վահան Մոսկոֆեան
Ռուսնուզ	»	Գառնիկ Մաղմանեան
Փիլիպէ	»	Թագլուր Հինգլեան

„ԱՆԱՀԻՏ“Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



ԱՆԱՀԻՏԵ կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :

Բաժանորդագրին է սարեկան՝ 10 Ֆրանկ (Ֆրանսա), 12 Ֆրանկ (օտար երկիրներ),

2 ռոպլա (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա):

Վեցամսեայ՝ 5 Ֆրանկ (Ֆրանսա), 6 Ֆրանկ (օտար երկիրներ), 1 ռոպլա (Ամերիկա),

3 ռուպլի (Ռուսիա):

Յօդուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեալ հասցէին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère, Paris.